


12342

891.71
4-59



891. 71-3
ՀՅ-59

30 OCT 2006

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ն 10

Ա Ն Ե Վ Ե Ր Ո Վ

ՄԻՀԱՅ ԱՌԱՋՈՒՆԻ

Թագմ. ԴԵՐ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԴՐԱՄ ԽՈՎՀԱՆՆԻ

ՑԵՐԵՎԱՆ—1926

30 OCT 2006

ՊԵՂԱԾՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ № 10

19 NOV 2006

891.71

4-59

մը

Ա. ՆԵԳԵՐՈՎ

ՄԻՃԿԱ ԴՈԴՈՆՈՎ

1001
5428

Թագավորական Գրադարան

353

ՊԵՂԱԾՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1926.

11.07.2013

12342

Հանձնարարվում ե
Լուսժողովումատին կից զործող
Մանկական Գեղարվեստական
Դրականուրյան Հանձնաժողովի կողմից.



1

Պապիկը մեռավ, տատիկը մեռավ, հետո
յել հայրը մեռավ. Մնաց Միշկան, մայրը, մեկ
ել յերկու պստիկ յեղբայրները։ Փոքրը չորս
տարեկան ե, միջնակը՝ ութը ինքը՝ Միշկան՝
տասներկու։ Բոլորը մանր մժեղ, բանի անպետք։
Մեկը հենց մի գլուխ շիլա յե ուզում, մյուսը
գանակով քամու ջաղաց ե կտրում, վոր չմուշկ
շինի խաղա։ Մայրը սովից տկարանում ե։ Գե-
տըն ե գնում, թե՛ ջուր բերի, հազիվ ե վերա-
դառնում տուն։ Նստում տանը, գլխին վայ ե
տալիս, բայց սովու իսկի չի մեղքանում նրան։
Մին ել տեսար՝ գյուղացու մեկին գերեզմանա-
տուն տարան, յերբեմն ել յերկսին միանգամից։
Միխայիլ քեռին մեռավ, Մարինա մորաքույրն
ել մեռավ։ Ամեն տուն մեռելի պատրաստու-
թյուն ե տեսնում։ Զի ունեյին, կով ունեյին—

Հ 355

Գրառեպկար Հ 362 ր.

Տիրաժ 5000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում.

կերան դրանց. հիմի յել շներին ու կատուներին
են բռնում, վոր ուժեն:

Միշկան նստեց, միտք արավ լնտանիքը՝
մեծ, աշխատողները՝ պստիկ: Ելի թե մի բան գա,
նրա ձեռքից կգա: Ասենք հայրը մեռնելիս այդ-
պես ել ասաց.

— Միշա, դու կլինես տան մեծը:

Միշկան դուրս յեկավ փողոց և տեսավ, վոր
գյուղացիք Տաշքենդի վրա յեն խոսք բաց արել:
Ասում են՝ հացն այնտեղ շատ եժան ե, մենակ
շատ դժվար ե այնտեղ համելլ: Մինչև այնտեղ
յերկու հազար վերսոտ, այնտեղից ել յերկու հա-
զար վերսոտ: Անփող չի կարելի. տումսի փող պի-
տի տաս, անցաթղթի պիտի տաս:

Միշկան յերկար ականջ դրեց ու վերջը հար-
ցըրեց.

— Իսկ փոքրները կարող են գնալ այնտեղ:

— Հը, շըլնի՞ ուղում ես գնաս:

— Ի՞նչ կըլնի վոր: Մի արանքում կխցկվեմ,
ինձ չեն տեսնի:

Գյուղացիք ծիծաղում են:

— Զե, Միշկա, դու տանը պիտի մնաս: Եդ
քո բանը չե: Մի հինգ տարի յել հասակ առ, են
ժամանակ կընաս:

Բայց Միշկան գյուղացիների խոսքը բանի

տեղ չի դնում: Տեսնում ե, վոր Տաշքենդը հացի
քաղաք ե—վոչ մի բանից չի վախենում: Հենց
վոր միքից սիրան ան ե ընկնում, իրան սիրո ե
տալիս.

— Արի կըլնի՝ փորձեմ. աղջիկ հո չեմ: Հաց
չեն տա՝ մի գործի կմտնեմ: Վող ամառը հորս
տեղ գութան եմ վարել, կարողանում եմ ձի
լծել: Եդ իմ տարիքն ե փոքր: Թե չե՝ գործի-
բանի մեջ մեծ մարդն ել ինձ չի հասնի:

Այսպես մի լավ միտք արավ Միշկան: Մըտ-
քից իսկի չի հեռանում մի բան, վոր Տաշքենդը
հացի քաղաք ե: Սկսում ե իրան-իրան, աչքի
չափով ցցել, հաշվել. յերկու հազար վերսոտ-իս-
կի յել հեռու չե: Հա, թե վոտով գնաս՝ հեռու յե:
Բայց թե մաշինան նստես՝ յերեք որում կթոշես-
կինանես: Անցաթուղթն ինչիս ե պետք: Կտես-
նեն, վոր պստիկ տղայե գնացողը՝ կասեն. ունկեր-
ներ, սրան ձեռ մի տաք, սա մեր սոված Միշ-
կան ե: Մրա ծանրությունն ինչ ե վոր. իր չուլ
ու փալասով կես փութ ել չի գա»:

Միշկան պատահեց իր ընկերին՝ Մերյոժկա
կարմուխինին, վորն իրենից մի տարով փոքր
եր, և ուրախացավ:

— Հայդե, գնանք յերկսով:

— Ո՞ւր:

— Տաշքենդ, հաց բերելու: Յերկսով ավելի
ուրախ կընի: Թե քեզ բան պատահի՝ յես կոգ-
նեմ: Թե ինձ կպատահի՝ դու կոգնես: Միւնույն
ե, մենք այստեղ չենք կերակրվի:

Սերյոժկան միանդամից չհավատաց:

— Բա վոր անձրեւ գամ:

— Ամռան անձրեւ տաք ե լինում:

— Բա վոր զինվորները դուրս անեն:

— Մենք սուսուփուս անց կկենանք նրանց
մոսով:

Սերյոժկան անվճռական ե, սիրտ չի անում:
Քիթը մին յերկու քչփորեց ու ասում ե.

— Զե, Միշկա, չենք համնի տեղ:

Միշկան յերդվեց.

— Ե՞ն աստվածը, կհասնենք, մինակ թե մի
վախիւ: Հիմի ամեն տեղ կարմիր-բանակայիններ
են. նրանք չեն վոնդի: Կիմանան, վոր մենք սո-
ված ենք՝ հաց ել կտան:

— Մենք փոքր ենք, կվախենք:

Միշկան սկսում ե ապացուցել, վոր իսկի
յել փոքր չեն, վնաս չունի, վոր Սերյոժկան ավե-
լի պստիկ ե. Միշկան ինքը հոգ կտանի, վոր յեր-
կաթուզու վրա տեղ գտնի, մարդկանց հարցու-
փորձ անի: Աղջիկ հո չեն: Բանները վատ
կդնա՝ կհամբերեն: Գնացքից կվանդեն՝ բան չկա,

յերկսով յերկյուղալի չե: Մինչև առավոտ մի-
քիչ վոտով կդնան: Հետո ելի, յերբ գնացքի պե-
տերն ուրիշ կողմ մտիկ կտան՝ կիցկվեն ներս:

— Բա յերբ կդառնանք տուն,—հարցը եց
Սերյոժկան:

— Չեռաց յետ կդառնանք: Մինչև Տաշքենդ
չորս որ, այստեղից ել յետ՝ ամենաշատը՝ չորս
որ: Մի քսան ֆունտ հաց ել վոր հավաքենք՝ հե-
րիք ե, վոր մի կերպ յոլա գնանք:

Սերյոժկայի աչքերն ուրախությունից պըս-
պըսացին:

— Յես մի փութ կհասցնեմ տեղ:

— Մի փութ հարկավոր չե: Ով վոր շատ ե
ունենում ձեռից առնում են: Ավելի լավ ե՝ ելի
յերկու անգամ գնանք՝ յերբ ճանապարհը կսո-
վորենք:

— Յեկ, Միշկա, ոչովի չասենք:

— Չասենք:

— Բայց իմաննեմ ես՝ յես ու դու. ել ուրիշ
ոչնիք: Կոսկան ու Վանկան ոձիքներիս կկպչեն,
բայց մկան ծակը հազար թումանով են առնում
վախից: Նրանց հետ կարաս տեղ հասնես:

— Իսկ դու չես վախում:

— Ինչի՞ց եմ վախում: Կես զիշերին գերեզ-
մանոց ել կերթամ:

— Տաշքենդ, հաց բերելու։ Յերկսով ավելի
ուրախ կընի։ Թե քեզ բան պատահի՝ յես կոգ-
նեմ։ Թե ինձ կպատահի՝ դու կոգնես։ Միւնույն
ե, մենք այստեղ չենք կերակրվի։

Սերյոժկան միանգամից չհավատաց։

— Բա վոր անձրեւ գա՞։

— Ամռան անձրեւ տաք ե լինում։

— Բա վոր զինվորները դուրս անեն։

— Մենք սուսուփուս անց կկենանք նրանց
մոտով։

Սերյոժկան անվճռական ե, սիրտ չի անում։
Քիթը մին յերկու քչփորեց ու ասում ե.

— Զե, Միշկա, չենք հասնի տեղ։

Միշկան յերդվեց։

— Ե՞ն աստվածը, կհասնենք, մենակ թե մի
վախի։ Հիմի ամեն տեղ կարմիր-բանակայիններ
են։ Նրանք չեն վոնդի։ Կիմանան, վոր մենք սո-
ված ենք՝ հաց ել կտան։

— Մենք փոքր ենք, կվախենք։

Միշկան սկսում ե ապացուցել, վոր իսկի
յել փոքր չեն։ Վնաս չունի, վոր Սերյոժկան ավե-
լի պստիկ ե. Միշկան ինքը հոգ կտանի, վոր յեր-
կաթուղու վրա տեղ գտնի, մարդկանց հարցու-
փորձ անի։ Աղջիկ հո չեն։ Բանները վատ
կդնա՝ կհամբերեն, գնացքից կվանդեն՝ բան չկա,

յերկսով յերկյուղալի չե։ Մինչև առավոտ մի-
քիչ վոտով կգնան։ Հետո ելի, յերբ զնացքի պե-
տերն ուրիշ կողմ մտիկ կտան՝ կխցկեն ներս։

— Բա յերբ կդառնանք տուն, — հարցը ց
Սերյոժկան։

— Զեռաց յետ կդառնանք։ Մինչև Տաշքենդ
չորս որ, այնտեղից ել յետ՝ ամենաշատը՝ չորս
որ։ Մի քսան ֆունտ հաց ել վոր հավաքենք՝ հե-
րիք ե, վոր մի կերպ յոլա գնանք։

Սերյոժկայի աչքերն ուրախությունից պըս-
պըղացին։

— Յես մի փութ կհասցնեմ տեղ։

— Մի փութ հարկավոր չե։ Ով վոր շատ ե
ունենում ձեռից առնում են։ Ավելի լավ ե՝ ելի
յերկու անգամ գնանք՝ յերբ ճանապարհը կսո-
վորենք։

— Յեկ, Միշկա, ոչովի չասենք։

— Չասենք։

— Բայց իմանհեմ ես՝ յես ու դու. ել ուրիշ
ոչնվ։ Կոսկան ու Վանկան ոձիքներիս կկպչեն,
բայց մկան ծակը հազար թումանով են առնում
վախից։ Նրանց հետ կարաս տեղ հասնես։

— Իսկ դու չես վախում։

— Ինչի՞ց եմ վախում։ Կես զիշերին զերեղ-
մանոց ել կերթամ։

Միշկայի մայրն անկողնում տնքում եր: Պստիկ Ֆեդկան փեշից քաշում, մատը բերանը դնում, հաց եր ուզում: Միջնակը՝ Յաշկան՝ փայտի հրացան եր շինում, վօր ծիտ վորսա ուտելու համար, այսպես եր մտածում:

«Յերեք հատը կսպանեմ՝ կկշտանամ: Միքիչ ել Ֆեդկային ու մայրիկին կտամ: Այ թե մի աղունակ կխփեմ»:

Միշկան ներս մտավ դատարկ ու սոված խրճիթը, գդակը քաշեց հոնքերին, նոթերը կլտեց: Չեռաց իսկական հասակավոր գյուղացի դառավ և վոտներն ել գեղացավարի չոեց:

— Մայրիկ, ինչու յես պառկել:

— Քեֆ չունեմ, վորդի:

— Բա վոր յես ուզում եմ Տաշքենդ գնում՝ հացի:

— Ի՞նչ Տաշքենդ:

— Եղակես մի քաղաք կա, եստեղից յերկու հազար վերստ, հայը ենտեղ խիստ եժան ե:

Միշկան խոսում եր հանգիստ, տանտիրոջ պես, վոնց վոր հասակավոր իսկական գյուղացի:

Մայրը զարմացած նրան նայեց:

— Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս, ի՞նչ ես ասում, չեմ հասկանում:

Միշկան սկսեց կարգով բացատրել: Այնտեղ շատ միրգ կա և հաց՝ վորքան կուզես: Միանգամից կարելի յե յերեսուն ֆունտ բերել: (Դիմամբ մի տասը ֆունտ ել ավել ասաց, վոր մայրն ավելի հավատա): Տեղով կարգով ամեն բան պատմեց, կասես գրքից եր խոսում: Ասաց՝ ինչ վոր գյուղացիներից եր լսել, ինչ վոր ինքն եր մտածել բոլորը միասմի բացատրեց: Տաշքենդ գնալը չորս որ կըաշի, այնտեղից յետ գալը շատ վոր քաշի՝ ելի չորս որ:

— Մայրիկ, իսկի մի վախենա:

— Բա վոր չդառնա:

— Կդառնամ:

— Տես, վորդի, դու ինձ են տեղը պիտի գցես, վոր գիշերները քունս կտրեմ. հենց քո դարգով պիտի լինեմ, Գյուղացիք քեզնից մեծ են, նրանք ել դեռ չեն գնում:

— Գյուղացիների բանն ավելի վատ ե, մայրիկ, Նրանք պետք ե յերկաթուղու տոմս ու անցաթուղթ ունենան: Բայց յես ու Սերյոժկան քթների տակին կպահվենք, չեն տեսնի: Մին ե, բացի ինձանից, տան հոգսը ոչով չի կարող քաշի: Ֆեդկային ու Յաշկային ուր կարող ես ուղարկես վոր: Բայց յես չեմ վախի:

— Դե, զգնւշ կաց, Միշկա: Ի սեր Քրիս-

տոսի, վագոնի կտուրը չբարձրանաս։ Աստված
չանի, գիշեր ժամանակ պոկ կզաս ու կլորչես։
Ավելի լավ ե՝ մեկի վոտներն ընկի, աղաչի,
վոր քեզ մի ապահով տեղ դնեն։ Ի՞նչ կլինի իմ
դրությունը, յեթե մենակ մնամ։

— Մի վախի, մայրիկ, վայր չեմ ընկնի։

Միշկան մտիկ տվեց իր տրեխներին, վորոնց
կրնկները մաշված եյին՝ ու նոթերը կիտեց։

— Վասն են, անտերները։

Բայց հենց իսկույն հանգստացավ։

— Հիմի ցուրտ չե, բռիկ ել կարելի յե։

Ծալովի դանակն աղյուսի վրա սրեց, բզով
կոթը ծակեց, կախեց կաշվե գոտուց, վոր չկոր-
չի։ Մի փալասի մեջ աղ ածեց, պինդ հանգուս-
տեց, վոր չթափվի, կանեփի թոկ հյուսեց, վոր կա-
րող եր հարկավոր դալ. Թվ ե իմանում՝ ճամպին
ինչ կարող ե պատահել։ Հանգուցյալ հայրը միշտ
այդպես եր անում, վոր գնում եր շուկա՝ հետը մի
ուրիշ սոնի, ակ, լծափայտ եր վերցնում։ Ակը¹
Միշկային պետք չի, բայց թոկը կհարկավորվի։

Մայրը հանեց մի փութ տանող ջվալ, յեր-
կու կողմից կարկատեց։

— Մինը հերիք ե, Միշա։

— Յերկոնւսը տուր, յերկսից չի թափվի։ Կա-
րելի յե՝ տեսակ-տեսակ հացի պատառներ կտան։

Մայրը հավատաց։

— Դրուստ ե, Միշա, ինչ վոր կպատահի՝
ամեն բան վերցրու։ Կարելի յե մի մասն ել
հացահատիկ կլինի՝ բեր, կցանենք։

Յաշկան թողեց փայտի հրացան շինելը և
զարմանքով մտիկ տվեց յեղբորը։

— Միշկ։

— Հմ։

— Սերյոժկան ել ե գալիս հետդ։

Միշկան չպատասխանեց։ Դուրս յեկավ տա-
նից, չորս կողմ մտիկ տվեց։

Այ քեզ սով։

Ահա վեր ե ընկած ակը, ահա լծաղեղը,
բայց մոտը վոչ ձի կա, վոչ կով։ Առաջ հավերը
կչկչում եյին, աքաղաղը զիլ կանչում. հիմի գե-
րաններ են միայն ցցված, մեկ ել խարխուլ
կտուրը։ Բայց վոչինչ։ Թե մի կհաջողվի Տաշքենդ
գնալ-բանը կդրստվի։ Ամենազլիսավորը՝ չպիտի
վախենալ։ Ուրիշները գնում են, Միշկան ել
կփորձի։ Նրա տարիքն են փոքր, թե չե գործի-
րանի մեջ մեծը նրան չի հասնի։

3

Գյուղացիք դարձյալ փողոցում սկսեցին խո-
սել Տաշքենդի մասին։ Ակսեցին յերեակայու-
թյուններին զոռ տալ չտեսած բաների մասին,

ականջ եյին դնում խաղողի այզիների մասին
պատմածները, իրար ձեռ եյին առնում՝ խոսե-
լով յերկու տեսակ ցորենի մասին—ջրվող արտի
և անջրդի արտի ցորենի: Գները թանգ չեն: Կա-
տարյալ դրախտ ե: Բայց այնտեղ ընկնելը զրժ-
վար ե. տոմս ե պետք, անցաթուղթ ե պետք:
Միշկան չեր վախենում:

Կարծես հեքիաթի մեջ լիներ, և առջեց կան-
դնած եր Տաշքենդը, հացի քաղաքը Խաղողի
այզիները՝ հրես, եսքան: Հանաքով կարելի յե
զրպանը ծիրանի չրով տողել: Յեթե գաղտագողի
անես, ոչով չի իմանա:

Գյուղացիք այն ել եյին ասում, վոր այնա-
տեղի ողը շատ շոգ ե, մարդ կիսեղովի—բայց
Միշկան դրանից ել չեր վախում: Անշուշտ այն-
տեղ գետեր կան, ինչպես մեզանում: Իսկ յերբ
գետեր կան՝ կարելի յե լողանալ:

Յերբ Սերյոժան հիշեցը եց կիրզիզների մա-
սին, վորոնց միջով պիտի անցնեյին՝ *Միշկան*
այստեղ ել չվախեցավ:

— Յեթե կիրզիզները մարդ են՝ ել ի՞նչ
վախելու բան կա:

— Բա վոր մարդ չինեն:

— Ենտեղ կտեսնենք: Հիմի հաղար տեսակ
բան կիսուն:

4

Դաշտերում լոսւթյուն եր տիրում: Կա-
պույտ յերկնքում յերգում եյին արտուտները:
Ավելի ներքեում հեռազրայուների վրա արժ-
ժում եր յերկաթալարը, և սյուները շարան շար-
քով գնում: Կորչում եյին: Սյուների յետեր կա-
յարան ե: Կայարանում՝ գնացքը: *Միշկան յերկու*
անգամ տեսել ե գնացք, յերբ հոր հետ Սամարա յե
գնացել: Հետաքրքիր բան ե: *Մի հիսուն սաժե-*
նաշափ բան ե, սողում ե, խողովակից ծուխ ե
բարձրանում, վոնց վոր թե վառարան վառվի,
և շվցը սուլում ե:

Գնում եր *Միշկան* հոր պիջակը հագին,
զինվորի փոկը գոտի արած կապած, զավազանը
լայն-լայն շարժելով: *Մի* փութ բան առնող
տոպրակն ել ուսին: Նրա մեջ դրած ե մոր կար-
միր կտորով կարած տոպրակը: Կարմիր տոպրա-
կի մեջ կա թիթեղի մի գավաթ, փալասում
փաթաթած աղ, խոտից պատրաստած հացի մի
կտոր և տատի հին յուրկան, վորը պետք ե
քաղաքացիներին ծախի:

Սերյոժան բորիկ բայլում եր ձախ կողմից:
Մեծ գյուղական տրեխները և կնկա յերկար գուլ-
պաներն ուսից բաշ եյին ընկել: Տրեխներին կա-
պել եր յերկու տոպրակ՝ խողովակի պես վոլորած:

Գնում եյին և մեկ-մեկու խոսք եյին տալիս
իրար չթողնել։ Թե մինը կհիվանդանա՝ մյու-
սը պետք ե նայիր Յեզ ում առաջ կտան մի
բան՝ պետք ե կես անի։

Յերբ առաջին կայարանը յերնաց՝ Սերյոժ-
կան ասաց.

— Նայից, Միշկա, յես տեսնում եմ ծուխը,
Դա մեր յերկաթուղին չե։

Միշկան ձեռքը բռնեց աչքերին։

— Հիմի վողջ յերկաթուղին մերն եւ Վորին
վոր ամենից առաջ համենք, նրանով ել կդնանք։

— Քանի հատ են։

— Քսան հատ։

— Դու առջեից կդնաս։

— Ընդ։

Սերյոժկան ժպտաց։

— Ինձ համար մին եւ, յես չեմ վախում։ Այս-
քան վերատ տանից գալիս ենք, բայց վոաներս
դեռ չեն հոգնել։ Արի սաժեն չափենք։

— Իմ քայլերս քոնից մեծ են։

— Յես ել մեծ-մեծ քայլ կփոխեմ։

Միշկան խորհուրդ տվեց։

— Հարկավոր չե շտապել—ա վ ելի 2 առ
կհոգնենք։

Բլրակի վրա նստեցին հանգստանալրւ։ Հա-

նեցին փալասներում փաթաթած աղը, փոեցին
խոտի վրա։ Սերյոժկան ասաց.

— Իմ աղը քոնից շատ եւ։

— Իսկ հաց ունեա։

— Մայրիկս չորս հատ կարտոֆիլ դըեց։

— Կարտոֆիլով չես կշտանա. հաց ե պետք։

— Վրտեղից ճարեմ։

Միշկան նոթերը կիտեց։

Նրա տոպրակում մի կտոր խոտի հաց կար։
Լավ կլիներ, յեթե Սերյոժկայի տոպրակում ել
մի կտոր խոտի հաց լիներ։ Այն ժամանակ յեր-
կըսի ունեցածը հավասար կլիներ. իսկ հիմի
ձեռնտու չե։ Մի յերեք անգամ կկծեն՝ կեսը
կմնա։

— Խնչու հետդ միքիչ հաց չվերցրի՛։

Սերյոժկան փորի վրա պառկած խոտ եր-
ծծում։ Նրա աչքերն սկսեցին տխրել, վերի շըր-
թունքը պոռնագ արեց։ Մտիկ տվեց այն կող-
մը, վորտեղ մնաց իրենց զյուղը—մինչեւ անգամ
զանդակատունը չեր յերեռում։ Չորս կողմը գաշտ
եւ հեռագրասյուներ։ Թե ուղենաս ել յետ
դառնալ՝ մինչեւ իրիկուն տեղ չես համնի։

Մեղքացակ Միշկան ընկերոջ վրա։

Հիշեց իրենց խոստումը, վոր պետք ե իրար
ոգնեն, և մի կտոր հաց կտրեց։

— Առ: Կհասնենք կայարան՝ յետ կտաս: Դու կարծում ես, թե հացն եմ ինայում:

Սերյոժկան լուռ եր:

Մի փունտից ավելի կարող եր ուտել, իսկ Միշկան տվեց մի փոքրիկ պատառ: Կայարանում թե հաց չեն տա՝ սպասիր մինչև առավոտ: Առավոտը չեն տա՝ սպասիր մինչև իրիկուն: Մտիկ տվեց մի անգամ ել այն կողմը, ուր մնաց իրենց գյուղը և հառաչեց:

— Եդ ինչնու յես հառաչում:

— Հենց ենպես:

— Վախեցմբ:

— Հըմ, վախելի ինչից պիտի վախեմ:

— Մինույն ե, հիմի յել մինչև իրիկուն տուն չես կարող հասնել: Իրիկվան գայլեր կպատահեն:

Սերյոժկան մտիկ տվեց չորս կողմը, իսկ Միշկան նրան տանջում ե սարսափելի պատմություններով:

— Կհասնես Յեֆիմովի ձորը՝ ենուեղ գիշերը գյուղացիք են նստում: Մոտ ժամանակներս մի գյուղացուց ձին խլեցին, իրան ել քիչ մնաց սպանելին.

Սերյոժկան վեր կացավ, ծալապատիկ նըս. տեց և վախով մտիկ տվեց ընկերին:

— Դու քանի որ կարող ես առանց ուտելու մնալ, — հարցը եց Միշկան:

— Բա դժւ:

— Յերեք որ կարող եմ:

Սերյոժկան հառաչեց:

— Յես յերկու որից ավել չեմ դիմանա:

— Իսկ առանց ջրի լոնչքան կդիմանաս:

— Մի որ:

— Քիչ ե: Յես մի որ կդիմանամ, վրան մի կես որ ել:

ՏԾՂ
1002 | 5498

Յերբ հեռացան բլրակից՝ Սերյոժկան անըսպասելի կերպով ասաց.

— Յես ել մի որ կդիմանամ ու միքիչ ել ավելի...

5

Ահա և այդ չընաղ յերկաթուղին:

Ակների վրա խրճիթներ են զրած մի ամբողջ փողոցի նման, և ամեն մի խրճիթից ժողովուրդը դուրս ե մտիկ տալիս: Նեղվածք ե խրճիթներում, գյուղացիներն իրենց կնիկների հետ կտուրներն են բարձրանում, իրար ոգնում, նստեցնում են, տակից վեր են բոթում: Վերեկց ներքեւ տոպրակներ են թռչում, թեյամաններ, քաթանե պարկեր: Կտրանը զինվորը հրացանով ման ե գալիս, կնիկների ու գյուղացիների վրա գոռզոռում.

— Այստեղ չի կարելի:

Մի կտուրից քշում ե, նրանք մյուսի վրա
յեն բարձրանում: Դարձյալ վերևից ներքեւ տոպ-
րակներ են թոշում, դարձյալ զինվորը հրացանը
ձեռքին գոռում ե.

— Այստեղ չի կարելի:

Միշկան ել ուզեց բարձրանալ կտուրը,
ժողովրդին մոտիկ, բայց վոր չի կարելի՝ չի բար-
ձրանա, պետք ե կարգ իմանալ: Սերյոժկան բո-
լորովին բան չի հասկանում: Աչքերը չոել, չորս
կողմ ե մտիկ տալիս, տեղից պոկ չի գալիս:

— Ինչու յեն նրանց այնտեղից քշում:

— Այստեղ չի կարելի, արքունական ե:
Տեսնում ես՝ զինվորը հրացանով կանգնած:

Յերկու տոպրակ ձեռին մի գյուղացի յել ե
կանգնած, նա յել բոլորովին չի հասկանում:

Գդակը քաշեց ծոծրակի վրա, լավ միտք
արեց.

— Վճրտեղ նստենք:

Յերեք կտուրի վրա բարձրացավ՝ վոչ մի
տեղ չի կարելի: Վրա ընկավ դեպի ջրհան վա-
գոնը, հեռուն, գուցե այնտեղ կարելի լինի:
Միշկան ընկավ գյուղացու յետեից և շտապեց-
նում ե Սերյոժկային.

— Հայդե, շուտ արա, յետ մի մնա:

Իսկ Սերյոժկան բան չի կարողանում հաս-
կանալ:

Աջ կողմում չտեսած բաներ, ձախ՝ կող-
մում չտեսած բաներ: Նրանց մոտ, գյուղում,
սյուների վրա յերեքական յերկաթալար կա. այս-
տեղ ութական յերկաթալար և յերկու շարք: Ա-
պակի գնդիկներ են կախ արած, գուղուկներ
ածում: Յերկու գյուղացի անցկացան լապտեր-
ները ձեռներին: Ամեն տեղ յերկաթի շերտեր են
պտուտակներով ամրացրած: Սերյոժկան սայթա-
քեց մի շերտի վրա, իսկ դեմից անպատճան
խրճիթը շարժվում ե նրա վրա և ակները ճոճու-
ցնում:

— Այ տղա, կճխլի, հեռացի:

Այն գյուղացին, վոր յերկու տոպրակ ուներ,
մազլցում ե վագոնի կտուրի վրա, իսկ Միշկան
նրա յետեից կատվի պես բարձրանում ե վեր:

— Դու ուր ես գնում:

— Մենք Սերյոժկայի հետ Տաշքենդ ենք
գնում:

— Շնուտ արա, իջիր, սա Տաշքենդ չի գնում:

— Բա մուր ե գնում, քեոի:

— Սիրիր, Սիրիր, Ցած թոփիր:

Միշկայի սիրտը խփեց, մազերը վշաքաղ-
կեցին: Վճրտեղ ե Սիրիրը, Ի՞նչ Սիրիր: Ի՞նքը

Նստել ե կտրանը, Սերյոժկան ել ակի մոտից
վագում ե:

— Նստի, Սերյոժկա, նստի:

Սերյոժկան ուզեց ձեռը զցել վագոնի սան-
դուխին, բայց վագոնը գնաց.

— Վայ...

Վագում ե Սերյոժկան ակի մոտով, յետ չի
մնում: Շունչը կտրում ե, զլուխը տրոփում, աչ-
քերը մթնում:

— Զես հասնի:

Միշկայի սիրու խիստ ցավեց. մեղքանում
ե ընկերոջ վրա. կկորչի: Տուն գնալ ել կվախե-
նա, Յեթե գնացքը շարժվելիս թոշի՝ կջարդվի:
Վագոնը շատ արագ գնաց. կտուրն որորվում ե,
ակները չխչխկում:

Սերյոժկայի վոտներն իրար դիպան, զլխով
զարկվեց գետնին:

— Կորա, գնացի:

Միշկան մտիկ ե տալիս կայարանին, վայր
ընկած Աերյոժկային, հիշում ե խոստումը, վոր
իրարու չպետք ե թողնեն: Ի՞նչ արած: Ստիպ-
ված կլինի մյուս կայարանից յետ դառնալ, Բայց
վագոնը հանկարծ գանգաղեց, կանգնեց. անշուշտ
մի բան մոռացել ե: Ցնցվեց մի անգամ առաջ,
գնաց մի ուրիշ ճամպով: Մի անգամ ել ցնցվեց



առաջ, ելի գնաց մի ուրիշ ճամպով։ Մի հինգ
անգամ դարձավ այս ու այն կողմէ։ Դուրս յե-
կավ շիփ-շիտակ դաշտը կայարանի յետել և
կանգ առավ։ Մեքենան շունչն արձակեց և մի
կողմ հեռացավ նրանից։

Յերկու տոպրակով գյուղացին ուշունց ե
տալիս։

— Տեսար սատանի բանը։ Յես հլ ասի, թե
իսկական գնացք ե, Սիրիի կտանի։

Միշկան ուրախությունից չի իմանում ինչ
անի։

Վազեց կայարան, բայց Սերյոժկան չկար։
Վազեց այն տեղը, ուր Սերյոժկան ընկավ՝ այն-
աեղ ել չկար։ Ասում ես՝ այ այստեղ կինի, այ
այստեղ կինի։ Դես ընկավ, դեն ընկավ՝ հազիվ
գտավ ընկերոջը ոլաքպանի բուգկայի մոտ։ Սե-
րյոժկան գլուխը ծնկների մեջ առել՝ լաց և
լինում։

Այդ բանը Միշկային դուր չեկավ։

— Ինչու յես լաց լինում։

— Դու ինձ կորցրիր։

— Պինդ կրօնենք մեկ-մեկու, լավ հարցու-
փորձ կանենք, ճամպան կիմանանք, թե վորն ե
Տաշբենդ գնում, ել զուր տեղը չենք նստի։ Սպա-
սի մի վազեմ կայարան, ականջ դնեմ, տեսնեմ

ինչ են ասում գյուղացիք։ Վոչ մի տեղ մի գնա,
այստեղ յեղիր։

Զի կարելի հակառակել. Միշկան առաջնորդ եւ,
Սերյոժկան կծկվեց բուգկայի մոտ և աշ-
քերը փակեց։

— Այ հիմար, ինչու յեկա։

Հիմի ուզում ե ուտել, ուզում ե լաց լինել։
Կմոռանա նրան Միշկան, կնստի մենակ վազո՞ն
ու կզնա, իսկ ինքը տան ճամպան ել չի իմա-
նում։ Իմանա յել՝ անկարելի յե գնար, կհասնի
ձորը, այնտեղ ժուլիկներ են։ Մեծ գյուղացի-
ներին սպանում են, իսկ փոքրիկ տղային ինչ
և սպանելը՝ ձեռաց բանհոգի կինի։

Իսկ տանը յերեկ մտածում են՝ յերբ պիտի
գա Սերյոժկան։ Մայրը գնում ե սրանրա մոտ,
պատմում ե. «Մեր Սերյոժկան Տաշբենդ ե գնա-
ցել հաց բերելու»։ Տատիկը, ասենք, չի կարող
սպասել՝ կմեռնի. Լավ տատիկ ե, իրա որում
Սերյոժկային չի ծեծել։ Մայրն ել լավն ե։ Իսկ
գետը։ Ամբողջ ամառը կարելի յե լողանալ, յե-
թե սովը չինի։

Յերեկոն սողում ե կայարանի վրա, ծառե-
րի վրա սև թաշկինակ ե զցում։ Սյուների վրայի
գնդերը վառվեցին, բուգկայի մեջ սեղանի մոտ
մեկը թխթսկացնում ե.

— ԴոռՌԱ: ԴոռՌԱ:

Իսկ Միշկան չի գա: Կնատի մենակ ու կզնա:
Դարձյալ պատի յետե մեկը թխթխկացնում է:

— ԴոռՌԱ: ԴոռՌԱ:

Սերյոժկան ուղեց պատուհանից մտիկ տար,
իսկ այդ ժամանակ բուդկայի մոտով մի հրեշ
կրակե աչքերով փնչում, թնդում, անքում եւ
վերեկց կայծեր են թռչում: Հանկարծ վոր մին
չփնչացրեց հենց բուդկայի մոտ, կողքից ծուխ
դուրս յեկավ՝ ուղիղ Սերյոժկայի վրա: Սերյոժ-
կան փախավ բուդկայի մոտից և պարկն ու
տրեխները մոռացավ այնտեղ:

6

Միշկան միանգամից յերկու գործ արեց.
Տաշքենդի ճանապարհն իմացավ, մեկ ել հացի
կեղե խնդրեց մի ընկեր կարմիր-բանակայինից:
Ամեն բան ստիպված ե ինքը մտածել: Հաց չկա,
փող չկա, Սերյոժկան անփորձ է: Պետք ե նրան
միքիչ կերակրել, վոր ուժից չընկնի: Միշկան
հացի կեղեր կոխեց զրպանը. կծել կարելի՞յե
յերկու անգամ: Վերջը մտածեց.

— Վնաս չունի, մի պուճուր ել նրան կտամ:
Հետո կվերադանի:

Ուղում եր իսկույն ևեթ դեպի բուդկան
վազել, բայց պատուհանի հեռագրական գործիքը

աչքովն ընկափ: Հետաքրքիր եւ Նրա միջից սպի-
տակ ժապավեն ե դուրս գալիս, իսկ մի մորդ
մտառով թխթխկացնում է: Միշկան շատ մտիկ
տվեց և չի հիշում, թե ինչպես հացի կեղեր
բերանը դրեց: Հիշեց սոված Սերյոժկային, խիդ-
ճըն սկսեց տանջել:

— Ե, ինչու կերա:

Վազեց գեղի այն կողմը, ուր մնացել եր
Սերյոժկան, բայց Սերյոժկան չկար: Ահա և այն
բուդկան մի պատուհանով... կամ գուցե մյուսն
ե, սրա նմանը: Սա ինչ բան ե, Միքիչ մոլոր-
վեց: Ծովից ուրիշ կողմ—դուրս յեկավ դաշտը:
Դարմանի մի կույտ սպիտակին ե տալիս. լու-
սինը բարձրացել՝ բլրակի վրա, Միշկային ե
նայում: Մարդ չի յերկում, Մենակ կայարանի
յետեր մուրճով թխթխացնում են, մեկ ել ինչ-վոր
մեկը կամաց լաց ե լինում արխի մեջ: Մոտե-
մեկը կամաց լաց ե լինում արխի մեջ:

— Մատաղ լինեմ ձեզ, բալեքս, հիմի յես
ուր տանեմ:

Միշկան ել մտածեց:

— Իսկ յես ուր պիտի գնամ:

Վերադարձավ կայարան, կանչեց:
Շենում շունը հաջեց,
— Այ քեզ բան, հիմի վճրտեղ գտնեմ:
Թողնել հեռանալ ել չի կարելի. միասին
պայմանավորվել են, յերդվել:
— Հիմար, Մենակ կգնայիր՝ ավելի լավ
կլիներ:

Նստեց կայարանի դռների մոտ Միշկան ու
միտք արավ, նստեց, նստեց, աչքերն սկսեցին
փակվել, բաց արեց, նրանք ելի փակվեցին: Հի-
շեց Սերյոժկային, հառաչեց:

— Ուր պիտի կորչի: Առավոտ կգտնվի:
Միշկայի գլուխը ծնկներին ընկավ, մար-
մինը վերև լողաց: Լողում ե, կարծես թև առած
լինի, միշտ վեր, վեր ե բարձրանում:

Մայրը ներքեց կանչում ե.
— Միշա, վեր կընկնես, ուր ես բարձրա-
ցել:

Յաշկան ել, յեղբայրը, աղավնիների վրա յե
կրակում իր փայտե հրացանով: Մին վոր խփում
ե՝ աղավնին ընկնում ե: Ելի մի անգամ խփում
ե՝ դարձյալ մի աղավնի: Տասը հատ խփեց: Կախ
արեց թոկի վրա և տուր թե կտաս՝ աղավնինե-
րով տալիս ե Միշկայի գլխին:

Բարկացավ Միշկան, հենց այն ե՝ ուզում

եր Յաշկային խփել՝ մեկ ել ահա—առջել զին-
վորն ե կանգնել հրացանը ձեռին:

— Այստեղ չի կարելի քնել:
Մոտից մի շնիկ անց կացավ՝ ոդը հոտոտե-
լով: Մաիկ տվեց դռնից ու թաթերի վրա գնաց
հեռացավ: Մի գյուղացի դուրս յեկավ առանց
գդակի:

— Այ տղա, ինչի յես մըսում:
— Քունս շատ ե տանում, քեռի:
— Ուր ես գնում:
— Տաշքենդ եմ գնում Սերյոժկայի հետ,
նա յել կորել ե:

— Գնա յերրորդ կարգը, այնտեղ կընես:
Միշկան մտավ յերրորդ կարգը, իսկ յեր-
րորդ կարգում մի ժողովուրդ ե լցվել վոր՝ ասեղ
զցելու տեղ չկա, իրար վրա թափված պառկել
են: Վրաները մի գոլորշի յե կանգնած, վոր կարծես
բաղնիսում լինի, իսկ այդ գոլորշու մեջ լսվում
ե, թե ինչպես լաց են լինում, թքում, խնչում: Մի
ծերուկ մարդ խեցգետնի պես յետ-յետ ե գնում:
Նրան ուշունց են տալիս, բայց նա գնում ե:

— Վար ջնադամն ես գնում:
Միշկան վոտներով մեկի գլխին դիպավ ու
վախեցավ: Գլուխը բարձրացավ ու վճնց ե գո-
ռում.

- Ի՞նչ ես՝ ման գալիս՝ եստեղ:
- Սերյոժկային եմ փնտռում:
- Դրուստն են ե, վոր դու ժուլիկի մեկն

ես:

Մի ուրիշն ել գոռաց.

— Դուքս արեք դրան—բան կզողանա:

Միշկան սողաց մի կողմի վրա, բայց Սերյոժկան չկա: Մյուս կողմն անցավ—Սերյոժկան չկա: Կասես ջրի տակն անցավ: Չփնտռել ել չի կարելի. միասին պայմանավորվել են: Միշկան մտավ վերջին անկյունը, տեսավ վոր Սերյոժկան կուչե յեկել այստեղ ու քնել:

— Եյ, կորած, մոլորած:

Սերյոժկան աչքերը բաց արեց, չի հասկանում: Կարծես Միշկայի ձայնն ե, կարծես նրանը չե: Յերեսը կարծես Միշկայինն ե, բայց զլուխը կարծես Միշկայինը չե: Միշկան նորից ձեռքից քաշեց:

— Զարթիր, Զոռով եմ քեզ գտել: Ի՞նչու փախար այն տեղից:

— Վախեցա:

— Հա, վախեցար: Անտառում հո չեյիր: Ին ձեւ չսեցիր: Լավ եր, վոր փնտռելը չժողի: Կմնայիր մենակ—շատ ել բանի պետք չեյիր գա: Միթե կարելի յե այդպես անել: Հիմար: Պայ-

ման ենք զըել՝ միասին գնանք, պետք ե պայմանը պահել:

Սերյոժկան վիրավորանքից քիթը խպշտեց, բոռնցքով սըբեց աչքերը:

— Դե լավ, լավ, մի լա, չեմ չարանում: Մենակ մյուս անգամ ել չանես: Քիչ-միչ քնեցիր:

— Ուտել եմ ու գում:

Միշկան ել եր ուզում ուտել: Շըթունքները լիզեց ու միտք արավ:

— Սա իմ վզին պիտի նստի:

Ու բարձր ասաց.

— Ի՞նչ զարմանալի մարդ ես, Սերյոժկա, համբերել չես կարողանում: Վարտեղից ճարեւ հաց: Տաշքենդ կհամնենք՝ կկշտանանք: Քոնը քիչ կլինի՝ իմ բաժնից կտամ: Հո չեմ խնայում:

Բայց իր տոպրակում դրած խոտի հացի պատառը, վոր վերցը եր տանից, ուզում եր թագցնել: Խղճում ե ընկերին, իրան ել չի ուզում զըկել: Չե վոր Միշկան ամեն տեղ դիպչում ե, ամեն բան հոգում—նրան ավելի շատ ել սնունդ ե պետք:

Հիշեց պայմանը, վոր պիտի ամեն բան կիսեն, բարկությունը յեկավ:

Ալսը ի՞նչպես կապեց իր ձեռն ու վոտը—

լավ կլիներ՝ իսկի չպայմանավորվեր։ Հանեց
հացի պատառը, չուզելով կտրեց միքիչ։

— Առ, հետո կտաս։ Հիմի քեզ վրա յեր-
կու հացի պատառ ե մնում։ Բա ուր ե պարկդ
ու տըիխներդ։

— Ենտեղ մնաց։

— Հիմար, Հացը հիմի ինչի՞ մեջ պիտի դնես։
Սերյոժկան յերեսը շուռ տվեց։

— Յես Տաշքենդ չեմ գա։

— Ինչի՞։

— Շատ ե հեռու։

— Բա վճնց կգնաս տուն։

— Կամաց-կամաց կգնամ։

— Գնա, յեթե չես վախում։ Բայց յես այդ
տեսակ ընկերներ չեմ սիրում, վոր յետ են
կանգնում։ Մին գալիս են, մին չեն գալիս։
Յերկար ժամանակ լուռ եյին։

Մի մարդ քնի մեջ գոռաց։

— Գնաց, գնաց, մեր գնացը գնաց։

Կողքին մի գյուղացի մազերը գզզված խո-
շոր գլխով վեր կացավ և նույնպես ասաց։

— Բոլորս կմեռնենք։ Իմ վոտներն սկսել
են ուռչել։

Միշկայի առջև պատկերացավ չքնաղ Տաշ-
քենդ քաղաքը և յերկու տոպրակը հացի պա-.

տառներով։ Մի տոպրակում սպիտակ հացը,
մյուս տոպրակում սև հացը։ Յերրորդ տոպրա-
կում—ցորեն՝ տասը ֆունտ։ Դա սերմացուի հա-
մար ե։ Բայց ինչ ցորեն ե, մերի նման չե։
Խոշոր։ Միշկայի մայրը մտիկ ե տալիս և ու-
րախությունից լաց ե լինում։

— Զան, Միշա, ջան։ Ի՞նչ լավ տղա յես,
մեր գարզը քաշում ես։ Պառկի միքիչ, քնի։
Իսկ դուք, յերեխեք, աղմուկ մի անեք։

Միշկան բաց արեց աչքերը, բան չտեսավ
ու նորից փակեց։

Չես իմանում՝ կտրանը մարդ ե ման գա-
լիս, թե անձրեն ե ծեծում։ Լավ, ինչ ուզում ե
լինի, քունը տանում ե։ Վաղն առավոտ ավելի
լավ կիմացվի, թե ինչ բան ե։ Ահա վերը, հենց
առաստաղի տակին մի ծառ ե ճոճվում ճյուղե-
րը կախ։ Միշկայի գլուխը յետ շրջվեց, իսկ
ծառից մի խնձոր ե կախվել։ Խոշոր խնձորներ են,
յերկու բոռնցքի չափ։ Մեկն ընկավ ուղիղ Միշկա-
յի գլխին, բայց Միշկան մինչև անգամ ծուլանում
ե շուռ գալ, չի ուզում ձեռը մեկնել խնձորին։

— Լավ, թքած մեջը, քունս շատ ե տանում։
Սերյոժկայի բերանում անախորժ համ ե։

Այս պատառ հացը վոր կերավ, ավելի գըր-
գըրվեց ախորժակը։ Լնդերքը լիգեց-մաքրեց,

սկսեց յեղունկները կըծել։ Աղիքներն այնպէս
գալարվում են ու փորը վեց-վեց անում։ Մտիկ
տվեց վոր Միշկան քնած ե, սկսեց Միշկայի
պարկը տնտղել։

— Տեսնես թագցրած հաց չունի։
Զեռով շոշափեց գավաթը և մտածեց։
— Հաց ե։

Ուրախացավ և վախեցավ։
— Ե՞ն, Միշկան կզարթնի։ Կամ կծեծի,
կամ կասի. «Չես ամաչում» Քեզ հետո վերցրի՝
ասելով, թե լավ մարդ ես, իսկ դու ժուլիկ
դուրս յեկամ»։

Սերյոժկան բռնել ե Միշկայի գավաթը
տոպլրակի մեջ ու մտածում ե.

— Իսկ յեթե բոլորը չուտեմ։
— Միւնույն ե, հանցանիք ե։
— Դիտմամբ հո չեմ անում։ Ռւտել եմ ու-
դում։
— Վերցրու, յեթե չես վախում։

Սերյոժկայի գլուխը խառնվեց. համ ուզում
ե վերցնի, համ չե։ Յեզ ուտել ե ուզում և
ընկերից ամաչում ե։

Բայց Սերյոժկայի քունը գլուխն ընկավ, և
սկսեց որորել։

— Քնի։

Ցերկար ժամանակ Սերյոժկան դիմագրեց
խորը քնին։ Բաց եր անում աչքերը, գլուխը թափ
տալիս, ձեռքերով ջղաձգորեն շոշափում եր տոպ-
րակի միջի գավաթը։

— Ախր շատ եմ ուզում ուտել։
— Քնի, վաղը կկշանաս։
Խորը քնի մեջ Սերյոժկան գլուխը դրեց
Միշկայի վոտների մոտ, բերանը տաքացավ,
հանգստացավ։ Փաղաքիչ ձայնն ասում եր.
— Զպիտի գողանալ համբերի միքիչ...

7

Լուսաբացին յեկավ Տաշքենդ տանող գնացքը։
Միշկան քաշ ե տալիս վախեցած Սերյոժ-
կային, մտնում ե վագոնների տակը, գլուխը
խփում ե անիմսերին։
— Վռագի։

Վագոնների դռները բարձր են. Միշկան ու
Սերյոժկան վագոնների դռներին չեն կարողանա
հասնել, հնար չկա։ Բոնելու յել տեղ չկա։

— Քեռի ջան, նստացըն։
Միշկան յերկու անգամ վազեց զնացքի
շուրջը, վոչ վոք չի նստեցնում։ Ի՞նչ անեն։
Գյուղացիք, կնիկները, բոլորը հեծնում են բու-
ֆերների վրա։ Աղջիկները խցկում, վոտները
տղամարդու պես չում։ Ասել ե, այստեղ կա-

ըելի յե: Միշկան թռավ հեծավ բուֆերի վրա ու
ձախն ե տալիս.

— Բարձրացի այստեղ:

Բայց Սերյոժկան չի կարողանում:

— Արի նստացնեմ:

— Յես այստեղից վայր կընկնեմ:

Միշկան խիստ բարկացավ, մինչև անզամ
անտամները սեղմեց:

— Պինդ բռնի:

Սերյոժկան յերկու ձեռը զցեց յերկաթե
գլխարկին, աչքերը բան չեն տեսնում:

— Սա ինձ կճխլի:

Իսկ պատի յետև զինվորը հայհոյում ե գյու-
ղացիներին.

— Հեռացեք այստեղից:

Սերյոժկան դողաց, ել վոչ մեռած ե, վոչ
կենդանի:

— Վայ, վայ, վայ:

Միշկան շշնջում ե նրա ականջին.

— Սուս կաց, սուս կաց. նա մեզ չի տես-
նում: Մի հազա:

— Զեռներս չեն կարողանում բռնել:

— Թող, մի խոսա:

— Միշկա ջան, քեզ մատաղ, վայր եմ ընկ-
նում:



Միշկան այստեղ բոլորովին բարկացավ:
Թքեց բուֆերի տակն ու ասաց.
— Ընկիր, յես մենակ կդնամ...
Սերյոժկան լուեց, բայց զինվորը տեսավ նրա
գլուխը:
— Ես ով ե եստեղ:
Փորձանքի մեջ ընկան:
— Իջեք:
Ել այստեղ վոչինչ չի կարելի անել:
Կամ պիտի վեր գալ կամ լեզու ածել: Միշ-
կան սկսեց բանակցել:
— Ընկեր կարմիր-բանակային, այս տղան
մեր գյուղից ինձ հետ գնում ե:
— Իսկ դժւ ով ես:
— Յես լապատինցի յեմ, Բուզուլուկի գա-
վառից: Գնում եմ Տաշքենդ հաց բերելու:
— Դոկումենտներդ ցույց տուր:
— Պաշպատը:
— Յես քեզ ցույց կտամ պաշպորտ:
Մի ուրիշ զինվոր ել յետելից գոռում ե:
— Քաշ տուր որտա-չեկատ:
Միշկայի սիրտը դողաց:
— Խաթի մեջ ընկանք:
Սերյոժկան վոր՝ բանից գնացել եր: Զին-
վորը վոր ձեռը չզցեց նրա ձեռին՝ ուսը ցնցվեց:

— Փանքնտ լակոտներ: Հենց մենակ տրանս-
պորտն եք փշացնում...
Այ քեզ բան: Վեր կացան թե Տաշքենդ
գնան հացի՝ ընկան որտա-չեկատ: Որտա-չեկան
ել ուրիշ կերպ չի անի-կդատի: Միշկան մի
այդպիսի խոսք լսել եր գյուղացիներից-շատ ել
չեյին գովում: Կարողանար զինվորի բուռը մի
բան դնել—բայց փող չկա: Կեղծ լաց լինի-չի
հավատա: Գնացքն ել կդնա: Միշկայի գլխում
հազար տեսակ միտք ե անց կենում—վոչինչ չի
կարողանում հնարել: Տեսավ, վոր Սերյոժկան
հեկեկում ե՝ խորամանկության դիմեց:
— Դու ինչ նոթերդ կիտեցիր: Մեզ հո բանտ
չեն տանում: Կըննեն, կտեսնեն՝ վորտեղից ենք—
բաց կթողնեն:
Հետո զինվորին քաղցը կերպով ասաց.
— Մեզպեսների բանը ուրիշ կերպ չի լինի:
Մենք միշտ այնտեղերք ենք խցկում, ուր չի
կարելի...
Զինվորը լուռ ե:
— Ընկեր կարմիր-բանակային, չի՞ կարելի
վոր յերկուսիս բաց թողնես: Մենք սովածնե-
րից ենք:
— Քայլի, բայլի, վաղը կդնաս:
Միշկան մտածեց.

— Սրան վհնց խարեմ:
 Բոնեց նրա ձեռից ու փսփսում ե.
 — Ընկեր կարմիր-բանակային, գյուղացին
 վագոնը բարձրացավ:
 — Վժրտեղ:
 — Այ այստեղ, վագոնների յետել նստեց:
 Զինվորը մտիկ ետալիս, վոր վագոնի կտրան
 յերկու կնիկ են անկված սրանց բախտից:
 — Կանգնեցնք այստեղ:
 Միշկան ուրախ վրա բերեց.
 — Կանգնի, Սերյոժկա, կանգնի: Սպասենք
 ընկեր կարմիր-բանակայինին—նա ժամանակ չու-
 նի մեզանով զբաղվելու:
 Զինվորը վագեց վոր կնիկներին վանդի:
 Զորս կողմն ել ժողովուրդ-մարդ չկա: Լավ ժա-
 մանակն ե: Միշկան դրստեց ուսի տոպրակն ու
 փսփսում ե Սերյոժկայի ականջին.
 — Մի՛ գոռա, ձեռդ տուր:
 Ու պոկ ընկան կայարանի յետել, գոմի մո-
 տով, մթան մեջ դիպան աղբի կույտերին: Վա-
 խեցրին քնած շանը: Շունն ել հաջեց, վախե-
 ցրեց Սերյոժկային: Դուրս փախան ջրհանի մո-
 տից, մտան վագոնների տակ, հենց պոչի մոտ:
 Քիչ նստեցին, ապա սողացին առաջ: Միշկան
 հոտ քաշեց իր ձեռից ու թքեց:

— Անալիտանի մեկը եստեղ թափել ե:
 Դու չկեղառոտվեցի՞ր:
 — Կեղառուվեցի:
 — Ինձ մի բոնի:
 Դուրս մտիկ տվին—մարդ չի յերեսում: Սա
 ինչ բան ե: Ժողովրդի աղմուկը շատ հեռվից
 ե լսվում:
 — Սերյոժկա, չմտնենք եստեղ:
 Ընկան ուրիշ կողմ—այստեղ ել շողեմեքե-
 նան ե հենց քթի տակին:
 — Այ թե վորտեղ ե սա:
 Տեսնում են՝ գյուղացիք կնանոց հետ կամա-
 ցուկ անց են կենում:
 — Մի՛ գոռաք:
 Միշկան նստեցրեց ընկերին, մեջքից բոթեց:
 — Մտի:
 — Բա դժւ:
 — Մտի, մի խոսի հետա:
 Զի կարելի հակառակել. Միշկան առաջնորդ ե:
 Սերյոժկան ներս խցկվեց—չի իմանում թե
 վոտը վորտեղ դնի:
 Զեռ տվեց մի տեղի՝ տեսավ տաք ե:
 — Միշկա, եստեղ վառարան ե:
 — Սուս կաց:
 Հանկարծ վոր մին չի սուլում հենց գլխի

վրայից ու ցնցում, ներքելից վոտների տակից
ել՝ ֆ-ֆռւ, ֆ-ֆռւ, ֆ-ֆռւ—Սերյոժկայի մազերը
փշաքաղվում են:

— Ամմն:

Առաջ կամաց եյին գնում, հետո քանի գնաց՝
արագացավ: Մեկը հենց գլխի վրայից մոնչում
ե, դղրդում, ցնցում, և կայծերը հենց մի գլուխ
թափում են վերեից: Քամին ել սի կողմից ե
սուլում մարդու յերեսին, գլուխը թոցնում: Վահ,
թե մեքենան շուռ գա՝ ջարդուփշուր կինեն,
մարդ չի մնա կենդանի:

Սերյոժկան միքիչ առջել նայեց և ահից
յետ ընկավ. դիմացից մի հրեշ ե դալիս, վոր
հենց հիմի տակով կանի:

Բայց հրեշը մեքենայի կողքից՝

— Ժը՛ժժ...

Զե, տակով չարավ:

8

Յերկար ժամանակ գնացին:

Յեվ վոչ մի կերպ չես կարող իմանալ՝ յեր-
կիրն ե վազում թե մեքենան: Նաև չես կարող
իմանալ՝ առաջ ե վազում թե յետ: Ամբողջ յեր-
կիրը շուռ ե գալիս միենույն տեղում, իսկ մե-
քենան բոլոր ժողովրդի հետ միասին ողի միջով
ոլանում ե: Զորակների վրայի կամուրջներից

անցնելիս անիմսերը սարսափելի աղմկում եյին, և
ձորակներն ել մի վայրկյան յերեսում եյին իրենց
լայն բացած սև բերաններով:

Զառիվերներում մեքենան քայլը դանդաղե-
ցնում եր, չեռւմ եր, վիճում, կանգ առնում:

Գյուղացիք, կնանիք վայր եյին թռչում
վագոններից ու տաք պայծառ առավոտյան ժա-
մին կիսաբոլոր «դուրս եյին գնում» գնացքից
վոչ հեռու:

Սերյոժկան մտածեց.

— Յերևում ե վոր եատեղ կարելի յե:

Նա յել ուզեց «դուրս գնալ», բայց վախում
եր վայր թռչել, և վոր յետ չմնա՝ արտասուքով
մի կերպ դիմանում եր:

— Միշկա, յեկ ինձ հետ:

— Յես չեմ ուզում:

— Յես շատ եմ ուզում:

— Դե շնուտ, թռի:

Սերյոժկան հենց այն ե՝ ուզում եր թռու-
չել՝ ժողովուրդը գոռաց.

— Նստի, նստի, գնաց:

Մեքենան վիճաց, գուղոկը մոնչաց. ճամպա
ընկան:

Սերյոժկան լաց յեղավ:

— «Դուրս գնալ» եմ ուզում:

— Միքիչ համբերի: Մի լա:
 Մի ըռպէ անց Սերյոժկան ջղաձգորեն ձե-
 ռը զցեց շալվարին:
 — Չեմ կարող պահել:
 — Սպասի քիչ, սպասի: Շուտով կայարան
 կհասնենք:
 Միշկան չեր ուզում ընկերոջ տեղակ ամա-
 չել: Բայց Սերյոժկայի աչքերը վախեցած դուրս
 պլծան, յերեսը սփրթնեց:
 — Դժու ինչ ես անում:
 — Թափկեց:
 — Սնւս կաց, բան մի ասի: Նստի այ
 եստեղ:
 Սերյոժկան նստեց մի կնկա մոտ, սա յել
 ասում ե.
 — Ես վորտեղից ե հոտը գալիս:
 Գյուղացին ել չորս կողմն ե մտիկ տալիս:
 — Մեկը քիչ բաց թողեց:
 — Ի՞նչ քիչ, հոտեց:
 Սերյոժկայի փորը թեթևացավ: Նստել եռւ
 ժաժ չի գալիս:
 Միշկան բոթում ե կողքը:
 — Սնւս կաց:
 Յերբ հասան կայարան, վագոնների կուտակ-
 ված տեղը՝ վագոնների պատշգամբների վրա

դըժվըժացին գլուխներ, ձեռներ, վոտքեր, ձիեր,
 սայլեր: Մեքենան կանգնեց կայարանից հեռու:
 Գյուղացիք ու կնանիք հենց այստեղ ևեթ ցած
 թռան, իջան նաև Միշկան ու Սերյոժկան: Միշ-
 կան միքիչ կաղում եր ձախ վոտի վրա, իսկ
 Սերյոժկան բոլորովին մոռացել եր գետնի վրա
 ման գալը: Գլուխը պատվում եր, վոտները սայ-
 թաքում, և դարձյալ, ինչպես գնացքի մեջ՝ վա-
 գոնները աչքի առաջին լողում եյին, յերկինքը
 շուռ եր գալիս: Միշկան նրան քաշ եր տալիս
 եր յետեից:

— Հայրեն, հայրեն:
 — Ո՞ւր:
 — Այստեղ չի կարելի, կտեսնեն:

Վտանգավոր տեղից հեռացան, գնացին մի
 բաց դատարկ տեղ բարձր ցանկապատի յետելը:
 Սերյոժկան խոտի մեջ պտուտակի գլուխ գտավ,
 շատ ուրախացավ և վերցրեց: Զեռաց տան մե-
 ծի պես մտածեց. «տանը պետք կգա»: Բայց
 Միշկան ասաց.

— Եղ ի՞նչ զրիք գրպանդ:
 — Պտուտակի գլուխ:
 — Դեն զցի:
 — Ի՞նչի՞:
 — Կլուղարկեն...

Սերյոժկան նոթերը կիտեց։ Ափսոսում ե
պտուտակի գլուխը դեն զցել և Միշկայից նե-
ղանում ե։ Սա ինչ ամեն տեղ գլխիս իշխանու-
թյուն ե բանեցնում։ Արի կլինի՝ իսկի յել սրան
չլսեմ։ Միշկայի բոլոր վիրավորանքները միտը
բերեց Սերյոժկան ու մինչեւ անգամ քիթը
խտուտ յեկավ։ Սեղմեց ձեռքի մեջ պտուտակի
գլուխը և մտածում ե.

— Ապա թող խփի։

Միշկան ավելի շատ բարկացավ։

— Դեն զցի։

— Դու ինչու յես խնայում։

Միշկան չեր խնայում։ Այլ ուղղակի բար-
կությունը գալիս եր, վոր Սերյոժկան այդպիսի
պտուտակի գլուխ գտավ, իսկ ինքը, Միշկան՝
չգտավ վորովհետեւ նա ամրող ժամանակ հացի
վրա յեր մտածում և աչքերով վոտների տակ
ման չեր գալիս։

— Մենք վճնց պայման դրինք։

— Վճնց։

Վոր ամեն բան պիտի կիսենք։

— Եդ մենք հացի համար եյինք պսում։

Միշկան պառկեց մեջքի վրա, յերկար ժա-
մանակ մտիկ եր տալիս կապույտ, գանգրահեր
ամպին, վոր լողում եր ոտար, հեռավոր յերկըն-
քով։ Աղիքներն սկսեցին ասեղի պես ծակծկել,

թուքը լցվեց բերանը, շրթունքները կպցնում եր
իրար։ Թքեց, Գլուխը սեղմեց յերկու ձեռքով և
սկսեց արեխները հագնել։ Ցրված եր հագնում։
Մտիկ ավեց արեխի կապիչներին, մաշված
կրունկներին ու դանդաղ թափ տվեց գուլպաների
փոշին։ Գողառուկ մտիկ տվեց Սերյոժկայի գըր-
պանը, վորտեղ դրած եր գայթակղիչ պտու-
տակի գլուխը, Գլուխը քորեց։ Բախտը չուզողին
ե տված։ Ինքը դես-դեն ե ընկնում, վազում,
վագոն ե նստեցնում, բայց արի տես վոր
պտուտակի գլուխն ուրիշն ե գտնում։ Միշկան
գուլպան խփեց աղյուսին ու ասաց.

— Լավ, պահի քո պտուտակի գլուխը, ինձ
պետք չեմ։

Սերյոժկայի շրթունքները դողացին և աչ-
քերը պճառացին։

Պտուտակի գլուխը քրտնեց բոռնցքի մեջ
և կարծես աճեց մեծացավ կոշտացած բռան մեջ։
Կոփկ կլինի, յեթե Միշկան փորձի ուժով խլել
ձեռից։ Ի՞նչ ե հրամայող դառել իր գլխին—
ամեն անգամ՝ մի բան չի կարելի անել։

Միշկան տակից մտիկ տվեց։

— Արի ու եսպես ընկերների հետ ճամպա
գնա, Յերբ հարկավոր ե իմ հացը տրաքվել՝
առաջ ես ընկնում, իսկ պտուտակի գլուխը վոր

ձեռդ ընկավ՝ իսկի տերը չես։ Ո՞վ քեզ պլրծացրեց որտաւչեկայից, ելի կընկնես խաթի մեջ, յեթե յես չպաշտպանեմ։ Սրանից հետո քեզ հաց ել չեմ տա ու առանց քեզ ել կդնամ։ Մնա եստեղ քո պտուտակի գլխի հետ։

Սերյոժկայի շրթունքները ցնցվեցին, և վիրավորանքից աչքերը մթնեցին։ Բուռնցը թեթև բաց թողեց մի ըոպե ու ապա նորից սեղմեց։ Պտուտակի գլուխը չե վոր խնայում ե, ու բարկությունը զրանից չե։ Բարկանում ե, թե ինչույն Միշկան այդպես։ Ինչու ամեն անգամ մի վորեւ բան չի կարելի անել։

Գնացին։

Սերյոժկան ուզեց նրա կշտով գնալ, Միշկան յետ հըեց։

— Են կողմ գնա, ինձ մի մոտենա։

46 Յ 33 Սերյոժկան քիթը խպշաեց և գնաց յետելից։ Մաիկ ավեց պտուտակի գլխին, վոր բուռնցը ի մեջ եր, սրբեց քսելով ծնկան։ Ափսոսը դալիս ե։ Բայց չտալ ել չի կարելի։ Այ, Միշկան իրան բերեց ոտար տեղեր։ Իմի կզցի ճամպին կիրգիզների մեջ ու ինքը կդնա։

Տիրեց։

Լիզեց պտուտակի գլուխը յերկու անգամ ու անսպասելի կերպով ասաց։

— Միշկան, արի վիճակ գցենք։
— Ինձ պետքը չի։
— Դու կարծում ես, թե խնայնում եմ։
Միշկան թեթևացած շունչ քաշեց։
— Հասկացար, սատանա։ Միհնույն ե, առանց ինձ տեղ չես կարող գնալ։

Վճռեցին Միշկայի գդակի մեջ վիճակ գցեն։
մեծ ձող և փոքր ձող։ Սերյոժկան հանկարծ վրա ընկավ։

— Կխաբես ինձ, յեկ ուրիշ աեսակ անենք։
— Յեկ։

Միշկան մի քարի կտոր վերցրեց և պայման դրեց։

— Յես յերկու ձեռս կսեղմեմ։ Թե քարը բոնած բուռս բաց անես, պտուտակի գլուխը քոնն ե։ Թե քարը չեղած բուռս բաց անես, պտուտակի գլուխը իմն ե։

Սերյոժկան յերկար միտք արեց թե վնրը վերցնի։ Աչքերը կկոցցեց, շուռ յեկավ, մինչև անդամ կամացուկ աղոթեց։

— Աստված տա՛ ինձ ընկնի։
— Դե շնուտ արա, վերցրու։
— Զախն ե։

Միշկան շրթունքները ճպացրեց։
— Դու միքիչ ցանցառ ես։ Յես միշտ աջ ձեռումն եմ պահում...»

Սերյոժկան հանեց գրպանում պահած պտուտակի գլուխը և ավելի պահանջ զգաց ուտելու։ Քանի պտուտակի գլուխը գրպանումն եր՝ ավելի կուշտ եր. բայց հիմի փորը դատարկվեց, և բերանումն ել վատ և ինչ-վոր։

Միշկան պարծեցավ։

— Ի՞նչ բախտավոր եմ. Տուն վոր հասնեմ ես պտուտակի գլխից մի բան կշնեմ կամ հարցուր մանեթով կծախեմ դարբնին։

Սերյոժկան ականջները սրելով՝ գլուխը բարձրացրեց։

— Կասես հա, հարյուր մանեթ շատ ե։

— Բա ի՞նչ. յերկաթ ե, ինչի ասես պետք կդա։

— Հարյուր չեն տա։

— Արի գրագ գանք՝ յերկու կտոր հացի վրա։

Սերյոժկան տիսրեց։ Անցան մի քսան քայլ, նա վորպեսզի մխիթարյալի՝ ասաց։

— Ծախի, յես ելի կզանեմ—չուգունի պտուտակի գլուխ. . . ՄԵծ բան։

9

Կայարանի յետել ծխում եյին ոջախները։ Այստեղից յեռացրած ջրի, սոխի, կարտոֆիլի և վառած աղբի հոտ եր գալիս։

Գնացքները գալիս-գնում եյին։

Բախտավորները նստած եյին բուֆերների, կտուրների վրա։

Անբախտներն ամբողջ շաբաթներ թափառում եյին կայարանում, գիշերները զառանցանքի մեջ շուռումուռ գալիս։ Մայրերը վայնասուն եյին գցում իրենց սոված յերեխաների համար, սոված յերեխաները կրծում եյին մայրերի լղար, չորացած ստիճաները։

Սերյոժկան ու Միշկան կանգնեցին ուրիշի ոջախի մոտ։ Միշկան սկսեց մոխիրը խառնել բարակ ձողով։ Մազերը զզզզված մի կնիկ ականջ ծակող ծայնով ծղրտաց։

— Կորեք, ոադ յեղեք։ Աչքները հենց դողություն ե, — ուժ չմնաց։

Մի գյուղացի յել, վոր կիսամուշտակը պինդ կոճկել եր՝ խեթ-խեթ մտիկ տվեց Միշկային։

— Ի՞նչ եք ուզում։

— Վոչինչ ել չենք ուզում, մերսնց ենք վնտում։

— Միք մոտենա։

Կայարանի անկյունում նստարանի տակ մի թաթար եր պառկել՝ պլոկած ոլխով և բարձրածայն արտասանում եր քարե, խոնավ լության մեջ։

— Ո՛յ, ալլահ, ո՛յ, ալլահ։

Մյուս անկյունում ձեռները չուած մի
գյուղացի յեր ընկել յերեսը դեպի վեր, կարմիր,
չսանրած մորուքով։ Մորուքի կեղտոտ մազերի
մեջ խոշոր, մոխրագույն վոջիլներ եյին ման գա-
լիս, վոնց վոր մըջյունները մըջնանոցում։ Գյու-
ղացու աչքերը մեկ բացվում եյին, մեկ փակ-
վում։ Քանդված վոտաշոր հագած մի վոտը ցընց-
վում եր, մյուսն անշարժ անկվել եր։ Բեղերի
վրա, թաց պնչերի մոտ նստել եր մի մեծ կա-
նաչ ճանճ, թուխ կապույտ գլխով։

Սերյոժկան հարցըց։

— Ինչու յե պառկել։

Միշկան չպատասխանեց։

Գյուղացին մոտն ընկած մի կտոր կեղտոտ
հացը դեպի իրան եր քաշում անդիմադրելի ու-
ժով։ Միշկան հասկացավ, վոր գյուղացին մեռ-
նում ե, և մտածեց։

— Կավ կլինի, յեթե ես կտորը թոցնենք։
Ժողովուրդ չկա, մարդ չի տեսնի, Թաթարը բե-
րանքսիվայր ե պառկել։ Տեսնի յել, չի հասնի
յետելից։ Շատը ինքը կվերցնի, քիչը Սերյոժկա-
յին կտա, վորովհետեւ նա ավելի փոքր ե։

Միշկան անց կացավ մի պատից մյուսը,
թեթևակի նայեց պատուհանից։ Հանկարծ վոտ-
ները թուղացան առաջին գողության քաղցր զգա-

ցումից, յերեսն ու ականջներն այրվեցին։ Սէրը
զցեց Սերյոժկայի վրա և շտապ փսփսաց։

— Ապա մի մտիկ տուր։

— Վարաեղ։

— Ենտեղ, դռան յետեր։

Մեկ, յերկու — պատրաստ ե։

Սերյոժկան դռների միջից հարցը եց։

— Միշկա, մուր մտիկ տամ։

— Ել մի մտիկ տա, հարկավոր չի։

Պատփորմի վրա գյուղացիք ընկել եյին
կայաբանապետի յետելից, աստված, Քրիստոս մեջ
եյին զցել՝ խնդրում եյին թողնել իրենց առաջ
գնալու։

— Ընկեր կայաբանապետ, խաթը արեք
մեղ։

— Սպասեցեք, սպասեցեք, ընկերներ, չեմ
կարող։

Միշկան ել վազեց գյուղացիների հետ։ Գյու-
ղացիները կանդ առան։ Միշկան ել կանդ առավ,
բռնելով Սերյոժկայի ձեռը, վոր բան չեր
հասկանում։

Գյուղացիք գդակները հանեցին, Միշկան ել
հանեց հայրական հսամաշ գդակը։ Բոթեց Սե-
րյոժկային։

— Հանի։

Բան դուրս չեկավ, և զյուղացիք սկսեցին
հայոյել: Միշկան ել հասակավորի պես ասաց.

— Կաշառք են ուզում...

Հետո մի խանում տեսան՝ զլիսին տեսակ-
տեսակ սանրեր անցկացրած:

Այդ տեսակ սանրեր պատահում եյին
Սամարայում. հանգուցյալ հայրը դրանց ֆինտի-
կլյուշկա յեր ասում: Խանումը կանգնել եր կա-
նաչ վագոնի միջանցքում, մատներին՝ յերկու
վոսկի մատանի: Մի ականջին ողն ե պսպղում,
և ատամներն ել մերի պես չեն. վոսկուց են:
Կողքին տղաներ են հավաքվել և բերանին են
մտիկ տալիս: Խանումը հենց հավի վոսկը
վայր ե գցում, — տղաները ծեծկում են: Թափ-
վում են իրար վրա և սկսում են գորտերի պես
զուգավորվելով վորոնել: Հետո ելի շարան-շարքով
կանգնում են:

Խանումը նետեց բոլոր վոսկբները, ապա
նետեց հացի կեղեր:

Բարկությունից Միշկայի արյունը զլուխը
խփեց:

— Հաց ե գցում, հիմար կնիկ:

Տոպրակը դրատեց ու Սերյոժկայի հետ գնա-
ցին հարձակվելու:

— Դու հաց ճանկի, յես ել կճանկեմ:

Միշկան բարձրահասակ չե, բայց լավ վոս-
կըու ե, Քեռի Նիկանորին ե զցել, վորը բոլո-
րից լավ մուշտակուիվ եր տալիս: Պատահում եր,
վոր յերբ մին հասցնում եր մարդու ականջին –
զլիսի միջին զուռնա եյին ածում:


Խանումը տեսավ լայն տրեխներ հագած Միշ-
կային և մի ավելի մեծ կտոր հաց նետեց: Միշ-
կայի պնչերը լայնացան: Աջ ուսը թափ տվեց,
յերկու հոգու միանդամից վեր զցեց և յեր-
բորդի վրա հեծավ: Գլուխը սեղմեց գետնին,
ճտովը կպավ աքցանի պես:

Փոքրիկ, ծեծից տափակացրած, փոշոտված
մի հացի կտոր ընկավ նրան:

Դեռ շունչ չեր քաշել՝ խանումը ելի մի
կտոր նետեց:

Միշկան չտեսնված կերպով ուժի յեկավ:
— Սերյոժկա, բռնի:

Բայց այստեղ ծուռտիկ վոտով ու մեծ փո-
ռով մի տղա ամենից լավ հար բանեցրեց: Սե-
րյոժկայի վոտին խփեց, զցեց վայր և քիթը
քսեց գետնին: Սերյոժկան վեր թռավ, բայց բան
չեր տեսնում: Յերկու ձեռը թափահարեց վոր
խփի - փուստ անցավ: Իսկ ծուռտիկ վոտքով
տղան գեն շպրտեց մի յերկարաշապիկ աղջկա,
կզաքիսի պես փշաքաղվեց իր վրա հարձակվող



Միշկայի դեմ: Յերկու ուրիշ տղաներ գոռացին.

— Հասցրու դրան, Վանկա:

Միշկան դրստեց ուսի տոպըրակն ու աչքերին ընկնող գդակի կողիքյոկը յետ տարավ:

— Հասցրու:

— Են ա, վախում եմ, այ:

— Հասցրու ելի՛, փորձի՛:

Այստեղ խանումը ելի մի կտոր շպրաց:

Յեվ հենց այդ ժամանակ վագնի պատուհանից մեկը մի թուղթ նետեց ծրաբած:

— Այ տղա, այ տղա:

Քիչ եր մնում Միշկան յերկու կտոր լինի. ախր այդ անելու բան ե: Վրա պըծավ դեպի թուղթը:

— Մեջը մի բան կա:

Դողդոջ մատներով բաց արեց թուղթը, և ինչ, — պապիրոսի կոթեր:

— Թու, անիծվածներ, իծի ցախ ընկնի ձեր շանը:

Խաղը յերկար չքաշեց:

Յերբեմն Միշկան եր միանդամից յերկսին շպրտում դեն, յերբեմն յերկուսն եյին Միշկային շպրտում դեն:

Նա ամենից շատ հաց ձեռ զցեց և ել չեր վախենում:

Ո՞վ ե իմանում՝ գուցե ելի մի ֆինտիկուշ-
կա պատահի: Յեթե չի ափսոսում, թող շպրտի
հացը: Մենակ թե մինչև Տաշքենդ հասնի, մի
տամնինդ ֆունտ սերմացու բերի, մեկ ել հացի
կտորտանք՝ ինչքան կարելի յե շատ:

Տան մեծի պես խիստ լուրջ մտածում ե
Միշկան, սիրու ուրախացնում: Ապա իր ցանքու,
վոր Միշկան պիտի անի հետևյալ գարնան. նրան
պարուրում եր շոյիչ, ջերմացնող մտքերով:

Սերյոժկան վոչինչ ձեռ չզցեց, Զանթեց մի
հացի կեղե, այն ել մեծափոր ծուռտիկ վոտնե-
րով Վանկան ձեռքիցն առավ և թուշն ել ճան-
կեց իր մեծ, շան յեղունկներով:

Նստեցին կայարանի յետել:

Միշկան հաշվեց հավաքած հացի կեղեները
և ասաց.

— Հինգ հատ ե. յերեքը ինձ, յերկուսը քեզ:

Սերյոժկան կու տվեց կեղեները, և բերանը
ավելի վատացավ:

— Միշկա, միքիչ տաս, չկշտացա:

— Հերիք ե: Զուր խմենք, պառկենք քնելու:

— Այ եղ փշրանքը տուր:

— Վարը:

— Այ, են վոր ծնկանդ վրա յե:

Միշկան ել չկշտացավ: Շոշափեց այն պա-

տառը, վոր գյուղացուց եր գողացել, և շրթունք-
ներն ուղղըց:

— Հենց մի գլուխ՝ տնւր հա տնւր: Բա դժու-
յերը պիտի տաս:

— Յես ել ախր քեզ պտուտակի գլուխը
տվի:

— Են ինձ վիճակ ընկապ:

Սերյոժկան ձայնը կտրեց:

Միշկան գրպանից հանեց իր տարած պտու-
տակի գլուխը, զցեց վոտների տակ:

— Այ ես պտուտակի գլուխը կեր, յեթե
չես ուզում ընկերություն անել:

Յերկուսն ել յերկար ժամանակ լուռ եյին:

— Քանի կտոր հաց ես պարտք:

— Յերեք:

— Վանց չե:

— Բա վորքան:

— Համրի, կիմանաս: Ճամպին վոր հանգըս-
տանում եյինք՝ մի կտոր տվի—եղ քեզ մեկ: Են
կայարանում վոր նստեցինք—մինն ել ենտեղ:
Ես ըսպեյիս յերկու կեղե տվի—ես յեղավ չորս:
Յես քեզ պես չեմ, ավելի չեմ հաշվի:

Սերյոժկան լաց յեղավ.

— Փորս վեց-վեց ե անում...

Դիշերն անձրև յեկավ:

Յերկար ժամանակ Միշկան ու Սերյոժկան չփշփացնում եյին անձրևաջրի մեջ, սայթաքում եյին փոսերում: Ուշացան կայարան դալու և նստելու տեղ չգտան: Միջանցքում կղան պատին ու հետո ծալապատիկ նստեցին: Սերյոժկայի փորն սկսեց ցավել:

— Միշա, «դուրս գնալ» եմ ուզում:

— Ելի՞ «դուրս գնալ»: Շուտ վաղ տուր պատի լետելը:

— Հետո արի:

Միշկան բարկությունից թքեց:

— Զարմանալի մարդ ես, Սերյոժկա: Ինքու ուզում ես «դուրս գնալ», ինձ ել ես կանչում: Գայլ հո չկա եստեղ, վոսներդ չեն կծի:

Սերյոժկան մի տասն անգամ դուրս վաղեց, զոռ տվեց, լաց յեղավ և նորից ձայնը փորն ընկած, անհանդիստ ասում եր.

— Միշա, դուրս ե թափվում:

— Դու յել զոռ մի տա:

— Զոռ չեմ տալիս—գնում ե...

— Թուքդ կնուլ տուր:

— Աղիքներս խառնում ե:

Միշկան ձանձրացավ հոգ տանելուց և ծույլ ասաց:

— Կանցնի, մենակ մի մտածի դրա վրա: Դա վատ ջրից ե, լուծ ունես:

Սերյոժկան չեր մտածում:

Ցնցվում եր, ընկերոջն եր կպչում, վոր մի քիչ տաքանա, փակում եր աչքերը:

— Մըսնում եմ:

Լապտերների աղոտ լուսի մեջ յերեւմ եյին անձրևի խոշոր կաթիները, վոր թոշում եյին, ծխում լճակների մեջ, թմրկանարում կայարանի կտրանը: Կաշե կարառուզով մի մարդ վագելով անցավ միջանցքով և կոխեց Սերյոժկայի վոտը:

Սերյոժկան լաց յեղավ:

Միշկան հայրական հնամաշ գդակն ականջներին քաշելով՝ հոգնած մտիկ եր տալիս:

— Ինչի՞ յես տնօրում, Սերյոժկա:

— Մըսում եմ... Գլուխս երվում ե:

Ցավ չունեցինք, ես եր պակաս: Միշկան ներս խցկվեց ժողովրդի մեջ ու բղավեց:

— Ընկերներ, թողեք հիվանդ տղան ներս մտնի, տաքանա:

Վոչ վոք չպատասխանեց:

Այն ժամանակ Միշկան խորամանկության դիմեց, բանեց Սերյոժկայի ձեռքից ու ավելի բարձր բղավեց.

— Ներս թողեք:

— Եղ նվ ե:

— Մայրիկի մոտ ենք գնում:

Ներս խցկեցին անկլունը, մի կնկա տոպշակի վրա, բայց կնիկը բղավեց.

— Ուր յեկաք, ձեզ ելի սպասում, այ:

Խորամանկություն՝ խորամանկություն—առանց խորամանկության յուլա չես գնա: Միշկան՝ յերեք այդպիսի ձայն չեր ունեցել—այդպես փաղաքշական:

— Մոքիր ջան, դու բուզուլուկցի՞ յես:

— Վեր արի տոպլրակից:

— Զեռ չենք տա:

Մոտի գյուղացին, գլուխը չբարձրացնելով, սսաց.

— Մազերից ձիգ տու, կհասկանա:

— Մենք մեր մորը կորցրել ենք, հերներս սովից մեռավ:

Գյուղացին ելի գլուխը չբարձրացնելով ասաց.

— Յես ել եմ վորք, յես ել անտեր եմ դնում ճամպա:

Միշկան տոպլրակի կշտին տաքացավ և միքիչ աչքը կպցրեց: Հենց այն ե՛ ուզում եր բոլորովին մոռացության մեջ ընկնել՝ Սերյոժկան քնի մեջ հանկարծ չվերցնի ու դոռա.

— Կիբգիզը:

Կնկա յերեխան լաց յեղավ: Սա յել բարկացած ասաց.

— Մի գոռա, յերեխին կվախեցնես:

Բայց Սերյոժկան ելի սկսեց գոռալ.

— Կրակ ե ընկել:

Ուշքի յեկավ, «գուրս գնալ» ուզեց: Հետո կամացուկ սկսեց թնկթնկալ՝ զլուխը ծնկների մեջ առնելով:

Միշկան հուսահատությունից աչքերը փակեց:

Նա միտք եր անում չքնաղ Տաշքենդի վրա, գլխից չեր հեռացնում տասնհինգ ֆունտ ցորենի և յերկու տոպլրակ հացի կտորաանքի պատկերը: Մտքով կախված եր բուժերներից, մազլցում եր վագոնի կտորը, թագ եր կենում շոգեմեքենալի մեջ, և վոչ մի զինվոր և վոչ մի կայարանապետ չելին կարողանում նրան բռնել: Նրանք բարձրանում են կտորը, ինքը ցած ե իջնում: Նրանք՝ շոգեմեքենալի վրա, նա՝ շոգեմեքենալից իջնում ե: Այդպես ել նրա մասին ամեն տեղ ասում ելին.

— Ավագակ ե լուս ընկել:

— Ո՞վ:

— Այ մի տղա կա բուզուլուկցի, Լապատի-

ՎՀԾ

նյան գավառից։ Առանց տոմսի, առանց անցաթղթի ճամպա յե գնում։ Հնար չկա բռնելու, տանելու որտա-չեկա։

Իսկ Սերյոժկան նրա կշտին շան պես վընդում եր զառանցանքի մեջ։

Մարիկ ավեց Միշկան նրան խեթ-խեթ, չար աչքերով և մտածեց։

— Ի՞նչ խելք եր սրա պեսի հետ կապվելու։ Լավ են եր՝ իսկի չկապվելի։ հիմի յել ուշ եր պայման կա։ Մենակ վեր զցեմ գնամ, կկորչի։ Թե նրանով լինեմ, յերկար ժամանակ Տաշքենդ չեմ հասնի։ Հիմարի գլուխ։ Սիրտդ շատ եր նեղանում, այ, յեթե մենակ գնայիր։ Վեց կտր հաց ձեռդ կընկներ, վեցն ել դու կուտելիիր։

Սիրտը նեղացավ այս ծանր մտքերից, գլուխն սկսեց արաքվել։ Կայարանից մի կերպ գլուխը գուրս հանեց Միշկան ու դուրս յեկավ պլատֆորմը։

Վագոնների տակ տեսավ Վանկային, այն ծուռտիկ վոտքերով տղային, վորի ձեռքից հացը խել եր, և մյուս տղային, վորի անունը Պետկա յեր։

Վանկան ել ճանաչեց իր վոչ-վաղեմի հակառակորդին և բարեկամաբար ասաց։

— Անցի մեղ մոտ։

— Զեղ մոտ ի՞նչ կա վոր։

— Քիչ կտաքանակ։

Միշկան նստեց անիվի մոտ, պատմեց Սերյոժկայի մասին, Սերյոժկայի փորլուծի մասին և այն մասին, թե ինչպես պայմանավորվել են միշտ իրար հետ լինել։ Իսքը Սերյոժկան վատե, ձեռից բան չի գալիս, և Միշկան ե ստիպված յերկար համար բան ճարում։ Հենց նոր նա հինգ կտոր հաց խլեց. իսկ յեթե ուզենար, բուրը կմլեր։

Վանկան աչքի տակով մտիկ տվեց նրան։

— Ուժիդ վըա յես հույսդ գնհւմ։

— Բա ի՞նչի վըա հույս գնեմ։ Ապա ինձ մի լավ կշտացրու, տես վընց եմ յերկու մարդու վեր զցում։

— Գտավ պարծենալու բանը։ Ապա ինձ ել կշտացրու, յես ել կզցեմ։

Պետկան աչքերը պսպղացնելով նայեց Միշկային և հարցը եց։

— Մեր Յաշայի հետ կարասու։

— Քանի տարեկան ե։

— Տամնյերեք։

— Ի՞նչ մարդ ե վոր։ Ավելի մեծին ել տակը կզցեմ։

Պետկայի բարկությունը յեկավ. տես, ե,

մի հոգի յե՛ յերկափց չի վախում: Արմունկը
հանկարծ քսեց Միշկայի թշին:

Միշկան դրստեց տոսլրակը:

— Ի՞նչ ես կոիվ տալիս հետո:

— Բա դժու:

— Դենք, թե չե՛ մի հատ կհասցնեմ՝ վայ
նանի կկանչես:

Վանկան վոտով յետ շպրտեց նըան:

— Դենք:

Պետկան բոռւնցըները սեղմեց:

— Վանկա, հասցըռն դրան, են հացի կտոր-
տանքի ջիգըը հանի:

Յերեք լակոտներ իրար կպան վագոնի
տակ ու յերկար ժամանակ տրորում ելին
մեկ-մեկու սաստիկ չարացած: Վանկայի յե-
ղունկները շատ վատ ելին—Միշկայի ամբողջ
քիթը ճանկուտեց: Բայց դե՛, Միշկան ել տակը
չմնաց. նա յել Վանկայի գլուխը հուզ տվեց
ու մկան պես ծվացըեց...

11

Ճաշին յեկավ մի գնացք, վոր գլուղացինե-
րի գնացք չեր, այլ կարգին վագոններով եր:

Գլուղացիք չկարողացան ընկնել նըա մեջ:

Վանկային ու Պետկային դուրս շպրտեցին
և յերեք աղջկա տարան որտա. չեկա:

— Անտոմսավոր են:

Միշկայի բախտը բանեց:

Պտուտ յեկավ, պտուտ յեկավ բարձր կար-
միր անիվավոր շոգեմեքենայի չորս բոլորը և
թռավ նստեց սանդուխի վրա: Անշուշտ կզնար,
բայց դանազան մտքեր սկսեցին տանջել նըան:

— Թողիք, թողիք, ընկերոջդ թողիք: Հի-
վանդ ընկերոջդ:

Շոգեմեքենայի անիվսերը պտավեցին, բայց
դրանից Միշկայի մտքերն ավելի շփոթվեցին:

— Թողիք ընկերոջդ, թողիք:

Միշկան ցած թռավ շոգեմեքենայի աստի-
ճանից և քիչ ե մնում բարկությունից լաց լինի:

— Ախր ինչու կապվեցի Սերյոժկայի հետ:

Կարմիր անիվավոր շոգեմեքենան գնաց հե-
ռացավ, և Միշկան տիսրեց:

Սերյոժկան պառկել եր կայարանի յետե
բուգկայի մոտ, արեի տակ և ծանր լիզում եր
շրթումքները բորբոքված լեզվով: Նըա գեմքը
լղարել եր, քիթը սրվել: Նստեց Միշկան ընկե-
րոջ մոտ, գլուխն որորեց: Տոպրակից հանեց փա-
լասը, մի պաղունց աղ ածեց լեզվին: Կնճուտեց
գեմքը, թքեց աղը: Լուռ գնաց անցկացավ վա-
գոնների մոտով: Հանեց զզակը, կանգնեց վա-
գոնի մոտ պատուհանի տակ, հեռացավ գնաց

հավաքելով ցեխի մեջ ընկած կարտոֆիլի կճեղ-
ները, սոված ծնոտներով դանդաղ ծամեց:

Մյուս վագոնից վոչխարի շէի թանձը հոտ
յեկավ:

Միշկան դարձյալ հանեց հայրական հնամաշ
դդակը:

— Մոքիր ջան, մի բան տաս հիվանդ տղա-
յին:

— Ո՞ւմ:

— Հիվանդին:

— Կորի, քանի յերեսիդ չեմ չպոտացրել,
Զահլա տարան ամեն բոպե, անիծածները:

Միշկան հառաչեց, վոչինչ չասաց: Գնաց
ամենավերջին վագոնը, նստեց բարակ փայլուն
ռելսին:

Հանգուցյալ հայրը միշտ ասում եր.

— Մեզպեսներին կասեն տուր հա տուր,
բայց մեզպեսներին վոչինչ չեն տա:

Միշկան գլուխը սեղմեց ձեռների մեջ ու
քարացած մնաց:

— Մեզպեսները կոտորվեն ել՝ վոչ մեկի
սիրտը չի ցավիլ:

Հենց այստեղ եր՝ պատահեց մի քաղաքա-
ցի կին, սպիտակ շորերով—զթության քույրը:
Զեռքում՝ ամբողջ մի կտոր հաց, չիմի ի՞ն քը

դիխի ընկավ, վոր Միշկան մեծ ցավի մեջ ե, թե
Միշկայի աչքերը մատնում ելին այդ ցավը:

— Այ տղա, ուր ես գնում:

Այդ փաղաքշական խոսքն այնպես շուց
Միշկային, կարծես կժով տաք ջուր ածեց ին
վրան: Նայեց կնոջ՝ յերեսին. չի ծիծաղում, խըղ-
ճահար աչքեր ունի: Միշկան յերկար չմտածեց.
խոստովանեց ամեն բան: Ընկերոջ հետ խոսք
մեկ են արել միասին Տաշքենդ գնալ, ճամպին
իրար չթողնել: Բայց ընկերը քեչ հիվանդացել
ե, և նրանց վոչ վոք հաց չի տալիս: Ինքը՝ Միշ-
կան ավելի շուտ կդնար, բայց ընկերոջը թող-
նել չի կարելի: Կկորչի՝ յեթե մենակ մնա, շատ
ե անփորձ: Իր որում վոչ մի տեղ չի յեղել, շո-
գեմեքենաներից վախենում ե:

— Ինչո՞վ ե հիվանդ:

— Լուծ ունի վատ ջրից և ջերմի պես բան:

— Ապա ցուց տուր, վճրտեղ ե:

Գնացին բուդկայի յետեն, ուր ընկած եր
Սերյոժկան: Միշկան ցուց տվեց.

— Այ, տես:

Քույրը մտիկ տվեց Սերյոժկայի փորին և
տաց.

— Սա չերմ չե, տիֆ ե, և սա, հավանորեն,
չի դիմանա:

— Հիմի ուր պիտի տարվի սա:
Քուրը մտածեց և ասաց.

— Մեր վագոնը հիվանդներով լիքն ե, բայց
ինչ վոր ե՝ սահպված ենք սրան ել վերցնելու:
Կհամնենք հետեւալ կայարանը՝ սրան կղնենք հի-
վանդանոցը: Համաձայն ես:

Միշկան նրա համար չե ուրախ, վոր Սե-
րյոժկային հիվանդանոց են տանելու: Վաչ, զբա
համար ել ե ուրախ: Բայց ավելի ուրախ ե մի
բանի համար, վոր աշխարքում լավ մարդիկ կան,
մենակ՝ միանգամից չես պատահում դրանց:
Հիմի սիրտն ել ե ուրախ, սովածությունն ել
քիչ ե աղիքներում: Քուրը հացից մի պատառ
կտրեց, վորից Միշկան քիչ մնաց ուրախությու-
նից լաց լիներ:

— Շատ շնորհակալ ենք, մոքիր ջան:
Ու մտածում ե.

— Ախ, յեթե ինձ ել նստեցներ վագոն:
Բայց քուրը կարծես կախարդ լիներ: Ձե-
ռաց հասկացավ Միշկայի միտքը:

— Հիմի գու ուր ես գնալու:
Մտիկ տվեց Միշկան քրոջ խղճահար աչքե-
րին և ասաց.

— Մոքիր ջան, նստեցրն ինձ անկյունում,
յես վոչ վոքի չեմ ասի:

Ձե, աշխարքում լավ մարդիկ կան:
Սիրտն ել ե ուրախ, սովածությունն ել
պակասեց աղիքների մեջ:

Հիմի նստել ե Միշկան սանիտարական վա-
գոնի մեջ և աչքերին չի հավատում. յերազնում
ե, թե իսկություն:

Վագոնը թխթխկացնում, որորվում ե: Անիվ-
ները թխթխկացնում են, խաղ են անում, իսկ
Միշկան անկյունում ժպտում ե քաղցր նիրհե-
լով:

— Վորաեղ ե հիմի ծուռտիկ վոանանի վան-
կան, Յեկ վորաեղ են ոջախները:

Բոլոր ոջախները միանգամից հանդան, մի-
այն անիվներն են ներքեռում խոսում.

— Տու-տու-տու: Տու-տու-տու:

12

Հիվանդանոցը Միշկային գուր յեկավ. ներ-
կած ե և պատուհան շատ ունի: Սերյոժկան
կպառկի այնտեղ, կլավանա: Դեղ կտան, դեղա-
փոշի կտան, վոտի կկանգնի: Ինքը Միշկան ել
Տաշքենդից յետ գալիս կվերցնի նրան: Յեթե
գործը հաջող գնա՝ դեռ հացից ել բաժին կհանի
նրան, վոր նախանձ չլինի: Ամենքը կարող են
հիվանդանալ. Մերլոժկան մեղավոր չե:

Սերյոժկային դրին պատգարակի վրա և
տարան դրին հաշտում։ Պատգարակ կրողները
հեռացան և լերկար ժամանակ դուրս չելին գա-
լիս հիվանդանոցից։ Ծառների մեջ ագռավը
կռավեց։

Զար կռավոց ե, վատ բան չպատահի։
Սերյոժկան ուշի լերկավ ու լաց լեղավ.
— Ինձ ուր են ուզում տանել։
— Եստեղ հիվանդանոց ե, մի վախի։
— Բա դու վորտեղ ես։
— Եստեղ, քեզ հետ։

Միշկան նստեց դռան սանդուխին, պատգա-
րակի մոտ ու սկսեց պատմել։ Մի շատ լավ
կին պատահեց, վոր խղճում ե իրենց, հաց
տվեց։ Ասում ե՝ յես Սերյոժկային անպատճառ
կրծշկեմ։ Ասում ե, վոր այդպիսի դեղ ունի։
Ինքը Միշկան ել մենակ չի գնալ Տաշքենդ, կմնա,
կսկսի շուկա գնալ։ Կայարանի յետև շուկա կա,
ինչպես վոր Բուզուլուկում, և ինչ վոր սիրտ
կուզի, կարող ես գնել։ Մենակ թե՝ Սերյոժկան
թող չբարկանա, վոր նըանք կռվեցին—ձամպին
տռանց դրան չի լինի։

Հիշեց խաղում աարած պատուտակի գլուխը։
— Դու կարծում ես, թե յես պատուտակի
գլուխը հենց դրժւստ վերցրի։ Ինչի՞ն ե պետք

ուրիշի ապրանքը։ Դիտմամբ բարկացնում ելի...

Տաք ու խորը գրպանից պատուտակի գլուխը
հանեց և դրեց Սերյոժկայի ձեռը։

— ԱՌ, պահի։

Իսկ յերբ հիվանդանոցի դռները բացվեցին,
և Սերյոժկան հավիտյան մտավ այնտեղ՝ Միշ-
կան զգաց մի անտանելի ցավ և դառն միայ-
նակություն։ Կանգնեց սեղանի մոտ, ուր մի
սպիտակ խալաթ հագած կին դրում եր, և հոգ-
նած ձախով սկսեց պատմել.

— Մենք Լապատինյան գավառի գյուղացի-
ներ ենք։ Յես Միխայլ Դողոնովն եմ, իսկ նա՝
Սերգեյ Իվանիչը։

— Ազգանունն ինչ ե։

Այստեղ Միշկան մոռացավ Սերյոժկայի աղ-
գանունը։ Ուզեց մականունը ասել՝ կինը իսկա-
կանը պահանջեց։

— Ուզդակի գրեք իմ անունով։ Միխայլա
Դողոնով, Լապատինյան գավառից։

— Գրել-կարդալ իմանում ես։

— Բա վճնց։

— Ստորագրի։

Միշկան կուրծքը դիմճար տվեց սեղանին, և
շրթունքները զոռից լայնացան։

— Վաղուց ե չեմ գրել, ձեռս չի բռնում։

Ստորագրեց և իսկուն տխրեց:
Դուրս յեկավ հիվանդանոցից, իսկ պառ-
տակի գլուխը բակում ընկած եւ:
— Ոհո, Սերյոժկան մոռացել եւ:

Մտիկ տվեց պատուհանից. մարդ չեր յե-
րեռմ. Բարձրացավ մյուս պատուհանը, բայց
այնտեղից մի մարդ ձեռքով սպառնաց. Փողո-
ցալին շան պես Միշկան պտտվեց հիվանդանոցի
չորս բոլորը և կրկին հաշտի մոտ կանգնեց:
— Վճնց անեմ, պտուտակի գլուխը հաս-
ցընեմ Սերյոժկալին:

Մի մարդ դուրս բերին պատգարակով:
Կարծեց թե Սերյոժկան եւ, բայց պատգարակի
վրայինը մեռած կնիկ եր, և կնկա վոտները
մերկ. Տիրեց—ուժ չունի. Ուտել եւ ուզում,
ընկերոջն ել ափսոսում եւ:

— Ախր պտուտակի գլուխն ինչու մոռացա:

13

Ամբողջ որ Միշկան թրե եր գալիս շուկա-
յում, առևտրականների մեջ, ականջ եր դնում,
թե քանիսով են ծախում մի յուրկան, մի կոփ-
տան, հացը ինչ արժի, լեթե փողով առնի մարդ:
Հիմի ինքն ել եւ ուզում տոպրակից հանել տատի
յուրկան, բայց գյուղացիք չորս կողմը խոսում են.

— Կիրգիզներն Արենքուրգում թանգ գնով
ամեն բան առնում են: Այստեղ պետք եւ տանել:
Միշկան ել մտածեց թե՝
— Միքիչ ել կհամբերեմ:
Փորձեց վողորմություն խնդրել, բայց
կնիկմարդիկ այստեղ խիստ են չարանում:
Հենց ասում ես՝
— Մոքիր:—Մտիկ չեն տալիս:
Սկսում ես զոռել.
— Իսկը Քրիստոսի:—Զեռքերը թափ են
տալիս վրադ:

Մի կնիկ ել ուզում եր Միշկավի գլխին
խփել:

Յերեռմ ե վոր իմացավ, թե ինչպես Միշ-
կան գյուղացուց մի կտոր հաց գողացավ, և շու-
կայով մին գոռաց.

— Զգուշ կաց, գնդ շուն: Վաղուց ե աչքս
վրադ ե, ման ես գալիս չորս կողմ:

Միշկան հայրական հնամաշ գդակը քաշեց
աչքերին ու հեռացավ աղմուկից: Իմաց կտան
որտա-չեկա ու յերկու շաբաթ կնստացնեն. մեզ-
պեսների հետ շատ յերկար-բարակ չեն խոսի:
Կպահանցեն անցագիր—չկա: Անցաթուղթ կպա-
հանցեն—անցաթուղթ ել չկա: Լավ ե խաթից հե-
ռու լինել...

Միայն իրիկնադեմին հիշեց Սերյոժկային:
Կարծես մեկը ծագեց նրա սիրտը:

— Ինչու չես գնում մոտը: Խոստացար, չե՞:

Ուզում եր գնալ Սերյոժկայի մոտ, բայց
գյուղացիք վախեցրին:

— Տաշքենդի գնացքը սարքում են: Շու-
տով կդնա:

Իսկուն Միշկայի գլուխը յերկու մասի բա-
ժանվեց: Մի կեսը հրամայում ե Սերյոժկայի
մոտ գնալ, մյուսը վախեցնում ե.

— Մի գնա, կուշանաս:

Իսկ առաջին կեսը դարձաւ ականջին փըս-
փըսում ե.

— Զես ամաչնում, ընկերոջդ թողնում ես
ոտար յերկրում: Ինքու պայմանավորվեցիր ու
ինքդ ել չես ուզում: Հեռու չե: Մնաս բարով
կասես վերջին անգամ ու ճամպա կընկնես: Նա
յել թեթև կզգա իրեն այդ իմանալով և ել չե
սպասի...

Մյուս կեսը հանգստացնում ե.

— Դու այս անգամ չպայմանավորվեցիր:
Զուր տեղը ժամանակ մի կորցնիր, թե չե՞
գնացքին ել չես հասնի: Մի գիշեր մի ցերեկ
կնստես այստեղ, մինչդեռ այդքան ժամանակը
հարյուր վերստ ճամպա կդնաս: Յեթե դիտմամբ

անելիր, — վսաս չունի... Դիտմամբ հո չես տ-
նում...

Միշկան յերկար տանջվեց:
Դուրս յեկավ կայարան: Մեկ հիվանդանո-
ցին ե մտիկ տալիս, մեկ՝ վագոններին:

Միշկայի խիզճը հաղթեց Միշկայի անվրձ-
ուականության և առաջ մղեց: Ինչքան ուժ ու-
ներ, վազեց հիվանդանոցի հաշտը, կանգ առավ,
կարծես մեխված լիներ տեղում: Յերեք պատու-
հանը բոլորովին մութն ե, մեկի մեջ մի փոք-
րիկ ճրագ և վառվում: Խփեց գուանը՝ վակ ե:
Գլուխը բարձրացրեց դեպի պատուհանը, ուր
ճրագն եր վառվում. մի մարդ շապկից քաշեց:

— Ուր ես բարձրանդում: Պատուհանն ես
ուզում ջարդել:

Միշկան շուռ յեկավ վոր՝ մի գյուղացի յե-
կանդնել դիմացը, ավելը ձեռին:

— Սերյոժկային եմ մտիկ տալիս:

— Ի՞նչ Սերյոժկա:

— Մեր, լապատինցի Սերյոժկային:

— Եստեղ վոչ մի Սերյոժկա չկա, հեռացի:

Այ քեզ բան: Եսոր՝ հիվանդանոց տարան
ու եսոր ել չկմ:

Հենց այստեղ ել շողեմեքենան կայարանում
սուլեց:

— Գնացքը,

Միշկան հիվանդանոցից վագ տվեց, թռչում
ե գետնի վրայով։ Հասավ կայարանը—բան չի
հասկանում։ Մարդիկ այս ու այն կողմ են վազ-
վըզում, վոմանք ել թեյ են խմում։

Մի գյուղացու հարցը եց, սա ձեռները տա-
րածեց.

— Յես, ախատեր ջան, բան չեմ իմանում.
յես ինքս չորս որ ե՝ վեր եմ ընկած եստեղ։
Ուր ես՝ գնում։

— Պետք ե Տաշքենդ գնամ։

— Տաշքենդինը վաղուց ե գնացել։

— Գնացել ե։

— Նոր ե գնացել։


Միշկայի ձեռներն ու վոտները թուլացան։

Վաղեց ուրիշ կողմ, մթան մեջ դիպավ մի
կնկա, վոր գույլով յեռացըրած ջուր եր տանում։
Դույլը ցնցվեց, և յեռ ջուրն այրեց նրա մատ-
ները։ Կնիկը վայր գցեց գույլը և սկսեց բղավել։

— Բռնեք դրան։

Յեղնիկ չե փախչում, յեղջուրներով թփե-
րը ճղում—Միշկան ե փախչում տոպրակն ու-
սին։

Յետեռում աղմուկ բարձրացավ, ականջ ե
ծակում։



— Գողացնվ, գողացնվ, բռնեք:
Գյուղացիք Միշկայի ճամպան կտրեցին:
— Այ, շուն շան վորդի:
— Հարկավոր չե, մի՛ խփեք:
— Միլիցիա կանչեք:
— Այ, ընկեր միլիցիոներ, հենց սա յեր...
— Կնկանից տոսլրակը գողացավ:
— Ցրվեցեք:

Կամ գետինն ակի պես շուռ ե գալիս, կամ
մարդիկ թռչում են մեկ-մեկի վրայով:
Վնչ:

Գետինը չե շուռ գալիս և վոչ ել մարդիկ
են թռչկոտում. Միշկայի աչքերը մթնեցին,
Միշկայի գլուխը պտտվում եւ կանգնել ե սար-
սափելի ողակի մեջ, և լեզուն չի պտտվում թե
բան ասի: Ուզում ե խոսել, չի կարողանում:

Արցունքը կաթեց Միշկայի թշին. բայց
այդ իրարանցման մեջ ով կտեսնի արցունքը:

Միշկայի ցավը գրգռում ե կայարաններում
յերկար ժամանակ նստած գյուղացիներին:

— Պետք ե թակել եղ շան լակոտներին:

Միլիցիոները բռնեց նրա ձեռը:

— Գնանք:

— Կորա:

Միայն այսքանը մտածեց Միշկան:

— Հիմի կաշիս կմաշկեն:

14

Միշկան գնում ե սարսափելի դատաստանի.
բոլոր մսերը դողում են. Հիշեց հանգուցյալ
հորը, Նիկանոր քեռուն, վորն ամենքից լավ
մուշտեկոիվ եր անում, և խիստ նեղացակ
Սերյոժկայից:

— Տես թե ինչ պատճառով ընկա խաթի
մեջ:

Մտնում են որտա-չեկա. կարծես մինչեւ
անգամ սարսափելի յել չե, ինչպես վոր նրանց
գործկոմում: Մի մեծ սեղան ե, սեղանի մոտ
նրանց մեծը՝ կաշվե պիշակով: Կողքից ատրճա-
նակը կապած, գլխարկի վրա բայլշեկիլի աստղը:
Ամենից մեծը մի մատով բեղերն ե քորում ու
մտիկ ե տալիս Միշկային աչքերը կուչ ածելով:

— Բանն ինչո՞ւմն ե,

— Ես աղային բռնել ենք, ընկեր Դունայկ, —
բացատրում ե միլիցիոները:

— Անտոմսավո՞ր ե:

— Ո՞վ ե իմանում: Զեմ իմանում տոպլրակ
ե փախցրել:

— Մոտեցիր ինձ:

Միշկան խիստ վախեցավ -ձեռներն ուղիղ
պահեց շալվարի վրա: Զախը վախից ցնցվում ե,
վոտներն ել ծնկների մոտ քիչ դողում են: Առա-

տաղը գլխի վրայից սահում եւ վայր, և բոլոր
որտաշեկան ալիքների մեջ ճոճվում եւ:

Իսկ ընկեր Դունայել դիտմամբ լոել եւ,
չի շատպում:

Միայն կուչ բերած աչքերը զցում եւ մեկ
թղթի վրա, մեկ Միշկայի վրա:

— Անունդ ի՞նչ եւ:

Միշկայի մաղերը փշաքաղվում են, բիթն
այրվում. չի կարողանում շուռ դալ դես-դեն:

— Քանի տարեկան ես:

— Տասնըմեկ, տասերկու:

— Ապրես: Թութուն քաշմում ես:

— Իսկի:

— Մի պահի, Միշկա Դողոնով, մենք ամեն
բան դիտենք...

Միշկան տեսավ վոր մեծավորը ժպտում եւ
մտածեց.

— Սուտ եւ ասում. վոր ծիծաղում եւ վո-
չինչ չգիտե:

Մեծավորը նորից ժպտաց.

— Տոպլակն ինչու գողացար:

Միշկայի սիրաը թեթեացավ, և նա կրկին
մտածեց.

— Արի կըլի միքիչ սուտ ասեմ՝ կարելի յե
հավատա:

Մկնեց պատմել. վաղուց եւ հոր հետ պատ-
րաստվում եյին Տաշքենդ գնալու, տոմս, անցա-
թուղթ առան, իսկ հայրը ճամպին մեռավ: Պետք
եր նրանից տոմսը վերցնել, բայց Միշկան մո-
ռացավ ու յերկու կայարան առանց տոմսի յե-
կավ: Այստեղ իրանց գյուղից մի աղա յել յե-
կավ կպավ թե՝ ինձ ել հետդ վերցրու հա հետդ
վերցրու—մենակ վախում եմ: Նա յել հիվանդա-
ցավ: Ուժ կուզես՝ հարցրու—հիվանդանոցումը
պառկած եւ: Միշկան վազեց հիվանդանոց, վոր
նրան տեսնի, բայց այդ ժամանակ գնացըը
սուլեց: Այստեղ Միշկան վախեցավ, վազեց,
վազեց, դիպավ կնկան: Մութն եր, չեր յերե-
փում: Վոտով դիպավ դույլին, կնիկն սկսեց
գոռգոռալ: Գյուղացիք լսեցին, կարծեցին թե
ժուլիկ եւ: Բայց այս տոպլակն իր սեփականն եւ:
Այս տոպլակի մեջ ելի մի տոպլակ կա, իսկ այդ
տոպլակի մեջ մի փաթաթած գավաթ կա, մի
յերկու պտղունց աղ՝ ճամպի համար, մեկ ել
տատի յուբկան: Նա յերբեք գողովթյուն չի
արել:

Բաց արին տոպլակը, տեսան վոր ձիշտ եւ.
գավաթն եւ, աղը և յուբկան:

Մտիկ տվեց ընկեր Դունայել Միշկային,
ելի քորեց բեղերը մի մատով:

— Բայց դու գիտե՞ս, վոր յերկաթուղով չի
կարելի անտումս ճանապարհորդել:

— Ինարկե գիտեմ, բայց մւր գնամի Շատ
եմ սոված...

— Իսկ Տաշքենդ ի՞նչի՞ յես գնում:

— Միքիչ աշխատանք անելու:

— Ի՞նչ գործ կարող ես անել:

— Ի՞նչ վոր պատահի: Աղբ կժաքրեմ, գու-
թանի վրա կը անեմ...

Դունաւիը, ամենից մեծավորը, գլուխը պար-
տեց ու ժպտաց:

— Կոյր, Միխայլա Դոդոնով. դու ճարպիկ
տղա յես: Յես քեզ կարգով կպատժեմ, վոր դու
ավելի ճարպիկ լինես: Վաղը դու պետք ե ան-
տումսավոր կնիկների հետ փայտ կը ես: Միքիչ
կաշխատես՝ ճամպա կդնաս: Իսկ անտումս ճամ-
պա գնալ մեզ մոտ չի կարելի: Հասկացար:

Միշկան ավելի վատ բան եր սպասում:

Միլիցիոների հետ գուրս յեկավ որտա-չեկա-
յից և հանգստացած ասաց.

— Յես գործից չեմ վախում: Ի՞նչ գործի
ուզում ես՝ դիր, կանեմ...

15

Միշկան յերկար ժամանակ ման եր գալիս
պլատֆորմի վրա. վոաները չեյին շարժվում: Հոգ-
նել եր: Նստեց վաղոնի մոտ, վոր ըիչ հանգստա-

նա, ու այնպես ել քնեց, գլուխն անիվին դեմ
անելով: Սոված աշխատանքի որը լավ հոգնե-
ցրել եր նրան, ուրախությունը՝ որորել. ուստի
և յերազում բան չտեսավ:

Առավոտ վեր թռավ՝ բան չի հասկանում.
մեջը միքիչ ցավում է:

Զեռը տարավ քամակը, տեսավ վոր տոպ-
րակը չկա:

— Վայ...

Ընկավ վագոնի տակը—չկա: Վրա պրծավ
առաջ—չկա:

Զորս վագոնի շուրջը պտավեց—չկա ու
չկա:

— Տեր աստված:

Քրտինքը խփեց ճակտին, շապիկը թրջվեց,
և սիրտը քար կտրեց—չի խփում:

— Գողացե՛լ են:

Վոտները ծալվեցին, թուլացան:

Նստեց Միշկան ժանդոտ ոելոի վրա ու
սկսեց աղի արցունք թափել:

Մարդկային մեծ վիշտը ծանրացավ փոքրիկ
Միշկայի սրտին, սկսեց սխմել, ճնշել: Ընկավ
բերանքսիվայլը շպաների արանքը, շուռ տվեց
մաշված կը ուներով տրեխները և գառան պես
վիզը դեմ արեց սուր դանակին:

Վոչ թե առավրակն ու յուբկան տարան, այլ
վերջին ուրախությունը:

Վերջին հույսը գողացել են:

16

Միշկան լաց յեղավ մի ժամ, յերկու ժամ—
դե մի բան պիտի անել: Յավի մի կես մասը
լացով թեթևացրեց ու սկսեց քայլել կայարանի
յետեղ ռելսերի վրայով: Մի յերկու հարյուր
սաժեն վոր հեռացավ, Սերյոժկային հիշեց. լավ
կլիներ՝ մի մնաս բարով ասեր նրան: Ո՞վ ե իմա-
նում՝ գուցե ել չես տեսնի նրան: Թե լավ մարդ
պատահի, կլսդա, չի պատահի՝ վերջ: Միքիչ ասենք
կդիմանա, բայց մինչեւ յերեկո բան չտան իրան՝
ել չի իմանում, թե ինչ կպատահի. կմեռնի...
Յավից կպառկի ու ել վեր չի կենա տեղից:
Մարդկանց շատ ել պետքը չե. տեսնեն ել՝ զիտ-
մամբ յերեսները շուռ կտան: Դրանցպեսներից
շատերն են թափել՝ թող մեռնի...

Արե, մի փայլի—դրանով չես ուրախացնի:
Դու յել, զանգ, զուր տեղն ես ժամ կան-
չում...

Ե՞ն, ծանր ե մարդկային ցավը:

Միքիչ հաց լիներ, ե:

Հիվանդանոցում Միշկային քաղցր չընդու-
նեցին:

— Ի՞նչ ես ուզում:
— Սերյոժկան պառկած ե այստեղ:
— Կաղն արի, եսոր չի կարելի:
— Քիչ ժամանակով եմ յեկել:
— Սերյոժկան մեռել ե, նա յել չկա:
— Վճնց թե մեռել ե:
— Գնա, գնա: Զես իմաննում՝ վոնց են
մեռնում: Թաղել են:

Անա, տեսամբ Սերյոժկան:
Ի՞նչ անբախտ որ ե: Միշկան նստեց հի-
վանդանոցի հաշտում, պառկեց ծառի տակ:

Թարսվեց ամեն բան. յուբկան չկա, հաց
ել վոչ չի տալիս: Իսկ այդ ազուամիսերն
ինչու յեն կռնչում: Հըե՞ն, մեկին ել սողում ե.
ինչ են ասում... բղեղը: Բոնես ու ուտես: Լա-
պատինցիք շներին ու կատուներին ուտում եյին,
իսկ չի կարելի այդ բղեղին ուտել...

Հըեն ձնձուկը վոստոստում ե: Այսպես թե
այնպես՝ ձնձուկներ կան դեռ: Հը՞մ: Յաշկան
իր հրացանով եստեղ լիներ...

Միշկայի զլխավերեկը կանգնեց չոր սովա-
մահը, յերեսին ե փչում հաճարի սև հացի հոտը:
Վժրտեղից ե հացը... Մի չոփ ե վերցնում, հի-
մի յել չոփից ե հացի հոտ գալիս: Հոտ ե քա-
շում ու դեն գցում: Խոտ ե պոկում, ծամում ե:
Բայց նորից աչքերը վշտալի փակվում են:

Մահ:

Բայց ելի ինչքան չլինի՝ լավ մարդիկ կան:
Միշկայի գլխավերել կանգնել եր սովամա-
հը և հաշվում եր Միշկայի կյանքի վերջին ժա-
մերն ու բոպեները։ Արդեն սառը մատները
քսում ե նրա շրթունքներին, դիպջնում ե մեջ-
քին. մտիկ տուր վերջին անգամ ոտար, հեռու
յերկնքին-նայիր, կշտացիր, վազիր հուսահատ
մտքերով Տաշքենդի և Լապատինի մեջ, պոկիր
սրտիցդ գյուղացու մտքերը։ Մահը ծանր կոշիկ-
ների պես թխթխացրեց Միշկայի քունքերում,
ականջի մեջ շնչաց.

— Ինչու յես լաց լինում, Միւնույն ե, վոչ
վոք չի խղճա:

Հենց ալդ միջոցին անց եր կենում որտա-
չեկայի ընկեր Դունայել. նա տեսավ ծանոթ
տղային և կանգ առավ:

— Վահ, Միխայլա Դոդոնով։ Դու ինչու յես
վեր ընկել այստեղ։

— Ուժ չունեմ վեր կենամ...

— Ի՞նչ ե պատահել։

— Ուժասպառ եմ յեղել։

— Հա, այդ լավ չե։

Մտիկ ե տալիս Միշկան ընկեր Դունայե-
լին—կարծես լավ մարդ ե և քաղցր ել ձայն

ունի։ Զպատմի՞նըան իր ցավը. ով ե իմանում,
կլողճա. . . Հրեն կարմիր-բանակայինի աստղն ել
ճակատին ե, սա յել անշուշտ կոմմունիստ ե,
ինչպես իրենց իվանը։

— Ընկեր Դունայել, մի պստիկ պատառ հաց
չունեք։

— Ինչի՞դ ե պետք։

— Խիստ շատ եմ ուզում ուտել, վախում
եմ հիվանդանամ։

Բայց Դունայեն ուրախ ե։

— Ինչի՞ յես վախում։

— Մայրս տանն ե մնացել. յեթե չվերա-
դառնամ, նա յել կմեռնի, պստիկ յերեխեքն ել։
Ոգնեցեք ինձ այս զրությանս մեջ...

Դունայել մի մատով բեղերն ե քորում և
ժպտում ե։

— Ե, ի՞նչ արած։ Պետք ե ոգնել, յերբ վոր
դու այդպես հանդուգն ես։ Դե կամաց-կամաց
արի յետելցա։

Յերազ ե թե արթուն։

Յեկան որտա-չեկա, Դունայեն ասում ե իր
ստորագրյալին։

— Ընկեր Սիմակով, այս տղային պետք ե
կերակրել և կոխել գնացքը։ Թող մի չորս կա-
յարան դնա։

ԶԵ, յերազ չե:

Միշկային տվին չորս կտոր հաց՝ և մի աման
սուալ դրին առաջն ու իրանք ել ծիծաղում են:
— Կեր, Միխայլա Դոդոնով, մի քաշվի
Հանդուգն կինես՝ չես կորչի: Դու անկուսակցա-
կան ես:

Բայց Միշկան ուրախությունից գդալը չի
կարողանում պահել:

— Մեղանում բջիջ կա:
— Գնում ես այստեղ:
— Մին-մին գնում եմ: Մեզ մոտ իվանը
կոմմունիստներից ե, նա գնում ե:

Ընկեր Դունայել մի մատով քորում ե
բեղերը և Միշկային ե մտիկ տալիս:
— Դու լավ գյուղացի յես, Միխայլա Դոդո-
նով: Լավ սրբի բոլորը...

Սովոր Միշկան ընկավ տաք կերակրի վրա—
ձեռաց քրտինքը տվեց ամբողջ մարմնին, գժվար
և շնչելը միքիչ ավել ներս ածեց: Քթից ու
ականջատակերից քրտնքի կաթիներ կախվեցին:

— Հը՞ հիմ՞ վոնց ե: Տեղ կհասնես:
— Կհասնեմ:
— Ընկեր Միմակով, իմ անունով նստեցրու
սրան գնացքը: Շուտով գնացքը կդնա Տաշքենդ:
Զարդանալի մարդիկ են:

Մեկ տեսար՝ իրենք են կալանավորում, մեկ
տեսար՝ իրենք են գնացք նստեցնում: Կամ Միշ-
կայի ցավու այստեղ ոգնեց, կամ իսկապես մի
այսպիսի ժողովուրդ կա...

Ընկեր Միմակովը բաց արեց վագոնի դըռ-
ները թե չե՝ ձեռաց տասը գյուղացի դեմք յե-
ան: Մեծավոր ե, ինչ ուզենա՝ կանի:

— Այս տղային նստեցրեք ձեզ մոտ:
— Տեղ չկա, ընկեր, Ամենայն բավակա-
նությամբ...

Բայց Միմակովն ինքն ել դիտմամբ ձեռ-
ցնում ե:

— Չի կարելի, ընկերներ, ինձ հրամայված
ե նստեցնել—պետն ե հրամայել:

Գյուղացիք տեղ բաց արին:
Ամեն կողմից մտիկ են տալիս Միշկային,
աչքերով զննում են:

— Ես ինչ մարդ են նստեցնում իրենց
հետ-սա ինչ պատիվ ե:

17

Գիշեր եր, վոր շարժվեցին:
Միշկան հանգստացել՝ պառկել եր:
Նըան հանգստացրեց տաք կերակուրը. ծո-
ցումն ել չորս կտոր հաց ունի:
Տատի յուրկան ափսոս եր, բայց տոպրակ-

ԶԵ, յերազ չե:

Միշկային տվին չորս կտոր հաց՝ և մի աման
սուպ դրին առաջն ու իրանք ել ծիծաղում են:
— Կեր, Միխայլա Դոդոնով, մի քաշվի:
Հանդուգն կինես՝ չես կորչի: Դու անկուսակցա-
կան ես:

Բայց Միշկան ուրախությունից գդալը չի
կարողանում ոլահել:

— Մեղանում բջիջ կա:
— Գնում ես այստեղ:
— Մին. մին գնում եմ: Մեզ մոտ հվանը
կոմմունիստներից ե, նա գնում ե:

Ընկեր Դունայել մի մատով բոլում ե
բեղերը և Միշկային ե մտիկ տալիս:

— Դու լավ գյուղացի յես, Միխայլա Դոդո-
նով: Լավ սրբի բոլորը...

Սովոր Միշկան ընկավ տաք կերակրի վրա—
ձեռաց քրտինքը տվեց ամբողջ մարմնին, գժվար
ե շնչելը. միքիչ ավել ներս ածեց: Քթից ու
ականջատակերից քրտնքի կաթիներ կախվեցին:

— Հը, հիմի վոնց ե, Տեղ կհասնես:

— Կհասնեմ:

— Ընկեր Միմակով, իմ անունով նստեցրու
սրան գնացքը: Շուտով գնացքը կդնա Տաշքենդ:
Զարմանալի մարդիկ են:

Մեկ տեսար՝ իրենք են կալանավորում, մեկ
տեսար՝ իրենք են գնացք նստեցնում: Կամ Միշ-
կայի ցանկ այստեղ ոգնեց, կամ իսկապես մի
այսպիսի ժողովուրդ կա...

Ընկեր Միմակովը բաց արեց վագոնի դըռ-
ները թե չե՝ ձեռաց տասը գյուղացի դեմք յե-
ան: Մեծավոր ե, ինչ ուզենա՝ կանի:

— Այս տղային նստեցրեք ձեզ մոտ:

— Տեղ չկա, ընկեր, Ամենայն բավակա-
նությամբ...

Բայց Միմակովս ինքն ել դիամամբ ձեռ-
ցնում ե:

— Զի կարելի, ընկերներ, ինձ հրամայված
ե նստեցնել—պետն ե հրամայել:

Գյուղացիք տեղ բաց արին:

Ամեն կողմից մտիկ են տալիս Միշկային,
աչքերով զննում են:

— Ես ինչ մարդ են նստեցնում իրենց
հետ-սա ինչ պատիվ ե:

17

Գիշեր եր, վոր շարժվեցին:

Միշկան հանգստացել՝ պառկել եր:

Նըան հանգստացը տաք կերակուրը. ծո-
ցումն ել չորս կտոր հաց ունի:

Տատի յուրական ափսոս եր, բայց տոպրակ-

ներն այնպիսիներն ել չեյին, վոր նրանց համար
գլուխդ մահու տաս. փոքր եյին և կարկատած:
Յեթե բախտը կը երի և Տաշքենդում գործի կմտնի,
կարելի յե նորերը ճարել: Հիմի նա փոքրիկ չե:
Յուրկայի մասին ել շատ չարժե մտածել: Մեզ-
պեսների համար լավ խրատ ե—բերանդ բաց մի
պահի: Ի՞նչպես կարելի յե բոլոր իրերը մի տեղ
դնել: Այ, դանակը նրա համար չտարան, վորով-
հետև գոտիկից կախ եր: Տոպրակը վոր դներ՝ այդ
ել կկորչեր:

Միշկան ձեռքը դիպցը ծալովի դանակին
և պահեց ծոցում: Փորը պնդացը գոտիով,
հետո միտքը փոխեց: Ավելի լավ ե՝ գոտիկի վրա
լինի դանակը, միայն թե թոկը չկտրվի: Հիմի
այսպիսի դանակ չի գտնվի:

— Ածելի յե: Ինչ փայտ ասես՝ կկտրի:

Կարելի յե պիջակը տանել շուկա: Յեթե
կնկա յուրկա առնում են, պիջակ ել կառնեն,
յեթե կարիք ունեն: Զարժե հռւսահատվել: Մի
պիջակ, մի դանակ, մի զինվորական գոտի: Յե-
թե այնտեղ իսկական գործարաններ՝ չկան՝
գդակն ել առնող կլինի: Պիջակին՝ խոսքի՝ յերկու
փութ, գդակին ու դանակին՝ կես փութ:

Լապատինո գյուղը յեկավ մոտովն անց կա-
ցավ, աչքի առաջն յեկավ սոված խրճիթը, հի-

վանդ սոված մայրը մեջը պառկած: Սպասում ե,
վոր Միշկան հաց բերի: Յաշկան բոստանում ճընճ-
դուկի յե ման գալիս: Վոչ մի կերպ գլխի չի
ընկնում չարդախի տակի լծաղեղը վերցնելու:
Սարսափելի սիրում ե փայտ տաշել—տնաբույս
ատաղձագործ ե, լավ կլիներ արհեստի տալ, բայց
այսպիսի տարում վհրտեղից: Հաղիվ հազ անու-
սում զիմանում են: Յեթե Միշկան Տաշքենդից
վերադառնա՝ առաջին գործն ե ցանքսի մասին
մտածելը: Կարող ե պատահել, վոր մի ոժան-
դակություն ել կլինի այդ ժամանակ: Առանց սե-
փական անսասունի դարձյալ ստիպված կլինի Տաշ-
քենդին ընկնել, այսքան չարչարվել:

Այսպես մտքում սկսեց տնտեսական հաշիվ-
ներ անել Միշկան մութ, բերնե-բերան լիքը վա-
գոնում, մտքում գցում եր փթերն ու փունաերը,
հիշեց Մերյոժկային:

— Վատ եր, ուժ չուներ:
— Իսկ դժւ:
— Յես քիչ ավելի պինդ եմ:
Այդ ժամանակ ինչ-վոր մի գյուղացի բոթեց
վոտքով:
— Այ տղա, ուր ես գնում:
Միշկան ձայն չհանեց:
Դյուրղացին ելի վոտքով բոթեց:

— Քնած ես, ի՞նչ ե:

Միշկան ձևացրեց թե քնած ե. թող կարծեն, թե քնած եւ կարող են իր մասին խռուել. հետաքրքիր եւ:

Իսկ գյուղացին կովսւմ եւ մյուսի հետ:

— Ինչու նստեցրինք ես «ընկերին»: Դուրս շպրտենք՝ դնաւ:

Մյուս գյուղացին ասում եւ.

— Սրան դուրս գցել չենք կարող: Որտաշեկան եւ նստեցրել:

— Ինչներիս եւ որտաշեկան: Մենք ենք բռնել վագոնը, մենք ել պիտի մտածենք նրա մասին: Լավ եւ կարգին մարդու նստեցնենք, նա կվճարի. թե չե՞ սրանից ի՞նչ կարող ենք առնել:

Միշկան ձեռը խողովակ եւ արել ու ականջ եւ դնում:

— Միթե եղակես իրավունք ունեն—վագոնից դուրս գցելու:

Դարձյալ մյուս գյուղացին առաջնին ասում եւ:

— Ավելի լավ ե՞ այս տղայի հետ գործ չունենանք: Սատանան զիտե դրա գլուխը, ով ե իմանում ով եւ կարելի յե՛ որտաշեկային բարեկամ եւ գալիս: Փորձի դուրս գցել, ել յախեղ չես աղատի:

Միշկան ականջ եւ դնում մթան մեջ ու ժպտում եւ:

— Ահա, քիչ վախում եք:

Գյուղացիք վիճում են, թե ինչ անեն Միշկային, բայց Միշկան սուտ խոմքացնում ե, իբր թե չի լսում:

— Կովեցեք դուք: Յես հիմի ձեր միաքը զիտեմ...

Ելի այն մյուս գյուղացին ասում եւ առաջինին.

— Դուրս չենք անիւ: Բայց առավատ դուրս վոր կզնա, ել ներս չենք թողնիւ:

Միշկան խոմքացնում եւ:

— Այդպէս կարծեցեք: Իսկի դուրս չեմ գա, յերկու որ կղիմանամ...

Մի ժամ անց գյուղացիներն ել գլուխ գլսի դրին, մեղմացան:

Ծանր նստեց մթությունը բերանը խցած վագոնի մեջ, իճճեց ձեռ ու վոտ: Կնանիք ել դադարեցին դես-դեն ընկնելուց:

Ծոգեմեքենան սողում եւ թմբերի վրայով, զառիվայրերի վրա բարձր ձչում եւ: Մերթ վազ եւ տալիս միքանի վերստ, մերթ կամաց-կամաց որորվում ե, անիվերը թխթխացնում, և անիվների խաղաղ թխկոցների մեջ հյուսվում ու

Քանդվում են սուտ քուն յեղած Միշկայի քուն
բերող մտքերը:

- Գնում եմ, գնում եմ— մեկ;
- Հաջող, հաջող— յերկու;
- Այդպէս, այդպէս, այդպէս;
- Ապրես, ապրես;
- Դու տեղ կհասնես, տեղ կհասնես;
- Մեկ, մեկ, մեկ;
- Մի վախի, մի վախի, մի վախի;
- Գոտին— դանակը, գոտին— դանակը;
- Մի փութ, մի փութ, մի փութ:

18

Արենբուրգ:

Ամպամած առավոտ:

Քամին թափանցում ե մարմի մեջ:

Նստել ե Միշկան անկյունում, վագոնից
դուրս չի դալիս: Պետք եր մի քաղաք վազել,
«դուրս գնալ»— բայց գիշերվա խոսակցությունը
վախեցնում ե: Վոչինչ, կարելի յե համբերել:

Գյուղացիք խումբ-խումբ նստեցին ոջախ-
ների շուրջը վագոնների մոտ, կախեցին դույլերը:
Մեկը տապակում ե, մեկը խաշում— կաղամբի
հոտը դիպչում ե մարդու քթին: Կնանիք կար-
տոֆիլ են մաքրում, միս են կոտորում, կրակն

են փչում, բորբոքում: Փողավոր ժողովուրդ ե
հավաքվել Միշկայի վաղոնում:

Գյուղացին չորս սեխ բերեց, սկսեց մանր
փողը նորից համբել: Տեսնելով Միշկային ան-
կյունում՝ շուռ յեկավ: Մյուսը տոպրակով թու-
թուն քաշ տվեց բերեց. թութունը ճամպին լավ
կծախվի: Մի գավաթի համար հինգ հարյուր
ոտոբիլ յեն վերցնում. կիրգիզները լափ անհաս-
կացող են: Հանաք-հանաք կարելի յե քառասուն
հազար խփել, ու ինքդ ել ձրի կծխեա:

Յերկու գյուղացի յել սամավար բերին, նաև
նավթի մեքենան, վոր ճաշ յեփեն, ճտքերով
կոշիկներ, յերեք կացին:

Ամբողջ առավոտ ընկած ելին Արենբուրգի
շուկաները, վագոնները բերնե-բերան լցրին տերեւ
թութունով, փշութ թութունով, սամավարներով,
դույլերով, չուգուններով, կացիններով, պիջակ-
ներով, կոշիկներով, յուրկաններով— շարժվելու
տեղ չկա:

Յերոպկա անունով մի պստիկ գյուղացի,
վոր նույնպես Բուզուլուկի գավառից եր, «ամե-
րիկյան» վոսկու մի ժամացույց ճանկը զցեց:
Մեկն ասել եր նրան, թե Տաշքենդում. լավ ե
ծախվում ժամացույցը— նա յել գնեց տասերկու
հազարի:

Նայեց. նայեց ժամացույցին և գլուխը շարժեց: Ժամացույցը կանգնել է, չի բանում: Այս ականջին դրեց, ձախ ականջին դրեց Յերոպկան.— չի բանում: Կորավ տասերկու հաղարը—ջուրն ածեց:

Հիմի նրանից եր վոր ժամացույցը չեր բանում, թէ՞ նրանից, վոր Յերոպկայի սրտում մի ինչ-վոր ցավ կար՝ Միշկային վոր տեսավ վագոնում՝ բարկացավ:

— Ես մւմ տղան ե նստել վագոն:

Գյուղացիք կարծես հենց նոր տեսան Միշկային:

— Ես մվ սրան նստեցրեց մեզ մոտ:

— Դու մւը ես գնում, ընկեր:

Միշկան մտիկ տպեց գյուղացիներին, դրստեց մաշված գղակն ու ասում ե հասակավոր, խսկական գյուղացու նման:

— Տաշքենդ եմ գնում, իմ քեռին ենտեղ կոմիսար ե:

— Բա ինքդ վճրտեղացի յես:

— Յես հեռու տեղից եմ, Բուղուլուկի գավառից:

— Վար գավառամասից:

— Մերը Լավատինսկի գավառամասն ե:

— Քեռուդ աղքանունը վհնց ե:

Միշկան աչքերն ել չի ճպում:

— Նրա աղքանունը մերի պես չի իմ— Դոդոնով ե, նրանը Միտրաֆանով: Նա իմ մոր յեղբայրն ե գալիս, կոմմունիստ ե:

Պատիկ գյուղացի Յերոպկան ասաց.

— Յես ինքս Բուղուլուկի գավառից եմ, ձեր գյուղից քսան վերատ հեռու, բայց եղպիսի աղքանուն չեմ լսել. դու յերեկ սուտ ես խոսում:

Միշկան աչքերն ել չի ճպում:

— Ի՞նչ ունեմ խաբելու: Գնա տեղեկացի որտա-չեկայում, ենտեղ ճանաչում են:

— Ում,

— Քեռի Վասիլին:

Յերոպկան գլուխը շարժեց:

— Միքիչ հավատալս չի գալիս: Քանի տարեկան ես:

— Տամնըչորս:

Գյուղացիք իրար նայեցին, տնտղեցին Միշկային ամեն կողմից:

— Խաբում ե շան վորդին:

Մոտ յեկավ Սեմյոնը, կարմիր մորուքն ու խիստ ձախով հարցըրեց.

— Փող ունես:

Միշկան աչքերն ել չճպեց:

— Ունեմ։
— Ի՞նչքան։
— Իսկ դու ինչքան ունես։
Բոլորը ծիծաղեցին այս անակնկալ պատասխանից։
— Այ քեզ տղա։ Չասես փող ինչքան ունես՝ դրանդ կմտնին։
Գոզգված մազերով Պրոխորն ամենից շատ հավատաց, վոր Միշկան ուժ ունի։ Ավելի մոտ նստեց և սկսեց տնտեսության մասին խոսել։
— Վաղմաց ե քո քեռին Տաշքենդում ծառայում։
— Յերեք տարի յե։
— Այնտեղ կմնամ թե տուն կդառնամ։
Միշկան ծույլ կերպով թքեց Պրոխորի մոռուքի կողքով։
— Կտեսնեմ։ Դուք կդա՛ կմնամ, չի գուր դա՛ կգնամ տուն։ Յեթե քեռիս ձրի մի քսան փութ հաց կտա, մինչև նոր տարի հերեք կանի։
— ՄԵծ ե ձեր ընտանիքը։
Միշկային դուք յեկավ գյուղացիներին խաբելը, անփորձ են, ամեն մարդու հավատում են։ Դրստեց հայրական մաշված գդակը, սկսեց պատմել ջերմ, ուրախ ձայնով։ Նրանց ընտանիքը մեծ չե, մայրն ե և յերկու յեղայրը։

Հեկայումն եր ծառայում յերկու տարի—կոմմունիստներից եր։ Նրան սպանեցին սպիտակ բուրժույները, հմտի դրա համար իրանց թոշակ են ուղարկում։ Իսկ այն մարդը, վոր Միշկային նըստեցրեց վագոն, իր հոր ընկերն ե, ամենազլխավոր պետը։ Նրանից նամակ ունի Միշկան, պիտի տանի Տաշքենդում ապրող քեռուն, վորը այնտեղ կոմիսար ե, Այդ քեռին ել Միշկայի մոռը նամակ ե ուղարկել՝ թե թող, ասում ե, տղան գա ինձ մոտ, յես նրան լավ ծառայության կըդնեմ և հաց կուզարկեմ առանց արգելքի։ Յերկու անգամ Լապատինից գյուղացիք գնացին նրա մոտ։ Քեռին նրանց տերության թուղթ ե տալիս—և վոչ վոք նրանց ձեռ չի տալիս։ Վորին բռնում են, վորի ունեցածը ձեռից առնում են, բայց այս գյուղացիք հենց վոր ցույց են տալիս քեռու կնիքով թուղթը՝ մազին դիմչելու իրավունք չունեն։

Պրոխորը լավ ականջ դրեց Միշկայի հերիաթներին և նախանձեց։

— Դու, յերեսում ե, կարգին մարդ ես։ Պետք ե քեզ հետ միքիչ բարեկամանալ։

Միշկան աչքն ել չի ճպում։

— Ի՞նչ բարեկամանալու բան կա ինձ հետ։ Կպատահենք Տաշքենդում—կողնեմ։

— Ի՞նչպես:
 — Քեռուս միջոցով:
 Պրոխորին ձեռաց ջերմացրեց այդ հույսը,
 և նրա ձայնը քաղցրացավ:
 — Հա, լավ կլիներ, այ տղա... դու ինքդ
 հասկանում ես, թե վոնց են հիմի գործերը...
 ունեցածներս խում են:
 — Ինձ հետ վոր լինես՝ չեն խլի:
 Այստեղ մի ուրիշ գյուղացի մոտ նստեց
 այս լավ ընկերությանը. խիստ հաճելի յեր ականջ
 դնելը:
 — Այ տղա, ինչու վեր չես գալիս վագո-
 նից:
 — Ի՞նչ կա վոր:
 — Միքիչ վոտներդ բացվելու համար:
 Միշկան ժպտում եւ:
 Ամբողջ որն աղքատները ման եյին գալիս
 վագոնե-վագոն. կնիկ մարդիկ, յերեխեք, բորիկ
 գյուղացիներ, հավաքում եյին դեն զցած վոս-
 կըրները, վագոնների դռներից մտիկ եյին տալիս
 իրենց սարսափելի, փոս ընկած աչքերով. Լաց
 եյին լինում, հեկեկում, ձեռ մեկնում. Միշ-
 կան յերկյուղ զգաց նաև ուրիշների սովոր ցավի
 վրա. Շնուտ պետք եւ հեռանալ այստեղից:
 Դեռ լավ ե վոր գյուղացիք հավատացին իր

խոսքերին, թե չե թե վագոնից դուրս կշպրտեն—
 դու ան բանը, ել պրծար:
 Իրիկնադեմին ուզեց «դուրս գնալ», բայց
 հնար չկար դուրս գալու:
 Միշկան ատամները սխմեց, սկսեց փքվել,
 քիչ մնաց աղիքները արաքվելին. Հիմար, ջուր
 շատ խմեց այն կայարանում. Հիմի յեթե շատ
 ել համբերի ու «դուրս չգնա»—կարող ե վնաս-
 վել:
 Շատ շուռումուռ յեկավ Միշկան, փորը
 բռնեց, փքվեց, շունչն իրան պահեց, ատամները
 սխմեց, բայց տեսնում ե, վոր դիմանալ չի կա-
 րելի. Զորս կողմը մտիկ տվեց, տեսավ վոր ժո-
 ղովուրդ շատ կա: Մենակ յերկու կնիկ քամակ-
 ներն իրեն արել, նստել են, մեկ ել մի գյու-
 ղացի, «վոր զքերովքեմ» ե յերգում:
 Ուսը դեմ արեց գոներին ու, իբր թե կա-
 յարանին ե մտիկ տալիս, սկսեց կամացուկ
 բաց թողնել, այնպես վոր ձայն չհանի:
 — Փառք աստծու, պրծա:

— Մաշինիստը չի ուզում գնալ, Յետեկին-ները փող են հավաքում: Յեթե եստեղ նստենք-մնանք՝ թանգ կնստի:

- Ի՞նչքան ե պետք:
- Մարդագլուխ հարյուլ մանեթ:
- Այ շնու շան վորդիք:
- Կամաց, իվան քեռի, ուշունց մի տուր: Եստեղ նստել-մնալը ավելի թանգ կնստի:

Գյուղացիք չորս բոլոր արին, նստեցին մութ, լեփ-լեցուն վագոնում, ցցեցին իրենց թափահարվող մորուքները, կարծես մազները զզզզված կախարդներ լինեն: Ակամա քանդեցին շալվարների կոճակները, դողդոջուն ձեռներով գուրս հանեցին խորը տեղ թագցրած տասանոցները վարտիկների միջից: Թանգ արժեք գյուղացու կոպեկը, Մթության մեջ շխշում են մանեթները, թափահարվում են վեր ցցված մորուքները, մեկը մյուսին ե բոթում:

- Ամենքը տվին փողը:
- Ամենքը:
- Բա են տղեն:
- Ապա մի զարթեցրաւ դրան:
- Եհել, ալ տղա, փողը տնւ:

Միշկան ուզում ե զլուխը թագցնել տոպ-րակների մեջ, բայց վոաները տնկվում են:

Վոաները խոթում ե տոպրակների մեջ, բայց զլուխը դուրս ե մնում, Գյուղացիք ել ագռավ-ների պես բաշբաշում են ամեն կողմից:

— Լսում ես, այ տղա:

— Փողը տնւ:

Յերկար մտածել չի կարելի այլև. գլխի կընկնեն, և մտածել ել չի կարելի: Գլուխը բարձրացրեց Միշկան ու իբրև թե ակամա ձեռը կուեց գրպանը:

- Ո՞վ ունի մկրատ:
 - Ինչի՞դ ե պետք:
 - Փողերը աստափին ե կարած:
 - Մարիա, դանակը տնւ որան:
- Միշկան շոշափելով փնտուեց գրպանում դրած թուղթը, վոր վերցրել եր այս կայարանում, և բարձր ասաց՝ ցնցվող ձեռը մեկնելով.

— Ո՞վ ե հավաքում փողը: Բոնի:

— Ի՞նչքան ե:

— Հարցուր:

Մութ վագոնը փրկեց:

Յերոպկան Միշկայի թուղթը դրեց քրտընքոտ բուռը և վաղեց մաշինիստին գտնելու:

Միշկայի զլուխը պտույտ յեկավ ուժեղ հուզմունքից և սիրտն ուրախ բաբախեց:

Համա թե ժողովուրդ ե, Քեռու մասին պատ-

մեց—հավատում են։ Փողի աեղակ թուղթը կոխեց
բուռը—հավատում են։ Կամ Միշկան այդպիսի
բախտ ունի, կամ գյուղացիք շատ անփորձ են։
Զարմանալի բան եւ։

Բայց ինչ վոր ե՝ սարսափելի յեւ։

Ապա վոր Յերոպկան վերադառնա ու ասի.
— Դուրս գցեցեք ես ժուլիկին եստեղից։

Նա իմ բուռը թղթի կտոր դրեց…

Միշկան ահից գլուխը սխմեց յերկու ձեռ-
ների մեջ ու մտածում եւ Համ ծիծաղն ե գա-
լիս Յերոպկայի վրա, այդ բուզուլուկցի գյու-
ղացու վրա, համ ել վախից մարմինը փշաքաղ-
վում եւ։

Յերոպկան վերադարձավ ու փախում ե
գյուղացիներին։

— Վերջացըին ես շոգեմեքենայով յերեք-
հարյուր վերստ կգնանք առանց կանգնելու Խիստ
լավ մեքենավար պատահեց։ Յես, ասում ե, ըն-
կերներ, ձեռաց կթոցնեմ ձեզ, քանի վոր հաս-
կանում եմ, թե ինչ դրության եք։

— Ասել ե՝ լավ նշան դրիբ։

— Հենց իսկը նշանին։

— Եղ լավ բան եւ։

Միշկան ել մթան մեջ ժպտում եւ։

— Եղ խիստ լավ բան եւ։

Լուռ են ու արձակ կիրգիզական տափաս-
տանները, սխմել են իրենց մեջ հին խարխուլ
շոգեմեքենան, չեն թողնում առաջ։ Սա պտտե-
ցնում ե իր պողպատե արմունկները, կարծես
թավալվում ե միւննուն տեղում և խռպոտ ձայ-
նով ոգնություն ե խնդրում։ Հեռւմ ե, թանձր
շոգի յեր բաց թողնում, վոր կարծես ճերմակ
ամպ լինի։ Հալվում ե ճերմակ շոգին, փաթաթ-
վում ե ծխաններից չելնող սև ծխի մեջ։ Թխկում
են անիմսերը, դողում են վագոնները։

Առաջ չեն թողնում գնալու կիրգիզան տա-
փաստանները և իրենց ընդարձակությամբ բռնտծ
պահում են գնացքի ծռված պոչը։ Միայն սարի
հանդեպ գնալիս շոգեմեքենան կատաղի վրա յե-
սլրծնում, գլուխը ծռում ե զիգզագներում, յերկու
կես ե լինում, բարակ ոձի պես պտտվում։ Ճըն-
շում ե կամուրջիկները խաղացկոտ անիմսերով,
փնչում ե, տաքանում, փալուն արմունկներով
արագ աշխատում։ Վախկոտ նապաստակի պես
գլուխը դուրս ե ցցում բլրակների վրայից և
գարձյալ ծերուկի նման ուժ տալով բաշում ե
կանդ առած պոչը։

Միշկան ուրախանում ե՝ նայելով կիրգիզան
տափաստաններին, հեռու հովտից բարձրացող

ծխին, ահազին ուղտին, վոր բարձր բռնել ե իր
փոքրիկ գլուխը: Ուղտը մտիկ ե տալիս Միշկա-
յի գնացքին, ծուռ վզի վրայի փոքրիկ գլուխը
դարձնում ե չորս կողմ ու դարձալ սև շրթունք-
ները թագինում փշոտ խոտերի մեջ:

Շրջակայքում վոչ մի գյուղ չկա:

Ճաղատ բլրակներն են ու մեկ ել տափաստա-
նի անզղները, վոր նստում են բլրակների վրա:
Իսկ յերկինքն այնպես ե, ինչպես Լապատի-
նում, նաև արեն ինչպես Լապատինում:

Բաց գոնից հով ե փչում:

21

Կիրգիզներն ոկի յել սարսափելի չեն, մե-
նակ տարորինակ են: Մեռցնող շոգ ե, կայարա-
նում շնչել չի կարելի թեժացած վագոններից,
իսկ նրանք խաշվում են մուշտակների մեջ, և
ամենքն ել մորթի գդակներ ունեն, յերկար ա-
կանջակալներով: Ղովում են վճչ մեզ նման.
Խըլը, բըլը, խըլը, բըլը— իսկի բան չես հասկա-
նում: Ման են գալիս մտրակներով, նստում են
ծալապատիկ, Զեռներով շոշափում են գլուղա-
ցիների պիշակները, անտղում են սամավարները,
թափ են տալիս կանանց յուբկաները:

Վագոններից շատ ապրանք դուրս ածվեց,
բայց ավելի շատ՝ գուգուոց: Արծաթ են փո-

խում թղթագրամի հետ, վոսկի յեն փոխում թղթ-
թագրամի հետ: Տոպրակներից թութուն են հա-
նում, պիշակներ ու յուբկաներ են թափահա-
րում, սապոգներով թխթիսկացնում:

Միշկայի սիրան ուղում ե մի վաղել-գնալ
կայարան, բայց վախում ե. մեկ ել տեսար՝ ու-
շացար գնացքին ու մնացիր: Տեսավ վոր մի կիր-
գիզ ե անցնում մոտով՝ չհամբերեց, հանեց ծա-
լովի դանակը, ցույց ե տալիս: Կիրգիզը կանգ
առավ:

Վերցը Երշկայի դանակը, բաց արեց,
ատամները պապղացնում ե, մատներով դանակի
բերանը փորձում: Միշկան ինչքան ուժ ուներ՝
վագոնից գլուխը դուրս հանելով գոռաց.

— Ծախում եմ:

Կիրգիզն իր լեզվով ինչ վոր մի բան ե բըլ-
բըլացնում, գլուխը շարժում:

Միշկան ավելի բարձր ե գոռում.

— Մի փնտի:

Կիրգիզն ավելի շատ ե գլուխը շարժում:

Միշկան անողնական նայում ե չորս կողմ: Հոնքերը կիտում ե, վոր հասկանալի մի բառ
գտնի, ու զիտմամբ ուռսերեն խոսքեր ե կոտ-
րատում—գուցե ավելի շուտ հասկանա:

— Չորեն, չորեն, մի փնտի:

Մի ոռւս միուս վագոնից կիրգիզերեն ասում
եւ կիրգիզն.

— Մի փութ:

Կիրգիզը բարկացած թքում եւ:

— Ենէ, ուստևս:

Միշկան կամաց հարցնում եւ ոռւսին.

— Ի՞նչքան եւ տալիս:

— Վոչինչ չի տալիս, ուշունց եւ տալիս:

Իսկ յերբ կիրգիզը հեռանում եւ՝ Միշկան գոռում եւ նրա յետեից.

— Կիրգիզ, կիրգիզ, Խըլը, բըլը, խըլը, բըլը: Գդակս գնի:

Գյուղացիք ծիծաղում են Միշկալի վրա, Միշկան ինքն ել եւ ծիծաղում, թե ինչպես ճարպիկ կերպով կիրգիզերեն սովորեց խոսել: Զի համբերում, չի կարողանում նստել, մի ըռպելից հետո դուրս եւ թոշում վագոնից: Մեծ չուգուներից տաք շշիկ հոտը քթին եւ խփում: Վաճառուհիները չուգուների գլխին կանգնած՝ գոռում են.

— Տաք շշի, տաք շշի:

Յերկաթե թերթերի վրա խորոված վիալծաղներ են դրած, ուղտի գլուխներ, վոչխարի փորտիք, խաշած ձուկ: Հրապուրում են լեռացրած կաթի չետվերտանոցները, հացի հոտերը սիրտ են տրորում:

Թափի եւ տալիս Միշկան իր հայրական հնամաշ գդակը, ցույց եւ տալիս դանակն ու: գոտին:
— Գնեցեք, գնեցեք:

Մտիկ եւ տալիս վոչխարի փորոտիքներին, կանդ եւ առնում:


— Մոքիր, սոված եմ, վողորմություն տուր: Վաճառուհին տանում-բերում եւ շերեփը թե չե՝ Միշկան ծլկում եւ ամբոխի մեջ, վազ եւ տալիս կիրգիզների չորս բոլորը: Կիրգիզները չորս կողմից պաշարում են ու ախալիսի աղմուկ են բարձրացնում, վոր ինքը Միշկան ել ուրախ չեղքա համար: Մեկը դանակն եւ քաշում, վոր տանի, մյուսը՝ գդակը: Կիրգիզներից մեկը, ամենից սարսափելին, սկ ատամներով մեկը՝ մինչև անգամ ձեռը զցեց նրա պիջակին: Բլբացնում եւ, հանվեցնում նրան, վոր պիջակը չափի վրան: Միշկան գոռալով ասում եւ կիրգիզներին.

— Եժան չեմ տա:

Կիրգիզը վրան քաշեց պիջակը, իսկ այդ ժամանակ գնացքի վագոնները ցնցվեցին...

Միշկան պիջակը խլեց կիրգիզից, բայց տեսնում եւ, վոր դանակը չկա:

Դանակը գտնվեց - հիմի յել գոտիկն են իրար ձեռից խլխում:



Բ.

Քիչ եր մնում Միշկան լաց լինի բարկությունից:

— Դեսը տվեք, շնուռ, ժամանակ չունեմ:
Բայց վագոնները շարժվում են:
Հենց ուղիղ աչքի առաջը շարժվում են:

Անիմսերը պտտվում են, պտտվում ե ամբողջ գետինը, ամբողջ կայարանն իր կիրգիզներով միասին պտտվում ե: Վազում ե Միշկան աջ կողմից, իսկ վազոնի գոները բաց են ձախ կողմից: Յեթե մտնի վագոնների տակ—անիմսերը կջախջախեն: Վազ ե տալիս Միշկան ինչպես մի փոքրիկ քուռակ մեծ չուզունե ձիու յետեից: արեխների քթերը քսվում են գետնին, պիջակն ուսերից աղյուսների պես կախ ե ընկած: Վուները չեն վազում, ծալվում են: Բաց արած բերանը ծանր շնչում ե—ոդ չկա:

Աչքով ընկավ սանդուխը, ձեռը գցեց յերկաթե կոթին—բայց գնացքը թափով առաջ նետեց նրան: Կարծես զլուխը՝ պոկվեց, կարծես վոտները յետեռում մնացին. Բայց զլուխն ու ձեռներն ահա կախ են ընկել յերկաթե կոթից: Միշկալի մարմինը քաշ ե տալիս ուղիղ անիմսերի տակը, ինչպես տիղմը քաշում է խոր տեղերը: Խշտում են անիմսերը, ուզում են յերկու կես անել, կտոր-կտոր պատառտել: Միշկան



թափի ե տալիս ծանրացած վոտը, իսկ վագոններն
ավելի արագացնում են ընթացքը, ծանր տրեխ-
ներ հագած վոտները կշեռքի ծանր քարերի պես
քաշում են ցած, և վոչ մի հնար չկա սանդուխի
վրա դնել: Թե ձեռները բաց թողնի՝ գլուխը
կզարկի քարերին, յերկաթե ռելսերին:

- Մնաս բարով, Տաշքենդ:
- Մնաս բարով, Լապատին գյուղ:
- Մահ:

Հիմա յեթե Միշկայի ձեռները պոկվեն՝
դնաց Միշկայի գլուխը: Մեծ կտորն ականջը
կմնա:

Բայց յերբեմն ել ուրիշ տեսակ ե պատա-
հում, յերբ մարդ չի ուզում մեռնել:

Միշկան ել չեր ուզում մեռնել:

Նա հավաքեց իր վերջին ուժերը, բոլոր
ջղերը լարեց յերկաթե լարի պես, վոտներով շո-
շափեց սանդուխը: Դալարվեց, շուռ յեկավ մեջըը
դեպի ցած և արդեն հիմա հեշտացավ քարի պես
ծանրացած քամակը պահելը:

— Հիմա չեմ ընկնի:

Միքիչ ուրախացավ, բայց հիմա յել պա-
տրշգամբից մի մարդ ե բարկացած մտիկ տալիս:
Նա ինչ վոր բան ասաց, բայց վագոնների անիվ-
ները խլացըին ձայնը, ձմեցին իրենց շտապող

թիսթխկոցներով։ Միշկան չհասկացավ, միայն
աղերսող աչքերով նայեց բարկացած մարդուն։
— Քեռի՛, բռնի՛։

Վագոնի անիվսերը Միշկայի լսոսքերն ել
խլացրին, կուլ տվին իրենց թիսթխկոցներով և
ականջի մոտով թոցրին մի կողմ. Մարդը յերկար
ժամանակ նայեց կախ ընկած Միշկային, հիշեց
հրահանգը—թե չպետք ե անտոմսավորներին
նստեցնել վագոն։

— Թող ջարդուփշուր լինի։

Իսկ հետո (իսկ սա վոր բոլորովին անսպա-
սելի) ձեռը զցեց Միշկայի ուսագլխից, քաշ տվեց
պատշաճամբը։ Կանգնեցրեց վոքրիկ սնդուկի մոտ,
վորի վրա լապտեր կար, ու բարկացած ասաց.

— Զարդվել ես ուզում։

Միշկան լուռ եր։

— Ումնից ես։

— Լապտախն գլուղից եմ։

— Ում հետ ես գնում։

— Հորս հետ։

— Բա հերդ ուր ե։

— Են մեկել վագոնում։

Մարդը խիստ աչքերով նայեց Միշկային ու
շուռ լիկավ։

— Զահլես տարաք դուք։

Միշկան լուռ եր։

Նստել եր նա վոքրիկ սնդուկի մոտ մեծ
տրեխներով վոտները մեկնած ու չեր կարողա-
նում սաստիկ վախից շունչ քաշել։ Դուրս ընկած
թևերը կոտրատվում եյին, գլուխը շուռ եր գա-
լիս, քիչ եր մնում վախի։ Ուզում եր պառկեր,
պառկած մնալ, այնպես վոր մարդ իրան ձեռ
չտար։

22

Գիշերն ստիպված յեղավ իջնելու գնացքից։
Կայարանում դալուկ լուչսերով վառվում
եյին լապտերները։

Մթնում մարդիկ եյին խլլառում։

Նրանք շարժվում եյին ահազին ամբոխնե-
րով, մեկմեկու բոթում, կորչում յերեխաների
աղմուկի ու սուր ճիչերի մեջ։

Սոված գյուղացիները նախիրների պես պառ-
կում եյին, լաց լինում, աղոթում, հայնուում։

Կնանիք, գլուխները փաթաթած,

կամ զըզըզված՝

կույր բուերի պես իրար եյին կպչում։

Նրանք քաշ եյին տալիս գրկների ու իրենց
փեշերից կախ ընկած յերեխաներին։

Հոգնած վոչխարների պես կնանիք վեր ելին
թափվում վագոնների անիվսերի մոտ ու յերե-
խաներին զցում բարակ պաղած ոելսերի վրա։

Այդ յերեխաները թափված ելին շան լակուների պես,

մերկ կամ փալասներով փաթաթած,
նրանք նվում ելին խռպոտ ձայներով,
վոմանք ել բարձրաձայն ճչում՝ վանելով
մահին:

Մի ցավ ել ավելացավ այն սոված ու չար
ամբոխին, վոր բերնե-բերան լցվել եր փոքրիկ
կիրգիզյան կայարանը։ Մարդկային տանջանքի
մի կաթիլ ևս յեկավ լցվեց, վոր վոչ վոքի պետք
չեր, վոչ-վոր չեր նկատում։

Կոնդուկտորը թափահարեց Միշկային և ու-
րախ ասաց.

— Քեզ մինչև այստեղ բերի, ասա՞ փառք
աստծու։ Հիմի գնա փնտոի՛ հորդ։

Միշկայի հայրը հեռու յեւ։

Հեռու յեւ Միշկայի մայրը։

Միշկան գնաց ընկավ ոտար ու սոված նա-
խիրը, վոր բերած հավաքած եր զանազան գյու-
ղերից ու աեղերից և ծանր հոգոց հանեց։ Սկսեց
փնտուել այն վագոնը, վորի մեջ նստեցրեց իրեն
ընկեր Դունայեր։ բայց զիշերը բոլոր վագոնները
միատեսակ են, բոլոր վագոնները փակ են ցորեն
լցրած ամբարների պես։ Փակվել, շրջափակվել ե
վողուտ ցավը և վոչ վոքի չի ուզում ներս թողնել։

Միշկան փորձեց մտնել մի վագոն, բայց
այնտեղից մեկը նեղ ձեղքից գոռաց.

— Ի՞նչ ես ուզում։
— Եստեղ մերոնք են նստած։
— Անց կաց։ Զերոնք գնացին, մնացին մե-
նակ մերոնք...

Միշկան թխկացը մի ուրիշ վագոն - չպա-
տասխանեցին։

Ցերրորդ վագոնից բղավեցին.
— Ի՞նչ ես մարդոց անհանգիստ անում։
— Մի թողնեք ներս ամեն զիբիլի։

Ցերկու անգամ Միշկան պտտվեց յերկար
ու ձիգ գնացքի շուրջը, կուչ յեկավ, աչքերը
թարթափեց, նստեց։

— Անխիղմ շներ։ Հո չեմ ուտի ձեր վա-
գոնները։

Անց կացավ։
Բայց տեղ չունի գնալու։
Մութ վագոնները կանգնած են յերեք շարք։
Վողջ զիշերն ել գնաս մոտենաս՝ բաց չեն անի,
վողջ ցերեկն ել գնաս՝ բաց չեն անի։ Ամեն տեղ
վիտում են մարդիկ.

վագոնների տակ,
վագոնների յետեւ,
կալարաններում,
կալարանի յետեւմ։

Մարդ ել չկա, վոր գնաս մոտը, ցավդ
պատմես:

Յավը դուրս ե պրծնում Միշկայի տխրած
աչքերից, բայց Միշկան լաց չպիտի լինի. նա
լավ գիտե այդ: Վոչ վոք չի լսի նրա գանդա-
տավոր ձայնը, վոչ վոք չի վերցնի նրա վայր
գլորված արցունքը:

Պետք ե համբերել,

Հանգուցյալ հայրն ել միշտ ասում եր.

— Արցունքներով ցավին դարման չես կա-
րող անել:

Միևնույն ե՝ մի անգամ վոր Միշկան ճամպա
յե ընկել՝ պետք ե տեղ հասնի: Հիմի, հավանո-
րեն, քիչ ե մնացել, յետ դառնալ ել չի կարելի...
Յեթե ճամպին մի մեծ քաղաք պատահի՝ կարե-
լի կլինի դանակին ու գոտիկը ծախել: Միշկան
սկսեց հաշվել, թե վոր որը դուրս յեկավ տանից,
բայց խառնեց հաշիվը. յեթե այսոր չորեքշաբթի
յե, ասել ե՝ տասը որ ե, իսկ յեթե ուրբաթ ե՝
տասերկու որ ե:

Կայարանի յետել մի տղա գլուխը մինչև
ուսերը կոխած աղբի արկղի մեջ՝ խառնըուսո-
րում եր: Միշկան կանգ առավ նրա մոտ և հե-
տաքրքրությամբ մտիկ տվեց նրան:

— Դու եստեղ ի՞նչ ես անում:

Տղան չպատասխանեց:

Անտարբեր մտիկ տվեց նա Միշկային ու
դարձալ զլուխը մինչև ուսերը՝ կոխեց արկղը:
Հանեց մի հատ վոսկը, դրեց զրպանը: Միշկան
ել մոտեցավ արկղին մյուս կողմից և նույնպես
սկսեց շտապով փորփրել արկղը: Յերկուսը լուս
խառնխառում եյին արկղը, բռնելով իրար ձեռ-
քից: Մի բոպելից հետո Միշկան վոտներով մտավ
արկղի մեջ: Տղան չարացած քաշեց նրա թեքից:
— Յես քեզ կանչեցի եստեղ:
— Յես ինքս յեկա:

Միշկան արկղի մեջ փոքր եր յերեսում. մի-
այն գլուխն եր դուրս ցցված: Տղան ուզում եր
կամ խփել նրա դուրս ցցված գլխին կամ գդակը
շպրտել մի կողմ: Այդ ժամանակ մոտ վագեց
մի շուն՝ բերնում մի հաշգին հացի կտոր: Տղան
հացը շան ատամներում տեսավ թե չե՝ ուլացավ
շան յետեկից ձեռները թափահարելով: Միշկան
ել արկղից դուրս թռավ:

— Աղյուսը նետի:

Աղյուս չկար ձեռքի տակ:

Միշկան ձեռը դցեց ոելով կտորին, բայց
չկարողացավ բարձրացնել:

Յերկու քաղցածները վազ եյին տալիս յեր-
կու կողմից, բայց շունը՝ քամակը վեր վեր

թոցնելով՝ փախազ կայարանի յետևի դաշտը,
թեթև թռավ կայարանի բանջարանոցների ար-
խի վրայով՝ ատամների մեջ գողացած հացի
կտորը բռնած:

Տղաներն ել կանգ առան:
Մութ ու խոնավ բանջարանոցներից ուրիշ
չներ ել մոտ վազեցին:
— Կկծեն, — ասաց Միշկան:
Տղան մռայլ պատասխանեց.

— Մի լավ մահակ վոր լիներ, մեկի վրա
կդնայի:

— Անունդ բնչ ե:
— Տրաֆիմ:
— Յետ արի:
— Սպասի, հիմի նրանք կսկսեն կռվել:
— Ինչու:

Տրաֆիմը չպատասխանեց:

Նա կանգնած եր հազին մի շապիկ՝ պատա-
ռոտած կրծքով, բորիկ ու անդղակ: Ուսերին
պիջակի տեղակ զցել եր խսիրի մի կտոր՝ բկի
մոտ թոկով հավաքած՝ կապած, և փոքրիկ, չխո-
սող Տրաֆիմն այդ շորերով նմանում եր՝ փոք-
րիկ, ծիծաղելի տերտերի, վոր կարճ շուրջառ ե
հագել:

Շները լուռ հոսոտեցին:

Հետո ղոմոացին, ղնջրտացին, գունդուկծիկ
դառան, թավալվեցին, շտկվեցին, կրկին հար-
ձակվեցին:

Ցերկար ժամանակ Տրաֆիմը նրանց եր
նայում լուռ, անթարթ աչքերով, հետո խուլ,
անդրշիրիմյան ձայնով ասաց:

— Լավ ե շան ատամներ ունենալը:

Միշկան Տրաֆիմին մտիկ տալով՝ մի բոպե
խեղճացավ:

Հիմի կրոնի իրան հենց կռկորդից, շան պես,
տեղնուտեղը վեր կդնի, կիվի պիջակն ու գդա-
կը: Հիմի հարուստներին ամեն տեղ սպանում
են, և Միշկան Տրաֆիմից հարուստ ե:

Միշկայի վախից Տրաֆիմ ավելի մեծացավ
այդ ամայի մեռած, լուսնով լուսավորված ու
շներով լցված դաշտում: Շները հնդից ավելի
չեյին, բայց Միշկային այնպես թվաց, թե
նրանք հազարավորներ են ղնջրտացնող բերան-
ներով, և յերբ իրար գզզեն ու վերջացնեն՝
կսկսեն կայարանի մարդկանց գզզել:

Տրաֆիմն անսպասելի կերպով ասաց.

— Դու շներից վախենում ես:

— Բա դու:

— Յես վոչ մի բանից չեմ վախում:

— Քմնի տարեկան ես:

— Տասնըշորս:

Միշկան կողքանց մտիկ տվեց Տրաֆիմին
և իբր թե փոշնչից չի վախում՝ նույնպես ասաց.

— Յերկուսս մի տարու յենք. յես ել տաս-
նըշորս տարեկան եմ:

— Խաբում ես:

Միշկան, վորպեսզի իրան մեծ յերեացնի՝
միքիչ բարձրացավ թաթերի վրա:

— Շուտով տասնընինդիս մեջ կմտնեմ, Յես
միայն հասակով եմ կարճ: Յերկու փութ կը-
բարձրացնեմ:

— Ի՞նչ կբարձրացնես:

— Ի՞նչ ուզում ես. կշեռքի քար կամ տոպրակ:
Վերադարձան կայարան՝ «ընկերացած»:

Միշկան իմացավ, վոր Տրաֆիմը կազմակ
նահանգից ե, յեղել ե չորս քաղաքներում,
տանից վեց ամիս ե հեռացած ե, ճամպա յե-
ընկել Տաշքենդ: Յեթե հասնի այնտեղ, յետ չի
վերադառնալու: Շատ վատ ե այնտեղ՝ իրենց
կազմում, ուտեղու բան չկա, դրանից ել Տրա-
ֆիմի հայրը վաղաժամ ե մեռել—յերեսուն և ութ
տարեկան հասակում: Յերկու անգամ՝ պատե-
րազմում ե յեղել՝ չի մեռել, բայց սովից փշա-
ցել ե:

Միշկան սկսեց տիմել:

Նա և Տրաֆիմը նստել եյին իրար կողքի, կա-
յարանի նեղ միջանցքում, հենց դռների մոտ,
պատմում ելին իրենց զուղերի մասին, վոր հի-
մա չես իմանում՝ վոր կողմը մնացին: Միշկան
անսիրտ եր պատմում և դժկամակությամբ եր
լուսում: Զանձրացել եր այդ մասին մատածելուց,
ձանձրացել եր ամեն որ միենույն բանը կրկնե-
լուց: Նրա կիսափակ աչքերի առջևից

իբրև մի արձակված ժապավեն՝
անցնում եր Տաշքենդը, չքնաղ քաղաքը.—
կուշտ,

հացառատ,
ժպտացող:
Այնտեղից բարձր բլուրների պես մտիկ
են տալիս

և հացի պատառները,
սպիտակ պատառները,
անջրդի արտի ցորենը,
ջրվող արտի ցորենը:
Յեզ հատիկն այնպես չե, ինչպես մեզա-
նում ե լինում, այլ խոշոր...

Միշկայի մտքերը խանգարելով՝ Տրաֆիմը
բարձր ձայնով շնչաց.

— Դու քանի Փունտ պիտի ուտես:
— Վ, մըրտեղ:

— Յերբ Տաշքենդ հասնենք։ Միշկան բարձրացնելով ծանրացած կոպերը՝ կամացուկ ասաց։

— Շատ։

Մի կնիկ իր յերեխայի հետ յերկար ժամանակ լաց եր լինում։

Գյուղացիք մթնում հազում եյին։

Շները հաջում եյին կայարանի յետեռում։

Տրափիմն ու Միշկան լավ հույսերով իրար սիրտ եյին տալիս։ Խոսք մեկ արին, վոր միասին գնան։ Ականջ գնելով շների հաջոցին՝ Միշկան տեսնում եր ահազին տափաստանը՝ անմարդ ու անընակ, և այդ տափաստանի վրա վազում են սոված շները զնջրացող ատամներով։ Հնկել են խոշոր գզգզված շան վրա, վորի ատամների մեջ հացի կտոր կա՝ ու թափալզլոր են գալիս։ Շան բուրդը վերև ե թռչում ամայի տափաստանում կանգ առած լուսնի տակ։ Վառվում են շան աչքերը, կափկափում ատամները… Շներն իրար գզգզեցին, ուրիշ կողմերից նորերը հայտնվեցին, վայրի վոհմակի պես թափկեցին կայարանի վրա, թափ անցան Միշկայի գլխի վրայով, տրորեցին իրանց տակ։ Հետո վեր բարձրացրին, նետեցին մի կողմ, ատամները գցեցին պիջակին ու գդակին։ Միշկան մահու սարսափով դուրս պրծալ նրանց ճանկերից,

բաց արեց քնած աչքերը. — բան չի հասկանում։ Աղմուկ, գոռոց, հայրոյանք, ծղրտոց, իսկ Տրափիմը կողքին չեւ։

— Շոգեմեքենան բերին։

Տնքոց։ Գոռոց։ Լաց։

— Թողեք մտնե՞նք։

— Նստեցրեք։

— Տըորեցին։

— Աման։

— Տնւը դրա ատամներին։

Զի կարելի մնալ ամայի կիրգիզյան տափաստանի այդ վորքիկ կայարանում։

սովը կուտի,

վոջիլը կուտի,

ցավը կուտի,

հուսահատությունը…

Զեռները գցում են վագոնի կտուրներին, բուֆերներին, սանդուխներին — մենակ թե՛ մի հեռանան այդ սարսափելի, ամայի տեղից։ Զեռներով ել կկախվեն, շպախների վրայով բաշ ընկնելով կգնան՝ ձեռները վագոնի պոչին գցած, մենակ թե՛ մի հեռանան, փախչեն վերահաս սովամահությունից։

Միշկան շուռումուռ յեկավ, պտտվեց։

Տեսնում ե, վոր չի կարող վագոնների մոտի մարդկային հաստ պատը ձեղքել անցնել։

Տատանվում ե կենդանի պատը, շարժում
ե արմունկները, յետ-յետ ե գնում, շպրտում
ե մի կողմ, քաշ ե տալիս մյուս ծայրը։ Ուժ
չկա թոշելու շառաչող կենդանի պատի վրայով,
ուժ չկա նաև պոկվելու նրանից։ Պատը քա-
շում ե, ծծում, պտուտ գալիս կաթսայի մեջ,
խեղդում, ճմլում։

Միշկան վրա ընկավ մի փոքրիկ կանգ
առած շոգեմեքենային, բայց այդ ժամանակ
Տրաֆիմը դեմից սլանում ե խսիրը հագին, այդ
փոքրիկ, ծիծաղելի տերտերի կարճ շուրջառը։

— Մտար։

— Վժըտեղ։

— Վաղ տուր իմ յետեից։

Միշկան սաստիկ ուրախացավ—յերկսով են՝
մենակ չե։

Զեռը գցեց Տրաֆիմի խսիրին ու միասին
վագեցին զյուղացիների, կնիկների ու վագոն-
ների մոտով։ Վագելով մոտեցան մինչև վագոն-
ների պոչը, տեսան վոր զինվոր ե կանգնած։
Մտիկ տվին հեռվից զինվորին ու մարմիննե-
րով առաջ խփվեցին։

— Կանգնի, — ասաց Տրաֆիմը, — պետք ե
կտուրը բարձրանալ։ Փորներիս վրա կպառկենք՝
չի տեսնի մեղ…

Միշկան բարձրացավ Տրաֆիմի ուսին, տե-
սավ վոր կտուրը բարձր եւ։

Միքիչ ձգվեց վոր ձեռը զցի կեռին՝ պոկ
յեկավ, թրմփաց ու վոտներով խփեց Տրաֆիմի
պլինին։

Տրաֆիմը բարկացավ ու բղավեց։

— Կնիկմարդ ես։ Կանգնի իմ տակին։
Միշկան թունդ դիպավ գետնին, բայց լաց լի-
նելու ժամանակը չե։

Կանգնեց Տրաֆիմի տակին, Տրաֆիմ ել
պոկ յեկավ, վոտներով խփեց Միշկայի գլխին։

— Հայդե ուրիշ տեղ—եստեղ չենք կարող։

— Զեռս չանգովեց։

— Արյուն ե գալիս։

— Վաղում ե քիչ։

— Ավաղ ցանի։

Յերբ շոգեմեքենան խլացնելով մարդկային
ձայները՝ սուլեց, Միշկան ու Տրաֆիմը բերանք-
սիվայր պառկած եյին վագոնի կտրանը։ Տրա-
ֆիմը հանգստացած փսփսում եր՝ հոտոտելով
կտրան փոշին։

— Շունչդ տեղն ե։ Հիմի կզնանք։

23

Կիրգիզյան քամին ուժգին պոկում եր
Միշկային ու Տրաֆիմին, ամբողջ ժամանակ ու-
զում եր նետել անմարդ տափաստանը, Յեվ

յերբ նրանք մտիկ եյին տալիս վագոնների կտուր-ների վրա կուացած ու կպած դյուղացիներին և կանանց՝ սրանց թվում եր, թե նրանք լողում են ողում, յերկրի վրա, տափաստանի վրա, և վոչ վոք վոչ մի ժամանակ նրանց չի հասնի, վոչ վոք չի անհանգստացնի։ Միայն մի անդամ Միշկայի սիրտը խիստ ճմլվեց, յերբ դիմացի դյուղացին բդավեց.

— Մեռավ։

Գյուկսը Միշկային արած մի գզզված կնիկ եր պառկել յերեսը դեպի վեր դարձրած և մեռած, բաց աչքերով մտիկ եր տալիս ոտար, հեռավոր յերկնքին։ Բարակ, կապտած քիթը, անշարժ բաց բերանը՝ դեղին մերկ ատամներով տագնապով լցրին Միշկայի սիրտը, շփոթեցին նրա մտքերը, ուժգին բարախեց նրա սիրտը։

Տրաֆիմն անտարբեր մտիկ եր տալիս։

Գյուղացիներն ել անտարբեր կախեցին իրենց մորուքները՝ միտք անելով իրենց հոգսի մասին։ Նրանցից մեկն ասաց։

— Սրան պետք ե վայր գցել, թե չե մի խաթա դուրս կդա։

— Ուր։

— Կտուրից։

Միշկան ականջները սրեց։

Փակելով աչքերը՝ նա սկսեց մտածել Լապատինի մասին, տանը թողած մոր մասին, այնտեղից մտքով վագեց գնաց Տաշքենդ, բայց մեռած կնիկը մերկացրած ատամներով ծածկում եր թե մորը, թե Լապատինը և թե հեռավոր, տանջող Տաշքենդը, վորտեղ յերբեք չես հասնի։ Անհանգիստ նայելով մեռած կնոջը՝ նա ծածուկ փափսաց Տրաֆիմի ականջին։


— Ո՞վ ե սա։

— Սոված ե։

— Պիտի դեն գցեն։

— Ցերեկով չի կարելի — կտեսնեն...

Մի ահագին ամպ բարձրացավ, կախեց արկի յերեսը, սև վարագույրը գցեց գնացքի վրա։ Գնացքն ամբողջ ժողովրդի հետ գնում ե այդ ամպի վրա, սուլոցներով կտրում ե նրան, ճշում, վոռնում, բայց վոչ մի կերպ չի կարողանում հեռանալ նրանից։ Կամ ամպը սխմեց նրան գետնին, կամ ճամպին զարիվեր կա. անիմերը դադարեցին պար գալուց, վագոնները դադարեցին որորվելուց։ Պոչը կամաց քաշ տալով՝ գնացըը գնաց հանդարտ ընթացքով, պատրաստ՝ բոլորովին կանգնելու։ Հանկարծ շըլփաց ծանր, խոշոր անձրևն ահագին սափորից, թըլիթըլիկացը ցեխոտ, տրորված կտուրը, Գյուղա-



ցիք կծկվեցին իրար մոտ: Միշկան ու Տըա
ֆիմն ել անշարժ նստել ելին Տըաֆիմի խսիրի
տակին: Միայն մեռած կնիկը յերեսը վերև
դարձրած, մեռած բաց աչքերով, վորոնց մեջ
անձրևաջուր եր լցվել պառկել եր առաջվա պես:
Իսկ յերբ ահագին ամպը ծվատվեց, և ծվեններն
սկսեցին սողալ տափաստանի վրայով, թափելով
վերջին կաթիլները—վեր կացավ խոնավ, սառը
քամին:

Տըաֆիմը մերկ մարմով դողալով ասաց
Միշկալին:

— Մըսեցի՞ր:

— Բա դժւ:

— Յես մըսեցի քիչ:

— Յես ել:

— Արի գրկենք իրար:

Միշկան քանդեց թաց պիջակի կոճակները,
և Տըաֆիմը խսիրի տակին պինդ գրկեց նրան
գողացող ձեռներով՝ սխմելով փորը փորին,
կուրծքը կրծքին:

Միշկան ել ընկերոջը պինդ գրկեց, պիջակի
փեշերը քաշելով Տըաֆիմի մեջքին, և ցուրտ,
մառախլապատ գիշերին, իրար դեմքի շնչելով,
մահից իրար ազատելով, զնում ելին նրանք
վագոնի կտրանը՝ ինչպես յերկղլիսանի փոքրիկ

կույտ, ձուլված դառած մի աննկուն կամք, մի ձգտում—այն ե՛ պահպանել իրան, ինչ ուզում ե լինի:

- Յես քիչ տաքացա:
- Յես ել,—համաձայնեց Միշկան:
- Միքիչ շունչդ փչի ես թշիս:
- Դու յել իմ յերեսին պիտի փչես...
- Հա...

Մի կարճ վայրկյան յեղավ, վոր յերկսի սըտի մեջ մի անսովոր ուրախություն ընկավ ջերմացած ընկերությունից:

Դա խոսքերով չարտահայտվեց:
Նրանք գնում եյին լուռ, բայց յերկուսն ել զգում եյին այդ ուրախությունը, թե ինչ լավ ե, ինչ աներկյուղալի յե յերկսով...

Յեվ մեռած կնիկը, վոր հիմի այլևս չեր վախեցնում, կարծես ասում եր նրանց.

- Եղպես, տղեք, եղպես...

24

Առավոտյան մի մեծ կիրգիզյան կայարանում ծախում ելին Միշկայի պիջակը:

Տրաֆիմը վերջին անգամ փորձված մարդու պես ասաց.

- Չորս հազար ուզի:
- Կտան:

— Զեն տա՛ կարելի յե պակասեցնել: Առաջնը յես կդնեմ: Դու լավ գովի՞ քո ապրանքը և սուտ ուշունց տուր ինձ, յերբ կսկսեմ պակաս առաջարկել: Իմացանը: Գնա մտի ժողովրդի մեջ:

Միշկան գնաց մտավ շուկայի խայտաբղետ բազմության մեջ՝ հայրական պիջակը ձեռին, իսկ Տրաֆիմը նրա կողքից գնում եր:

— Բարձր գոռա:

Միշկան թափահարեց պիջակը:

— Առեք, առեք, ծախում եմ:

Տրաֆիմը թողեց վոր նա միքիչ հեռանա, ապա մոտեցավ ու բարձրաձայն հարցրեց.

— Կաց: Քմնիսի յես ծախում:

— Դու չես գնի, — դարձավ նրան Միշկան:

— Վարտեղից ես իմանում:

— Փող չունես:

— Իսկ դու իմ փողերը հաշվել ես:

— Հենց ընենց յերեսում ե:

Տրաֆիմը բարկացավ:

— Ե՛յ, լածիրակի կտոր: Ասա վերջնականը—քմնիսի յես տալիս:

— Չորս հազար,

— Չես իջեցնի:

— Քիչ չեր ըլի: Սա ենքան ել հին չի:

Միշկան ու Տրաֆիմը կանգնել ելին իրար

դեմ շուկայի խալտարդետ բազմության միջին, բարձր վիճում ելին, վոր մարդկանց ուշագրությունը դարձնեն պիծակի վրա, բայց վոչ վոք, վոչ մի մարդ չեր ուզում կանգ առնել նրանց մոտ: Մտիկ են տալիս հեռվից ու յերեսները շուռ են տալիս:

Տրաֆիմը գլուխը շարժելով՝ ասաց.

— Խորամանկ շան վորդիք են, չես կարող խարել:

Արդեն ուրախ տրամադրությունն ընկել եր, թվում եր թե պիծակը հին ե, հույս չկա ծախելու, և հուսահատ րոպեյին այնպես եր կարծվում, թե իսկի յել չես կարող ծախել մի հազարի, կես հազարի: Այդ ժամանակ մոտեցավ մի յերիտասարդ կիրգիզիկ, Տրաֆիմից միքիչ բարձր հասակով ու սե, փայլուն աչքերը հառեց տղաների վրա:

Միշկան թափահարեց պիծակը:


— Գնի:

Մի նեղամորուք կիրգիզ շուռ յեկավ, “շըրթունքները սխմեց, տնտղեց պիծակը տակից վրայից ու ոռւսերեն հարցրեց.

— Քանիս ե:

— Եժան եմ տալիս, չնըս հազար:

— Հազար:



Տրափիմը կիրգիզի քամակից դոռաց.

- Ո՞վ ե ես պիջակի տերը:
- Յես եմ, — շուռ յեկավ դեպի նա Միշկան:
- Քմնիսի յես տալիս:
- Զորս հազար:
- Ծախել ես ուղում, թե յեկել ես գլխից դուրս տալու, — խիստ ձայնով հարցը Տրափիմը:

— Ի՞նչ բանն ե, — նույնպես խիստ ձայնով պատասխանեց Միշկան:

— Թե ծախել ես ուղում, վերցրու, յերեք հազար կտամ, ու ել խոսք չլինի... Ուղում ես:

Կիրգիզը մտիկ տվեց նոր գնորդին, թքեց, տաքացավ ու սկսեց մատով աստառը քչփորել: Միշկան վաճառականի յեղանակով ասաց.

— Մի քչփորի՛, ընկեր, կտորը լավն ե, յերկու տարի կհագնես:

Ելի ուրիշ կիրգիզներ մոտեցան, դովոացին, բլբլացին:

- Երկու հազար:
- Զի կարելի, ընկերներ, պակաս չեմ տա:
- Յերեք հազար, հը՛:

Տրափիմն զգուշ կերպով փսփսաց.

- Մի հազար պակսեցրու:
- Միշկան խփեց կիրգիզի ափին ու ինչպես

հասակավոր, իսկական գյուղացի՝ բարձրածայն ասաց.

— Մնաս բարձրվ, պիջակ ջան: Կտորը խիստ լավն եր:

Հացի բանը ել սարսափելի չեր:

Միշկան սրտի մոտ պինդ սխմած բռնել եր այդ հացն ու տանում եր: Աչքերն ուրախությունից փայլում եյին, անհամբերությունից շրթունքները ցնցվում եյին: Ուզում եր հենց տեղնուտեղը, վաճառուհիների մոտ, ուղղակի շուկայում սոված բերանը խոթել մեծ բոքոնի մեջ, առանց ծամելու կուլ տալ, բայց շուկայում ուտելին անհարմար եր. չորս կողմը պտուտ եյին գալիս սոված փախստականները, մտիկ եյին տալիս հացերին սոված, փոս ընկած աչքերով, կարող ելին խել ձեռից, և Միշկան ու Տրափիմը, վոր հիմի արդեն ամենահարուստ մարդիկն եյին, հեռացան կայարանի յետե, տափաստանը ճաշելու:

Բարձր յերկնքից արևը լավ փայլում եր:

Շուրջն սպիտակին եյին տալիս կիրգիզների յուրթերը:

Շները հաջում ելին առանց չարության:

Բայց զլխավորը՝ հաց կար:

Փափուկ, դեռ տաք բոքոնը դրած եր Միշ-

կայի ծնկներին, և դրանից ել թե լայն տափաստանը, թե տափաստանի վրայի յերկինքը, թե ծուխը, թե կիրգիզների սպիտակ յուրթերը քնքուշ, ջերմ, հանգստացնող բաներ եյին թվում:

25

Կայարանում չթողին նստելու Վագոնների միջով, վագոնների կտուրների վրայով ման եյին գալիս զինվորները հրացաններով, վայր եյին գցում տոպրակները, քշում եյին գյուղացիներին ու կանանց, թուղթ եյին հարցնում: Գյուղացիք վազում եյին զինվորների յետեց, խոնարհաբար ցնցում եյին անդրակ գլուխները: Բութ հուսահատությամբ բռնված՝ նորից թըռչում եյին բուժերների վրա, բուժերներից կտուրների վրա, դարձալ ցած եյին շպրտվում և կրկին յեզան պես լուռ համառությամբ գնացքի վագոնների պոչից, գլխից շուռ ելին տալիս ու ելի խցկվում ներս:

Միշկային ու Տրափիմին չորս անգամ քշեցին:

Չորս անգամ զինվորները հրացանների կոթերը թափ տվին ու սպառնալի ճայնով գոռացին:

— Մարդ եստեղից:

Մի փակ տեղ, փչացած վագոնի մոտ նստել եյին յերեք գյուղացի, յերկու կնիկ, մի աղջիկ,

մի ծերուկ և մի մոայլ զինվոր փայտե վոռքով: Նայելով սարքված գնացքին, գյուղացիք մտածում եյին, վոր նրանց ել գուցե կհաջողվի մի կերպ թռչել վագոնների վրա, կախվել, դուրս գալ սարսափելի տեղից, բայց յերբ շոգեմերնան բերին և վագոնները մերկ, դատարկ կտուրներով դանդաղ անց կացան դեպոյի մոտով դեպի տափաստանը՝ գյուղացիներից մեկը հուսահատ ասաց.

— Հիմի կմեռնենք: Առաջ չենք կարող շարժվել, յետ չենք կարող դառնալ: Ո՞ւր գնանք:

— Գնանք կիսակայանը, — պատասխան եց մյուսը: — Այստեղ կնստենք:

Կսանիքն ու աղջիկն անհանգիստ մտիկ տվին հեռավոր, վախեցնող տափաստանին: Նրանք վախենում եյին գնալ, բայց իրեններից ել վախենում ելին բաժանվել:

Նրանք հնազանդ, թուլացած կանգնել եյին քաթանե տոպրակների փոկերը խաչաձև կրծքերին կապած: Սիդորը, բորիկ մի գյուղացի, շըրթունքներով կամաց չփացըեց.

— Գնանք թե չգնանք:

— Գնանք, — ճայն տվեց Յերմալալը:

Նրանք խմբվեցին փոքրիկ, լքված նախիրի պես:

Միշկան ու Տրաֆիմը գառների պես յետեներն ընկան:

Նրանք չհարցըին, թե արդյոք գյուղացիները հետները կվերցնեն իրանց, մինչև անզամ իրար հետ ել լավ խորհուրդ չարին... Պետք եր մոտենալ Տաշքենդին, կուշտ, հայառատ յերկրին, վոր թագնված ե հեռավոր բլուրների յետեր, բայց կայարանում իրենց չնստեցըին, վայր թափեցին վագոնի կտուրից, և նրանք ահա ճամպա ընկան առանց մտածելու, մանր, ուրախ քայլեռով, յերկուդ չզգալով։

26

Լայն տարածվում եր հեռավոր, միրաժի մեջ խորասուղված, հազվադեեպ բլուրներով տափաստանը։ Միայնակ պտուտ են գալիս տափաստանի արծիվները մեռած, գորշացած աղուտների վրա, կրկին նստում են տափաստանի իշխանների հին շիրիմների վրա՝ նման հավատարիմ պահակների, ոև անշարժ աշքերով։ Խոշոր, ձեռ չդիպած գնդածաղիկները ձիգ շարաններով գնում կորչում են ձորակներում, դուրս են պրծնում բլուրների զլիից, անհանգիստ են անում իրենց մեռած մենակությամբ, դարավոր անվրդով հանգըստությամբ։ Բարձրացավ, կրկին իջավ արել, կարճացան կեսորվա ստվերները։

Կայարանը չեր յերեռւմ։

Միայն հեռագրասյան յերկաթալարը դժում եր, և հազվադեպ պատահում եյին շրջված վագոններ՝ ընկած զառիվալըին, նաև թնդանոթի կոտրած անիվներ՝ թուրքեստանից մինչև Սամարա անց կացած քաղաքացիական պատերազմի վերջին հետքը։

Միշկայի ու Տրաֆիմի բանը մյուսներից հեշտ եր։

Նրանք արդեն կերել եյին, խմել, հանգստացել և զրպաններում ել ունեցին հացից մնացած խոշոր պատառներ։ Յերբեմն Միշկան ծածուկ մի փոքրիկ պատառ եր գցում բերանն ու շնչալով ասում եր Տրաֆիմին։

— Մեր յերկու բանը լավ ե գնում, հը։

— Տեղ կհասնենք, — հանգստացը Տրաֆիմը։ — Միայն չպետք ե վախենալ։

Դիմացից մի ծուխ յերևաց։

Մայր մանող արևի տակ գծագրվեց ձգված գնացքի կմախքը, կարճատև փայլեցին շոգեմեքենայի լծակները։

— Գալիս ե, եստեղ ե գալիս։

Հեռավոր գնացքից գյուղացիները նորից անհանգստանալով՝ պատրաստվեցին հանդիպել նրան փոքրիկ զառիվերի վրա։ Վճռեցին կախվել

սանդուխներից, յետևի ըուֆերներից, — միայն թե
գիշերը չմնան այդ սարսափելի տափաստանի
լոռության մեջ:

Զինվորը վշտացած շոշափեց իր փայտե վոար:
— Յես չեմ կարող թոչել զնացքի վրա, ըն-
կերներ:

Կոմիկն ուրախացավ, վոր զինվորը չի կարող
թոչել ու անվստահ ասաց.

— Մի թոչեք, գյուղացիներ, կարող եք
չարդվել:

Նրան չպատասխանեցին:

Գնացքն ավելի ու ավելի մոտենում եր դիք
վոլորքից: Շոգեմեքենան արագ-արագ շարժում
եր իր պողպատե արմունկները, փոնչում եր շո-
գեմեքենայի ծխանը սև բացված բերանով, քըն-
քուշ հալվում եր շոգու սպիտակ ծուխը:

Գնացքը պոստատար եր և միքիչ դանդաղա-
ցրեց իր թափ առած ընթացքը զառիվերի վրա:
Փնչաց շոգեմեքենան — այդ դիք ճակատով չու-
գունե կրտած ձին — մտիկ տվեց հավաքվածներին
ճակատի լապտերների լուսավոր ապակիներով:
Ֆշաց տաքացած շոգին, վոր բաց թողեց մեքե-
նավարը, մի կողմ նետեց կնիկներին ու աղջկան,
վայր գցեց ծերուկին զառիվայրից: Միշկան ինչ-
պես յերազում, լսեց Տրափիմի ձայնը.



— Թոի:

Յեկ դարձալ, կարծես յերազում, տեսավ իր դեմ վագող կանաչ վագոնի սանդուխը, ձեռները մեկնեց և ուշքը կորցրած բարձր բղավեց.

— Այսն,

Առջևում յերևաց Տրաֆիմի գլուխը, ողում շարժվեցին նրա վոստերը: Յերբ Միշկան տեսավ, վոր Տրաֆիմն ընկավ գնացքը, փոքրիկ մարմին մեջ խորը թագնված գյուղացու ուժն ահազին զսպանակի պես բացվեց, առաջ նետեց նրան: Մի սանդուխ, ելի մի սանդուխ մոտով սլացավ: Վագոնների պատուհաններից դուրս ցցվեցին մարդիկ և բոլորն սկսեցին մտիկ տալ գնացքի մոտով վագող մեծ տրեխով տղային, ինչ-վոր մի բան գոռացին, իսկ նա, տաք պնչերը դժվարությամբ բանալով՝ հենց այն ե՛ռզում եր ձեռը գցել վերջին սանդուխին՝ վոր մի անտեսանելի ուժ գետնից պոկեց նրան, վայր գցեց, տրուրեց, նետեց սև ու խոր փոսը...

27

Միշկան նալում ե և տեսնում սև յերկինքը՝ զարդարված խոշոր աստղերով, սև, անծըպտուն տափաստանը և միանգամից չհասկացավ, թե ինչ ե պատահել: Նստած մնաց, կարծես խորը քնից հետո, քորեց քերծված գլուխը, և

հանկարծ սարսափել բռնեց. հեռացան, նրան թողին այնտեղ, նա հիմի վոչ վոքին պետք չե, և վոչ վոք նրան դուրս չի հանի այդ սարսափելի տեղից:

Միշկայի մազերը բիղ-բիղ կանգնեցին մորթու հետ միասին, մտքերը խառնվեցին, աչքերը մարեցին:

Մի ահագին ստվեր շարժվեց ուղիղ նրա վրա: Նա թափ տվեց գլուխը, ստվերը բաժանվեց յերկու մասի, և ամեն մի մասի վրա բըսնեցին ձեռներ, վոտներ և կիրգիզների խոշոր գլուխներ՝ սարսափելի որորվող փափախներով: Կիրգիզները գալիս ելին սարսափելի փափախներով, թոշկոտում ելին, ծգվում, խոտերը խըրտացնում, ատամները մնդմնգացնում, ձեռները շարժում:

Մենավոր, վայրենի մի ճիշ խանգարեց գիշերվա սև լոռությունը:

— Վայ մերիկ!

— Միշկան յերկար չվագեց:

Յետեկոց կիրգիզների ձեռները բռնեցին նրան, կիրգիզների սարսափելի ձայները գոռացին նրա ականջին.

— Մահ:

Խելագարված աչքերի առջև աճեց, խոշորացավ ահազին գնդածաղիկը, դառավ մի հսկա-

ասել ե՞ ել վոչ մի տեղ չի կարելի փախչել:
Միշկան ծունկ չոքեց հսկայի առջե և խոնարհ
լությամբ պառկեց մինչե առավոտ:

Դա մահը չեր:

Մահը ման եր գալիս վագոնների մեջ, վա-
գոնների կտուրներին, ցեխոտ արխերի մեջ, ուր
թափված եյին սովածները: Մահը վրա հասավ
այն զինվորին ու աղջկան, վորոնք առաջ ընկան
գնացին, գտավ նրանց փոքրիկ կայարանում,
ուր խմբվել եյին նրանք, իսկ Միշկայի գրպա-
նում այդ ժամանակ մի կտոր հաց կար և հա-
զար ոռւբի փող, վոր մնացել եր ծախված պի-
ջակից:

Յերբ առավոտյան արեն սկսեց տաքացնել՝
գիշերվա վախն անցավ գնաց, մնաց միայն ծեր
մարդու թուլությունը և սաստիկ գլխացավը:
Աչքերն անկյանք ելին նայում, վոչ մի բանի
մասին չեր մտածում նա: Հիշեց մորը, բայց և
իսկուն այդ միտքը մարեց: Կարծես այդ ամե-
նը կատարվում եր ծանը, անհասկանալի յերա-
զում: Հենց այն ե՞ ուզում եր պառկել, կամա-
ցուկ լաց լինել ոտար, անմարդ հողի վրա, բայց
մարմինը դարձյալ լցվեց յեռանդով, հոնքերը
կիտվեցին, բոցավառվեց համառ կամքը:
— Կգնամ:

Պարզ գծագրվում եյին հեռավոր լեռները,
հեռագրասյունները և փայլուն, խաղացկուն ոել-
սերի յերկու ուղին: Միշկան մտիկ տվեց յեր-
կու կողմը, և սիրտը տագնապով լցվեց:

— Ո՞ւր գնա:

— Վարտեղ ե Տաշքենդը:

Թե այս կողմը գնա, կարող ե պատահել՝
այնտեղ չե:

Իսկ թե այն կողմը գնա, կարող ե պատա-
հել՝ այնտեղ չե:

Ռելսերը վառվում, պսպղում են առավո-
տյան արկից, նրանց վրայով քայլում ե լայն,
անսահման տարածության, հեռավոր, կապույտ
լեռների ծանը յերկյուղը:

Բայց լաց լինել չի կարելի:

Ո՞վ պիտի տեսնի Միշկայի արցունքները,
յերբ շուրջը մի հատ մարդ չկա:

Ո՞վ կոգնի Միշկային, յեթե ամբողջ որը
կանգնած մնա միենույն տեղում:

Նա մի քսան քայլ արեց դեպի մի կողմ ու
կանգ առավ:

— Կմոլորվեմ:

Գնաց մի քսան քայլ մյուս կողմը ու կըր-
կին կանգ առավ:

— Զպիտի կարենամ դուրս գալ եստեղից:

Մալրն ել յերեկի հիմի մտածում ե, թե վորդին գնում ե հացի կամ վաղուց մեռել ե: Գուցե հենց ինքն ե մեռել, Յաշկան ու Ֆեղկան ել վաղուց չքացել են: Խորը մտածության մեջ, գունատ շրթունքները պիհնդ սեղմած՝ կանգնել եր Միշկան, ու միանգամից միտը բերեց իր ամբողջ կյանքը և այն առաջին որը, վոր ինքը տանից դուրս յեկավ: Միթե հիմի պիտի վերջանագնա: Մտիկ տվեց փայլուն ոելսերին և զարմանքից մնաց քարացած: յերեկ գնացքը դեպի այս զառիվերն եր գնում: ասել ե՝ պետք ե գնալ դեպի այդ զառիվերը, այս կողմը:

Միշկան պնդացըեց իր զինվորական գոտիկը, վրա քաշեց հայրական հնամաշ գդակը, ձեռքով շոշափեց գրպանի դամակն ու համարձակ քայլեց դեպի կապույտ, հեռավոր լեռները:

Լայն են տափաստանի տարածությունները: Նրանց մեջ սարսափում ե փոքրիկ կետի պես լողացող մարդը, թախծում ե նաև տափաստանի արծիվը՝ նստելով իշխանների հին գերեզմանների վրա... Տափաստաններում չկա վոչ մարդ, վոչ մարդկային ձայն: Գնդածաղիկներ, թփուտներ, խոր ճեղքերով կարտված մերկ աղուտներ և մեկ ել ուղտի ցանցառ աղբ: Յերեմի պատահում ե վագոնի պատուհանից նետած

թղթի մի պատառ, վոր սպիտակին ե տալիս իբրև մի վորբացած, լքված, չոր խոտի արմատի մոտ կուչ յեկած հյուր:

Ահա հուզված ուրախությամբ մտիկ ե տալիս Միշկային հեռավոր, անհայտ գյուղից, հեռավոր, անհայտ շենից բերած ու այստեղ գցած մի գյուղացու տրեխ: Միշկան հառաչում ե, միտըն ե բերում Սերյոժկային ու Տրաֆիմին, Յաշկային ու Ֆեղկային, մորը, լապատինցի գյուղիներին, կապատինի գետակը և նորից հաղացիներին, կապատինի գետակը և նորից համառորեն շարժում ե գունատ շրթունքները: Յեթե հիմի կիրգիզները հարձակվեն վրան՝ նրանց կասի:

— Ինչու յեք սպանում ինձ: Առեք իմ դանակը, վոկը, գդակը, շալվարը, շապիկը և հազար ոսուբլին, մենակ մի սպանեք:

Տափաստանի տարածության վրայով հոսում ե արեից ճնշված ողը: Յերբեմն հոսում ե ինչպես ծով, յերբեմն ինչպես ահազին գետ, յերբեմն փոքրիկ առվակի պես: Մրատես, լարված աչքին յերեսում են հեռավոր ուրվականներ, վոր նման են ծառի, մարդու, ծղոտե կտուրներով լողացող գյուղերի, ինչպես կապատինում. մի ըոպեյից հետո տեսնում ես՝ վոչ ծառ կա, վոչ մարդ, վոչ ել խաբուսիկ, հալվող գյուղը:

Միշկան լարում ե վերջին ուժերը, համրում
և հեռագրասյուները և համառ մտածում ե.

— Միշկան, ասենք ենքան ել շատ
հարուստ չես:

Արդեն յերկու հարյուր սյուն համարեց,
անցավ յերրորդ հարյուրին: Համառորեն ձգտելով
կյանքին, վոր նրան քաշում.տանում եր շպար-
ների վրայով իրը և անհանդստացած փոքրիկ ճիճ-
վի, Միշկայի վոտներն ուժ էյին առնում, և նա
մինչև անգամ թոշկոտում եր. փորձեց թեթև
վաղել: Յերբ հիշեց Տրաֆիմին, վոր ընկավ
գնացըը, վիրավորանքի դառն զգացումն ավելի
ծակեց նրա միրտը: Հիմա նա մենակ ե, նրան
լքեցին, չխղճացին, և նա հույսը պիտի գնի մի-
այն իր վրա: Թող այդպես մտածեն, թե նա մե-
ռավ, թող գնան վագոնով, յեթե կան ալդ տե-
սակ մարդիկ, վոր թողնում են իրենց ընկերնե-
րին. միւնուն ե՝ նա գնում ե, և վոչ վոք նրան
ձեռ չի տալիս, վորովհետև նա աղքատ ե, և դա
հավանորեն ամենքն ել միանգամից տեսնում են:
Նա անցավ յերկու հարյուր սյուն, մի յերկու
հարյուր սյուն ել կանց կենա, և այնքան պիտի
գնա, մինչև մեռնի: Իսկ յեթե պիտի մեռնի,
ել ճարն ինչ: Ասել ե, թե մեղպեսների բախտն
ել այդ ե. պետք ե համբերել...

Զառիվայրի գլխից հեռու հովտում յերեաց
մի փոքրիկ կայարան: Կայարանից մի գնացք
շարժվեց դեպի այս կողմը, և շոգեմեքենայի
ծուխը սև սյան պես դուրս թռավ ծխանից:

— Այ թե վճրտեղ ե, հա:

Իսկ յերբ հավասարվեց գնացքին, կանգնե-
լով փոսի լանջին՝ հալրական հնամաշ գդակով
բարեկեց գյուղացիներին, փալող աչքերով ճամ-
պու դրեց հացով բեռնավորված վերջին պա-
տըշգամբը, հիշեց իր տոպլրակները, վոր գողա-
ցան իրենից, և նորից փոքրիկ քաղելով, գնդա-
կի նման գլորվեց. գնաց փալուն, խաղացկուն
ուելսերի վրայով:

— Հիմի ել չեմ վախում:

Նրա հանդեալ յերեք գգգված շներ յեկան:
Շուրջը մարդ չկար: Միշկան կանգ առավ, շնե-
րըն ել կանգ առան, նրանցից մինը պառկեց
ուելսերի մեջ: Միշկան խեղճացավ և վախենա-
լով, վոր շները կարող են նրան զգել, և կսեց
աստծուն աղոթել, հիշեց աղոթքները, բայց բո-
լոր աղոթքները խառնեց. իսկ շները չեյին հե-
ռանում: Այն ժամանակ Միշկան վախելով պտուտ
տվեց, կրացավ, աշխատեց հասակով ավելի փո-
քը յերևալ, վոր շներն իրան չտեսնեն, բայց
քը յերևալ, վոր շներն իրան չտեսնեն, բայց

կան կանգ առավ, շունն ել կանգ առավ: Հիշեց
արջի և յերկու յերեխաների պատմությունը
անտառում, վոր յեթե մարդ մեռած ձևանա՝
արջը ձեռ չի տա: Գուցե շներն ել ձեռ չեն տա՝
յեթե սուտ-մեռուկ անի: Միշկան նստեց մերկ
աղուտի վրա, վոտները զգուշ մեկնեց, գլուխը
քիչ վերև պահեց և սկսեց սուր, լարված աշ-
քերով դիտել շներին: Միշկայի ահից շներն
աճեցին, մեծացան, դառան յերկար, սև բրդով,
յերկար, դնջրտացող ատամներով շներ և հան-
կարծ անհետացան: Հետո ոդը բարձրացան յե-
րեք սև ամպի նման, վազ տվին Միշկայի
գլխի վրայով և հեռուն-հեռուն հաջել սկսեցին:
Միշկայի գլուխը խոնարհվեց գետնի վրա, կար-
ծես պառկեց փափուկ բարձին, աչքերը փակ-
վեցին: Նա յերկար ու խորը քնեց, յերազում
յերեք շուն տեսավ, բայց դրանք բոլորովին
կիրգիզի շներ չելին, այլ իրենց, Լապատինի
շներ, և ինըը Միշկան ել պառկել եր վոչ թե
մերկ աղուտի վրա հեռու տափաստանում, այլ
տանը, Լապատինում, Լապատինի գետակի ափին:
Շները լիզում եյին նրա ձեռները, պառկում
եյին մեջքին, պոչերը շարժում: Նրանցից մինը
մարդկային ձայնով հարցրեց:

— Դու արդեն վերադարձել ես Տաշքենդից:

Միշկան լավ մտիկ տվեց շանը և տեսավ,
վոր իր մոտ ձի՛ յե կանգնած: Սա չոքեց իր
առջեւ և ասում ե մարդկային ձայնով.

— Նստիր վրաս, քեզ տեղ կհասցնեմ:

Միշկան նստեց նրա վրա ու քշեց: Հանկարծ
ձին ծառացավ, տրտինգ տվեց յետեկի վոտնե-
րով, Միշկային զցեց տակն ու սմբակով խփեց
ուղիղ ճակատին:

Մի մարդ ել Միշկայի վոտներին դիպչելով՝
ասաց.

— Վեր կաց, այ տղա, հո չես մեռել:

Զորս կողմը վոչ շուն կար, վոչ մարդ, միայն
կայարանի փոքրիկ կրակն եր, վոր թալկացած նրա
դեմքին եր նայում: Միշկան զարթնեց, շոշափեց
գրպանի դանակը, հազար ոռորին, վեր ցատկեց,
թափ տվեց իրան ու վազեց: Կայարանը փոքր
եր, անբնակ, ոելսերի արանքին թափված եյին
փոշու մեջ տրորած ձեերուկի կճեպներ, գեն
զցած վակրներ: Մի մարդ եր յեկել այստեղ,
մի մարդ անցել եր այստեղով, և միայն մնացել
եյին խառնխտորած ոջախները, աղըը, փոշին և
մթին, անձայն լոռությունը: Մոտից յերկու կիր-
դիզ անցան ձիով, մտիկ տվին Միշկային: Միշ-
կան ել նրանց մտիկ տվեց ու գետնից վերցրեց
յերկու վոսկը: Յերրորդ կիրգիզը գիրկը բացած

ուղիղ յեկավ Միշկայի վրա։ Միշկան յետ-յետ
գնաց դեպի կայարանի դռները, կիրդիզը գնաց
նրա յետեից։ Միշկայի վոաները դողացին, գլու-
խը խառնվեց։ Սխմեց գրպանի դանակը, հազար
ոռուրին – իր վերջին ուրախությունը – և մտավ
կայարանի դռնով ներս։ Տեսավ յետեի պատի
յերկրորդ դռւուը, թեժեւ հրեց, դուրս թռավ յե-
աեի հաշտը, քայլեց փոքրիկ պարտեզի մոտով…
Միրտը թրթում եր, վոտները ծալվում, իսկ
կայարանում մեկը բարձր ձայնով գոռում եր, և
չեր կարելի վոչ մի բառ հասկանալ։ Միշկան ա-
ռաջ յերբեք չեր վախում, հիմի հանկարծ խեղ-
ճացավ և գլուխը կախեց՝ չիմանալով ինչ անի։
Աստված չանի, յեթե նրան սպանեն կամ վերջին
շապիկը հանեն, վոչ վոք չի պաշտպանի, գոռա
յեւ, վոչ վոք չի լսի… Միքիչ հեաց հանգստա-
ցավ, զգուշ առաջ անցավ։ Անցկացավ կայարա-
նի շենքերի մոտով, դուրս յեկավ կայարանի
յետեր, կանդ առավ փոքրիկ բուդկայի մոտ։

Բուդկայի մեջ մարդ չկար, նա անպատւ-
հան եր, կտուրի թիթեղը պոկոտած, վառարանը
շուռ տված, հատակի տախտակները հանած։ Կոտ-
ըած պատուհանից դուրս թռավ մի գիշերային
թռչուն – Միշկայի վոաները ծալվեցին։ Յերբ մի
փոքր հանգստացավ, վախվելով մտավ անբնակ,
վախեցնող բուդկան։

Գիշերը դանդաղ եր անցնում։
Քամի վեր կացավ, սկսեց պոկել կարան
թիթեղների մնացորդը, աղմկել, ծեծել պատերը,
շան ձայնով վոռնալ։ Հետո ամպը վորոտաց։
Փայլատակեց բուդկան, կարծես ամբողջովին
վառվեց։ Կոտրատված կայծակը խփեց սուր,
չուծ մկրատի պես, և կոտրած ապակիներից
կրկին ներս լցվեց սև վոռնացող գիշերը։

Սկսվեց տարափը։

Միշկան նստել եր անկյունում, ձեռները
թեքերի մեջ դրած, դողում եր, կուչ գալիս, և
նրա առաջվա հասարակ, առանց յերկուողի կյանքը
հիմա թվում եր իրենից կարված, ընդմիշտ կո-
րած։ Հիմի վերտեղ ե նա, Ավելի լավատինին
ե մոտ թե Տաշքենդին։ Յեվ չի յել կարողանում
հասկանալ, թե ավելի շուռ վորտեղ կհասնի։ Գու-
ցե և իսկի յել չի հասնի, ճամպան կկորցնի, ու-
ժից կընկնի, կմնա այս տափաստանում։

Շոգեմեքենայի սուր սուրոցը կտրեց Միշ-
կայի խոռվանուց մտքերի թելը, և նա վոտքի
կանգնեց, դուրս թռավ բուդկայից թաց, խշըսող
խոտերի վրա, անձրեկի, քամու, վորոտի հարված-
ների տակ, և փայլատակող կայծակից կուրա-
նալով՝ յեկավ փոքրիկ կայարանը. այնտեղ, թա-
փանցելով խավարը՝ վառվում եյին շոգեմեքե-
նայի աչքերը։

Վայր ընկնելով, լպրծուն գետնի վրա, տրեխ-
ներով այս ու այն կողմ սահելով, սալթաքելով
շպաների վրա, չմտածելով անձրենի ու քամու
մասին, վոր նրան բոթում ելին այս ու այն կողմ՝
Միջկան վազում եր Տաշքենդ գնացող գնացքի
կողմը։ Իսկ այդ գնացքն անպայման Տաշքենդ
ե գնում, վորովհետև լապտերները նայում են
այն կողմը։ Յեվ յեթե Միջկան հիմի եեթ չհե-
ռանա այստեղից, կկորչի այստեղերքում և մա-
հի ձեռից չի պրծնի...

Շոգեմեքենայի մոտ մարդիկ ելին խլրտում
և մուրճերով թխթխացնում։

Միջկան նրա յետելում պտուտ յեկավ և փակ
դռները ձեռներով ճանկուելով վազեց վագոն-
ների մոտով։ Հիմա ավելի վախեցավ, վոր նրան
չեն թողնի նստելու և կրկին գնաց շոգեմեքե-
նայի մոտ։

Մի մարդ մթան միջին գոռաց։

— Մի ընկնի վոտի տակ։

Մի յերկու քայլ յետ գնաց ու զլխարկը
հանեց։

Անձրել թափվում եր, քամին աղմկում, իսկ
Միջկան մուրացկանի պես կանգնել եր շոգեմե-
քենալի մոտ՝ հայրական հնամաշ գդակը ձեռին
բռնած։ Յերբ մոտեցավ մեքենավարը վառած

խծուծը ձեռին, և բոսորագույն լույսը ճարճատե-
լով անձրեկի տակ՝ ընկավ Միջկալի դեմքին՝ նրան
հայտնաբերելով խավարի միջից՝ Միջկան բարձր
ասաց։

— Քեռի ջան, ի սեր Քրիստոսի, խղճա ինձ։
Մեքենավարը չպատասխանեց։
Յեվ Միջկան դարձալ կանգնած մնաց։

Անձրել թափվում եր, քամին աղմկում,
մուրճերով թխթխացնում ելին անիմերը, իսկ
նա զլուխը բաց, ցրախց ու հուսահատությունից
դողդողալով՝ կուչ եր յեկել շոգեմեքենայի սան-
դուխի մոտ։

Մեքենավարը նորից յեկավ վառած խծուծը
ձեռին, և Միջկան կրկին բռնեց նրա ձեռը։

— Քեռի, ախր յես եստեղ մեռնում եմ։
Մեքենավարը կանգ առավ։
— Դու ով ես։

Միջկան ինքն ել չի իմանում թե ով ե ինքը.
մի սոված տղա յե բուզուլուկի գավառից։ Տաշ-
քենդ եր գնում հացի, բայց ընկերները թողին
իրան գնացին, և հիմի վոչ վոք չի թողնում իրան
վագոն նստելու։ Զի կարելի արդյոք, վոր մի
կերպ տեղավորվի նրա մոտ։ Նա միքիչ ել կվար-
ձատրի, յեթե պետք ե. մի դանակ ունի և հա-
զար ոուրի փող։



— Սպասիր, — ասաց մեքենավարը. — հիմի կոնդուկտորը կգա, մի նրան խնդրելը կարգին:

Միշկան ծունկ չոքեց, ձեռները պարզեց առաջ և հուսահատ ձայնով, իր ցավի ու կսկծի ձայնով տանջալի կերպով բացականչեց.

— Քեռիք, ընկեր, ի սեր Քրիստոսի, նստեցրու, յես՝ կորչում եմ եստեղ...

Մեքենավարը չպատասխանեց:

Սա յերկար ժամանակ սող եր տալիս անիվների տակ, թիվթիվկացնում եր մուրճերով, հեռո հեռացավ գնաց կայարան:

Անձրկը թափվում եր, քամին աղմկում, իսկ Միշկան կանգնել եր շոգեմեքենայի անկվի մոտ, տանջելով իրան անվճռականությամբ, և հանկարծ, զոչ վոքի չհարցնելով՝ բարձրացավ շոգեմեքենայի վրա. Միքիչ մեջքը տաքացրեց շոգեմեքենայի «խողովակի» մոտ, կուրծքը դեմ արեց նրան. Միքիչ տաքացրեց կուրծքը, նորից մեջքը դարձրեց նրան:

Լուսաբացին անձրել կտրվեց:

Չորս կողմը լուս եր, մշուշապատ, մեռած:

Գունատ լուսաբացի ժամին յերկացին կայարանն ու նրա յետեւ կիրգիզների լուրթերը:

Մեքենավարը յեկավ:

Տեսնելով Միշկայի կապտած յերեսը, նրա

պղտոր, տանջալից աչքերը՝ վոչ-բարկացած ձայնով հարցը եց.

— Ճամպա յես ընկնում, ընկեր:

Միշկան աղաչող ձախով պատասխանեց,

— Քեռի ջան, ինձ եստեղից դուրս մի անի:
Վողջ գիշերը սառեցի...

— Ախր մեր ես գնում, խելքի տոպրակ,
կկորչես, եւ:

Թաղցը ե, յերբ մարդ խոսում ե, համարձակությունն ել ավելանում: Միշկան պատմեց,
թե վորտեղից ուր ե գնում, միքիչ ել պարծեցավ, թե մենակ Տաշքենդ ել վոր հասնի՝ հերիք ե, այսաեղ ազգականներ ունի: Մի յերկու անգամ նրանք գըել են Միշկայի մորը և շատ են խնդրել, վոր սա գնա նրանց մոտ: Յեթե, ասում ե, սիրտը կուզի մեզ մոտ մնալ, կարող ե վերջնականապես մնալ, իսկ յեթե չի ուզի՝ տումս կառնենք, կուզարկենք տուն:

Մեքենավարը լսում եր, ժպտում, մտիկ եր տալիս Միշկայի կապտած շրթունքներին: Հանկարծ ասաց.

— Արի հետս, գնանք:

Միշկան միանգամից չհավատաց. բայց յերբ կանգնեց շոգեմեքենայի վառարանի առջև և տեսավ անծանոթ լծակներն ու անի վսերը,

պտուտակների գլուխները, բանալիները և շոգեմեքենայի կրակե յերախը, վոր տաքությունը մարդու յերեսին եր խփում, նրա սոված գլխի մեջ անհանգիստ մտքեր ելին զարթեցնեւմ, մտածեց թե այս վթրտեղ ե ընկել:

Յեկ ահա մեքենավարը մի կոթից քաշեց. այդ ժամանակ կտրանը գուղոկը սուլեց: Մյուս կոթը շուռ տվեց թե չե, շոգեմեքենան հանկարծ շարժվեց ու առաջ լողաց. նախ՝ դանդաղ, գգուշ, հետո բաց թողեց իրան ու այնպիսի արագությամբ առաջ թռավ, վոր Միշկայի սիրտը մարեց, միտքը խառնվեց: Այս ի՞նչ ուժ ե քշում. տանում իրանց, և ով ե այս բոլորը շինել:

Զառիվերը բարձրանալիս շոգեմեքենան առվելի գանդաղ եր գնում, հետո բոլոր թափով չափ եր ընկնում, իսկ մեքենավարը սև շապիկը հագին՝ մտիկ եր տալիս պատուհանից և ծխամորճ եր ծխում: Մի ուրիշ մարդ ել փայտ եր գցում շոգեմեքենայի կրակե կոկորդը և սուտ ձեռը գցելով Միշկային՝ դուռում եր մեքենավարին.

— Ընկեր կանդըատյե, արի սրան մեջը գցենք փայտի տեղակ:

— Գցի, — ծիծաղում եր կանդըատյեր, — առվելի տաք կլինի...

Միշկան մեծ հարդանքով մտիկ եր տալիս
այս նոր մարդկանց վրա, տեսնում եր, թե ինչ-
պես են նրանք հանաք անում իր հետ, և այդ
հանաքներից, շոգեմեքենայի տաքությունից նա
թեթևանում եր, ուրախանում: Իսկ յերբ ընկեր
կանդրատյեր շուռ տվեց փոքրիկ ծորակը, այն-
տեղից յեռ ջուրը լցրեց թեյամանը, ինքը խմեց
ու Միշկային ել տվեց թիթեղե գավաթը, Միշ-
կան այս սիրուց հուզված՝ սրտադին ասաց:

— Վազուց ե վոր յես տաք ջուր չեմ խմել:
Կանդրատյեր մի կտոր ել հաց կտրեց:
— Ուզնում ես:

Վոչ, այստեղ բանը հացի կտորը չեր:

Միշկան չկշտացավ, նրա համար քիչ եր
քարթու հացի կեղեր, և հացը չեր վոր ջերմա-
ցրեց նրան իր ուրախությամբ, այլ բարի փա-
ղաքանքը, բարի ժպիտը ընկեր կանդրատյերի
գեմքին: Կարծես նա նստել եր իրենց տանը,
տաք վառարանի զլխին, — հաճախ նիրհում եր,
մոռացության մեջ ընկնում, քնկատ շոշափում
եր գրպանի դանակը և հանգիստ, ուրախ մտա-
ծում:

— Ի՞նչ լավ մարդիկ են:

Յերբ սկսեցին մոտենալ մեծ կայարանին՝
կանդրատյեն ասաց.

— Լսիր, Միշտալա, դու հիմի այստեղ վեր
կդաս. շոգեմեքենան պիտի գնա դեպո՝ նորոգ-
վելու: Մի լավ կնորոգենք, վոր հիմարություն-
ներ չանի ու ելի ճամպա կընկնենք Տաղքենդ:
Հիմի շատ չմնաց եր:

Միշկան զուխը կախեց:

— Ինչի վախեցար:

— Ո՞վ ե իմանում, մարդիկ մի տեսակ չեն:
Մեկը նստեցնում ե, մյուսը դուրս ե անում...

Կանդրատյեր ձեռքը դիպցրեց նըա ուսին:

— Մի վախի, Միշտալա, ինձ հետ կզնաս.
մենակ կայարանից հեռու չգնաս: Հենց վոր շո-
գեմեքենան գեպովից դուրս կգա, յես յերկու
անգամ այ այս սուլիչով կսուլեմ դու վազի ինձ
մոտ: Իմացար: Բան ե՝ տեսար վոր յես շոգեմե-
քենացի մոտ չեմ, սպասիր...

— Լավ, քեռի, յես եղպես ել կանեմ:

— Տեսար:

— Յես ել եղ ժամանակ կայարանում մտիկ
կտամ, թե մեր գյուղացիներից կան: Դուք պա-
պիրոս ծխում եք:

— Ինչու յես հարցնում:

— Զեղ համար պապիրոս առնեմ:

Կանդրատյեր ժպտաց:

— Յեթե դու ինձ համար պապիրոս առնես,
յես քեզ չեմ նստեցնի շոգեմեքենան:

Կալարանում Միշկան քնքշորեն մտիկ տվեց
նրա յերեսին, ակամա ցած թռավ շոգեմեքենա-
լից, նստեց վագոնների յետեր, տրեխները հա-
նեց, կապիչները քանդեց, դեն զցեց մաշված
տրեխները և զուլաները կապիչներով կապած՝
զցեց ուստին և բորիկ, զդակն ականջներին քա-
շած զնաց շուկա: Շատ փող չեր ուզում տալ
հացի, և Միշկան զանազան վաճառուհիների մոտ
հարցնում եր գները, ինչպես վոր գլուղացին
ձի յե գնում: Ամեն տեղ գները միևնույնն ելին,
շատ եր ուզում ուտել, մանավանդ յերբ տեսավ
բոքոնները. և ահա վերջին անգամ նայելով պա-
հած հազարանոցին՝ գնեց մի մեծ կտոր կուշտ
ուտելու հաց: Կեսը կերավ, ծանրացավ, փքվեց
ու հոգնած մտածեց.

— Հերիք ե, մնացածն ել վաղը:

Կողքից պատգարակով մի գլուղացու տարան:

Միշկան մտիկ տվեց մուգ խարայաշ մորու-
քին, կապուտ շալվարին, մերկ, սեացած կրունկ-
ներին, ուրիշի ցամս իր մեջն առավ ու տիրեց
մեռածի վրա.

— Ելի ինչքան չլինի՝ յես բախտավոր մարդ
եմ. այ նա մեռել ե, իսկ յես կամաց-կամաց
ճամպա յեմ գնում...

Կալարանի յետեր նստած ելին գլուղացի-

ներ, կնանիք, ծերեր, աղջիկներ—մի ամբողջ
սոված նախիր:

Բուդկայի մոտ կանզնած եր սլաքավարը՝
պղնձե դուդուկը ձեռին: Դուդուկը սրբած եր,
փալուն, իսկ սլաքավարը խոշոր մորուքով ու
աչքերով, բարի մարդ եր: Միշկան մոտ գնաց
նրան ու չիմանալով թե ինչ անի՝ հարցը եց.

— Ընկեր, դանակ ունեմ, կառնես:

— Ինչիս ե պետք:

— Ո՞վ ե իմանում, գուցե պետք դա:

— Ապա մի ցույց տուր:

Նախքան դանակը տալը Միշկան գետնից
մի հաստ տաշեղ վերցը եց:

— Ապա մի կտրի՝ տես վոնց ե ածելու պես
բոնում:

Սլաքավարը փորձեց, տեսավ վոր դանակը
սուր եր:

— Չես գողացել:

Միշկան վիրավորվեց. վմեց թե, դա իր սե-
փական դանակն ե, հանգուցյալ հայրն ե բերել
զինվորությունից, ե յեթե կարիքը չլիներ՝ նա
իսկի յել չեր ծախի դանակը, վորովհետեւ այս-
պիսի դանակներ չի կարելի գտնել, մանավանդ
հիմա: Մինչև անգամ նրանց Բուզուկումն ել
հավանորեն ալդպիսի դանակ չկա...

— Վար Բուզուլուկում:

— Եղանակիք քաղաք կա, Սամարայից փոքր:
Յերկար խոսում ելին այսպէս:

Միշկան դանակը չծախեց, և ասենք այն-
քան ել կարիք չկար հիմա: Մի յերկու տեղ ձեռ
եր մեկնում վողորմություն ուզելու, հանում եր
հայրական հնամաշ գդակը և հանգիստ, բոլորո-
վին վոչ-աղաչող ձայնով, ասում եր.

— Մի կտոր հաց տաք:

Նրա վրա գոռում ելին.

— Զհանգամվի՛, դնա, լակնա, զահլա տա-
րաք շների պես:

Առաջ Միշկան կզայրանար, բայց հիմա նա
խնդրում եր վոչ թե նրա համար, վոր սովոծ եր,
վոչ թե՝ վոր աղիքները դատարկ ելին, — այլ մի-
քեչ լրբություն եր անում. զրավանում մի փոք-
րեկ հացի պատառ կար, և քանի վոր հետը հաց
կար՝ չեր վախենում: Միայն մի վագոնում մի-
անգամից յերկու մարդ բարեսիրտ դառան.
Նրանցից մինը, վոր գիրք եր կարդում, գեն ցցեց
խնձորի միջուկը մեծ ճիճով, իսկ մուսը, վոր
կապույտ ակնոց ուներ, թափեց մի փեշ ձմե-
րուկի կճեպ: Միշկան ուրախացավ, ուտում եր
ձմերուկի կճեպները, հետո փքվեց ու ծանր փո-
րով ծուլ-ծուլ որորվելով՝ բուլորովին չնկատեց,

թե ինչպես իրիկնադեմ յեղավ. պառկեցին յե-
րեկոյան ստվերները, վառվեցին լապտերները:

Ազիտպունկտի մոտ գարմոն ելին ածում:

Հավաքված ամբոխի միջից դուրս պրծավ
մի յերիտասարդ գյուղացի, ճարպկորեն շրջան
բաց արեց, գդակը գետնով տվեց, մորդվայի
տրեխը հազած վոսը խփեց գետնին և ուրախ
բացականչեց գարմոնիստին:

— Շողին ավելացրնե:

Հետո գոռաց հավաքներին.

— Ճամպա տվեք, ընկերներ-տղերք, հիմի
պիտի դարդի հողին հանեմ: Նիկալայ, մի թափ
տանք մեղ մահից առաջ, մին ե՝ շուտով պիտի
մեռնենք...

Գարմոնը կամարինսկի ածեց:

Գյուղացին նի հատ ծափ տվեց, կուցավ,
կզեց, վուները զցեց, քամակով շուռ յեկավ
կրնկի վրա, թաթերի վրա պտտվեց, ախ արեց,
ոխ արեց, հանկարծ նստեց, զլուխսկոնծի տվեց,
թերը կախ զցած գնաց առաջ:

— Այ գու շուն շան վորդի, կամարինցի
մուժիկ, ինչո՞ւ, ինչո՞ւ, նստել ես սուսիկ-փու-
սիկ:

Գարմոնն ածում եր, ուրախ գյուղացին
պարում, իսկ այդ միջոցին ճամպի վրավից մի

չալսջու խված կնիկ եյին բերում, վոր արյուն-
լվա յեր յեղել։ Կամ անզգուշաբար եր ընկել
մարդունք անող գնացքի անիմսերի տակ, կտմ
ինքն եր ընկել, այդ մասին վոչ վոքի չհարցնե-
լով։ Միշկան միայն գլուխը տեսավ՝ յերկար
բաց թողած մազերով, մորթված վոչխարի գլխի
նման կախված, և ծանը յերկյուղը, դառն, վհշ-
մանկական խղճահարությունը ճնշում եր Միշ-
կայի սիրտը։ Գիշերվա լապտերների նվազ լու-
սով նա ման եր գալիս նոր մտքերով ընկճված,
արորված և ամենուրեք տեսնում եր ձանձրա-
րալի սև ցավը։ Լնամնիք լաց եյին լինում, յերե-
խաները նվում, գլուղացիք գազազված հայհո-
յում, իսկ շոգեմեքենան դեռ չեր գալիս գեպո-
յից։

Հոգնեց Միշկան, քունը տանում եր, բայց
չպառկեց ընելու, քնեցիր թե չե՛ ելի կմնաս
այստեղ։

Գիշերն ել անցավ, առավոտն ել նայեց
պղտոր աչքերով, բայց շոգեմեքենան չեր գա-
լիս։ Ըսկեր կանդրատյան ել չեր յերնում։

— Միթե խարեց։

— Միթե մենակ գնաց։

Յերկար շարանով կանգնել եյին յերեկվա
վագոնները, վագոններում դեռ քնած եյին,

մարդ չկար, վոր հարցներ, իսկ Միշկան չեր
կարող գլխի ընկնել. վագոնները սրմնք են, թե
սրմնք ուրիշ են՝ հետո յեկած։ Զայրացավ ու
սարսափեց։ Գալիս եր գալիս, գնում եր գնում—
ու ելի գժբախտություն։ Հավանորեն յերբեք ել
տեղ չի համնի և մի վորեե տեղ անպատճառ
կկորչի, քանի վոր ամեն բանի մեջ մի սխալ
անում եւ։ Ախր պետք եր, վոր հենց այստեղ
մնար սպասեր, իսկ ինքը գնում ե գարմոն լսե-
լու։

— Ե՞ն, հիմար, հիմար։

28

Կայարանի յետեւմ յերկինքը լայնորեն
շառագունեց, և Միշկայի վիշտը ճնշեց նրա
ցաված սիրտը՝ ինչպես մահից առաջ։ Նա ու-
զում եր բարկությունից լաց լինել, մազերը
փետել, բայց այդ ժամանակ դեպոյից, խողո-
վակը փնչացնելով, ուրախ-ուրախ դուրս յեկավ
հանգստացած շոգեմեքենան, բարձր ճշաց առա-
վույան լոռության մեջ, և Միշկայի սիրտը ծտի
նման թռչկոտաց։

— Գալիս ե, ջանիկա, գալիս ե։

Միշկան մի կողմ փախավ, վոր անիմսերը
չջախչախեն իրան, իսկ շոգեմեքենայի բուղկա-
չի պատուհանից կանդրատյան ե մտիկ տա-

լիս՝ յերեկված ծխամորձն ատամների մեջ։ Միշկային տեսավ թե չե՛ ինչ վոր բան բղավեց, բայց Միշկան չլսեց ու շպալների վրայով վազ տվեց շոգեմեքենայի յետից։ Շոգեմեքենան յետ դարձավ, սկսեց յետ-յետ գնալ դեպի վագոնները, թևկացրեց նրանց ու կանգ առավ։ Ընկեր կանդրատայել դարձալ բղավեց Միշկային, վոր քիթը խպշտում եր։

— Ե՞ն, Միշայլա, գնում ենք, հը։

Միշկայի մարսինը ձեռաց քոր յեկավ, և խոսք չեր գտնում թե խոսի։ Գդակը դրստեց, ծոծրակը քորեց ու բարձր պատասխանեց։

— Յես ամբողջ գիշեր չեմ քնել։

Ընկեր կանդրատայել ծիծաղեց։

— Գիտեմ, քաջ տղա յես։ Դե բարձրացիր, թե չե մենակ կզնամ։

Այդ միջոցին Միշկան ամենայերջանիկ մարդըն եր աշխարհիս յերեսին։

Ինչպես մյուս կայարաններում, հիմա յել գյուղացիք, կնանիք վազվում ելին, լաց լինում, խնդրում ելին նստեցնել, իսկ նա հանգիստ նստել եր անկյունում հատակի վրա, և այն ել վոչ հասարակ մի տեղ, այլ շոգեմեքենայի վրա, և այն ել հո նստած չեր, այլ ամբողջ ժամանակ ժպտում եր։ Միտը բերեց Սերյոժկային և Տրափիմին ու մտածեց։

— Այ հիմի արժեր վոր նրանց մի յերեսայի։ Յերբ ընկեր կանդրատայել շուռ տվեց լծակը—կայարանի շինությունները կամացուկ յետ գնացին։ Միշկան չհամբերեց, դուրս յեկավ անկյունից և ինքնաբավական, ուրախ ու հպարտ՝ դուրս նայեց նեղ դանից։ տեսավ յերկու գյուղացիների, վոր վազում ելին շոգեմեքենայի կողքից, տեսավ մի կնիկ՝ յերեխան ձեռին, մի կարմիր բանակավին՝ հրացանով, լսեց լացը…

Ավելի արագ յետ վազեցին լապտերները, ծառերը, անանիվ հին վագոնները, յերեխայի բալունները վագոնների վրա, վայտեր, սալեր, տախտակներ—և հանկարծ Միշկայի յերեսին նայեց ուրախ, կապուտակ տափաստանը։ Զգվեցին կանաչ շամբերով լճերը, փայլուն արխերը, դարձյալ լայնարձակ տափաստան, դարձյալ կանաչ շամբեր, սալեր, բարեր, ավագ։ Մտիկ եր տալիս Միշկան ազան, վայլող աչքերով և իր մտքում շնորհակալ եր լինում կանդրատայելից, վորը տանում ե նրան վորդու պես։ Իսկ ընկեր կանդրատայել, Միշկայի վազուն աչքերից իմանալով նրա ուրախությունը՝ դիտմամբ հարցնում եր։

— Հը, Միշայլա, վոնց ե մեր բանը։

— Վնաս չունի։

— Շուտով Տաշքենդ կհասնենք:
— Ելի քանի որ մնաց:
— Ել վոչ մի տեղ կանդ առնել չի լինի.—
մի որ ու գիշեր ել վոր անցնի՝ առավոտն այնտեղ
ենք...

Միշկան ուզում եր մի լավ խոսք ասել, վոր
ընկեր կանգրատյեն իմանա, թե վորքան Միշ-
կան շնորհակալ և նրանից, բայց այդպիսի մի
խոսք Միշկայի լեզվում չկար, միայն աչքերն
եյլն փայլում սիրով ու խանդակաթ կերպով։
Հացից մնացած կտորը կերավ, չկշտացավ, բայց
և խկույն մտածեց.

— Լավ, կհամբերեմ։

Իրիկնապահին ընկեր կանգրատյել հարցը-
րեց.

— Թունդ ես ուզում ուտե՞լ, Միխայլա։

Միշկան քաշվեց, չուզեց այս լավ մարդուն
նեղություն տալ և հաստատ ձայնով ասաց.

— Ինքներդ կերեք, ինձ համար հո պատ-
րաստություն չելիք տեսնելու։

Բայց ընկեր կանգրատյել ելի.

— Վնաս չունի, Միխայլա, յոլա կդնանք։
Ահա առ այս հացի կեղել, ատամներդ վրան
կոտրիր միքիչ, ջանել են ատամներդ։ Թե ատա-
մըդ չի բռնում՝ ջրում թաթախիր...

կանդրատյել չտեսավ Միշկայի սիրալիր,
խանդակաթ աչքերը, միայն լսեց դոդոջուն
ձայնը։

— Հատուկ շնորհակալ եմ, քեռի ջան։
Զոր հացի կեղել կակղեց տաք ջրի մեջ,
շունդես կակղեց և Միշկայի սիրաը մեծ, ալեկո-
ծող հուզմունքից։ Նա կերավ հացի կեղել, խմեց
տաք ջուրը և չծախած ծալովի դանակը մեկնելով
կանդրատյելին՝ գողդոջուն ձայնով ասաց.

— Ես մի ընծան ել դուք ընդունեցեք ին-
ձանից ձեր եսքան լավության համար։

Կանդրատյելի ձայնն ել դողաց։

— Ինչիս ե պետք։

— Ինձ տանում եք, խղճում եք։

— Շնորհակալ եմ, Միշկա, զի՞ր զրպանդ։

Բայց Միշկան այնքան ջերմագին եր աղա-
չում, այնքան քնքուշ եյլն փալում նրա աչքե-
րը, վոր մերժել չեր կառելի։ Կանդրատյել
առավ գյուղական մեծ, կոթը ծակ դանակը,
թոկով կախեց մի մատին, փաթաթեց, ժպտաց
և գլուխը դուրս հանելով պատուհանից՝ բարի,
ծիծաղկոտ աչքերով յերկար նայում եր մանի-
շակագույն, յերեկոյան տափաստանին։

Այդ զիշեր Միշկան լավ, հանդիսատ ընեց,
Յերազում տեսավ մորը, Յաշկային, Փեղկային,

Հապատինի գյուղացիներին ու կնանոց։ Մայրը
նրա համար բաղնիսը տաքացրեց, իբրև թե մո-
տեցավ մահճակալին ու կամացուկ ասաց։

— Քնել ես, Միշա, Գնա, վորդի, ճամպից
հետո մի լողացի՛, այ քեզ համար մի շապիկ եմ
կարել...

Միշկան լողացավ, մինչև անգամ ավելով
քրտնացրեց իրան—մարմինը շատ եր հոգնել
յերկար ճամպից, —բաղնիսից տուն յեկավ մեծա-
ցած, անճանաչելի։ Նստեց սեղանի մոտ, պատ-
վավոր տեղը, ու սկսեց պատմել ընկեր Կան-
դրատյեի մասին։

— Իսկ մեր Սերյոժկան ինչ յեղավ, —հար-
ցըրեց Սերյոժկայի մայրը. —դու վորտեղ թողիր
նրան։

Միշկան հանդիսաւ պատասխանեց.

— Սերյոժկան չդիմացավ. յես նրան տեղա-
փորեցի հիվանդանոցում, ենտեղ ել նա մեռավ։

Սերյոժկայի մայրն սկսեց լաց լինել, սկսեց
մեղադրել Միշկալին, իսկ լապատինցի գյուղա-
ցիք ասում եյին։

— Եստեղ Միշկալան մեղք չունի. ամեն
մարդ ել կարող ե մեռնել...

Միշկան ուզում ե գուրս գնալ, վոր թողած
տնտեսությունը մի աչք ածի, բայց այդ ժա-

մանակ խրձիթը մտավ ինքը ընկեր Կանդրատյել
և բղավեց նրա ականջին։

— Վեր կաց, վեր կաց։

Միշկան վեր թռավ ու առանց հասկանալու
տեսավ իր առջև կանդրատյելին և լսեց նրա
ուրախ, քաջալերիչ ձայնը.

— Հը՛, Միշկա, տեսնում ես։

— Եղ ինչ ե։

— Հիմի Տաշքենդ կմտնենք։

Միշկայի սիրաը բաբախեց, կտրվեց, կար-
ծես ներս ընկավ, աչքերը կուրացան։ Առաջ
բան չտեսավ, միայն մի կանաչ բիծ եր վաղում
շոգեմեքենայի մոտով, իսկ յերբ շոգեմեքենան
սկսեց դանդաղ գնալ, յերկացին Տաշքենդի այ-
գիները, կավե պատերը, բարակ, բարձր ծառերը։

— Եյ ջան, Տաշքենդ ջան։

Այդիների մոտով գնում եյին տարորինակ
արաբաներ յերկու ահազին ակներով։ Կուշտ
ձիերը՝ պոչներին և բաշերին ժապավեն կապած՝
թափ եյին տալիս իրենց բոժոժները։ Զիերի
վրա նստել եյին տարորինակ, չտեսնված մարդիկ,
զլուխներին չալմա վաթաթած, իսկ ահազին
ակներից բարձրանում եր սպիտակ, թանձր փոշի,
ծածկում եր այզիները, ծառերը, և նրա միջից
վոչինչ չեր կարելի տեսնել։

Հետո փոքրիկ եշերի վրա հեծած գնում եյին
գիրուկ սևամորուք գյուղացիներ՝ նույնպես գլուխ-
ներին չալմա փաթաթած։ Այդ գյուղացիք նստել
են փոքրիկ եշերի վրա, բարակ ճիպոտներով
ըզում են նրանց վզին, իսկ եշերը, մեծ ականջ-
ները շարժելով, առանց սանձի գնում են, պո-
չերն ել հորթի պոչի նման են։

Շոգեմեքենան մի փոքր կանգ առավ։ Միշ-
կան գլուխը դուրս հանեց, տեսավ զամբյուղները
գլխներին դրած մանրավաճառներին, լսեց ձայ-
ներ, վոր ոռուսի ձայներ չեյին։ Զամբյուղների
ու փայտե տաշտերի միջից մտիկ եյին տալիս
զանազան խնձորներ և ելի ինչ-վոր պտուղներ
սև ու կանաչ վողկույզներով և լայն, սպիտակ
լավաշներ։

— Այ թե վոնց են ապլում, — մտածեց Միշ-
կան, լիգելով չոր, սոված շրթունքները։

Կանդրատյել հարցրեց.

— Ե՞ն, Միխաղլա, հիմի ուրմիս ես։

Միշկան ինքն ել լավ չի իմանում. մեկ
կարծես ուրախ ե, մեկ կարծես սիրտը ճնշվում
ե — ախր շատ-շատ բան կա շուրջը։

Կանդրատյել հանգստացրեց.

— Վոչինչ, Միխաղլա, հիմի ել չես կորչի։

— Իսկ ոռուներ կմն եստեղ։

— Ամեն տեսակ մարդ կա: Կզնաս քաղաք՝
կտեսնես: Դու գիտե՞ս՝ վորտեղ են ապլում քո
աղքականները։

Միշկան ամաչեց, կարմրեց, շուռ յեկավ մի
կողմ։

— Գիտեմ։

— Իսկ նրանք քո ի՞նչն են։

— Միքիչ աղքական են։

Կանդրատյել տանջում եր իր հարցերով,
իսկ Միշկան տխուր մտածում եր։

— Քեզ խաբում եմ։ Միթե չես տեսնում։

Քաղաքում վերջին անգամ նա մտիկ տվեց
ընկեր կանդրատյեին, խոնարհ մնաս բարկ ա-
սաց, հանկարծ աչքերը ճպեց, վորոնցից անըս-
պասելի կերպով արցունքներ գլորվեցին, ու սըր-
տամգին ասաց։

— Ե՞ն, քեռի ջան, շատ, շատ շնորհակալ եմ։

— Վոչինչ, Միշա, չարժե, լավ սարքվիր։

— Իսկ դուք ելի կգաք եստեղ։

— Յես միշտ եստեղ եմ գալիս…

— Ե՞ն, մնաք բարնվ առ այժմ, ով ե իմա-
նում չենք տեսնվի։

— Գնաս բարով, Միշա, բարի ճանապարհ։

Միշան ցած թռավ շոգեմեքենայից, գուլ-
պաները զցեց ուսին, մտիկ տվեց չորս կողմը,
մի անգամ ել հրաժեշտի բարև արավ կանդրա-



տյեին և աչքը զցելով արեից տաքացած բարե
տների փոշեթաթախ բարձր ծառերին՝ ինչ-
պես մի փոքրիկ կաթիլ լցվեց մարդկանց բաղ-
մության մեջ։ Զեռը դրեց գրպանը, տեսավ դա-
նակն այնտեղ եւ Ոհո։

— Սա ինչ բան եւ։

Առաջ Միշկան զարմացավ, ուզում եր վա-
զել դեպի շոգեմեքենան, բայց հետո թեթևացած
սրտով մտածեց։

— Միթե եղ տեսակ մարդը կվերցնի դա-
նակը։

Կայարանում պառկել եյին գյուղացիք, կնա-
նիք. բոլորը մերկ, կիսամերկ, Տաշքենդի արեից
սեացած, հիվանդ, մահվան գուռն ընկած...

Մտիկ տվեց Միշկան հեռվից, ավելի մոտ
գնաց, կանգնեց, մտածեց։

— Միթե եստեղ ել հացի նեղություն են
քաշում։

Դուրս յեկավ կայարանից։
Վախիսելով քայլերն ուղղեց դեպի բարձր
ծառերով զարդարած կանաչ փողոցը, հետո կանդ
առավ։

Գլուխը վեր բարձրացրեց, մտիկ տվեց վոս-
տոտ ծառին, լավ տնաղեց սեամորուք սարթին,
վոր փոքրիկ իշով գնում եր, և հանկարծ վախե-
ցավ. դեմից մեկը գալիս եր ու չես իմանում

մարդ ե, մարդ չե՞. ձեռները, վոտները, գլուխը
յերեռւմ են, բայց առջենից յերեսի տեղակ սև վա-
րագույր ե: Միշկան մի կողմ քաշվեց այդ չտես-
նըված տարորինակ բանից, դեմքը կնճռաեց, շըր-
թունքներն ուղցրեց և նորից նեղ, կանաչ փո-
ղոցով առաջ գնաց դեպի փոշոտ, չոր, շոդ քա-
ղաքը: Յերկար ժամանակ սկին եր տալիս հայ-
րական մեծ գդակով գլուխը, յերկար սպիտակին
եյին տալիս ուսին գցած գուլպաները: Ահա կանգ
առավ, մտիկ տվեց ցեխոտ, փոշով լցված ար-
խին, ելի առաջ գնաց, շուռ տվեց անկյունն ու
անհետացավ:

29

Ուշ աշունքին, պարզ ու տաք մի որ մի
փոքրիկ կայարանում՝ Բուզուլուկի ու Սամարա-
յի միջև՝ կանգ առավ Տաշքենդի գնացքը: Վա-
գոններից, վագոնների պատշգամբներից ցած
թռան գյուղացիք:

Գնացքը յերկար կանգ առավ:

Յերբ վագոններն անիմսերը գործ անողի
պես թխթխկացնելով շարժվեցին, գնացին, պինդ,
սառած ավազի վրա, ոելսերի կշտին սարի պես
կիտվել եյին բերած հացի տոպրակները, վորոնց
վրա նշան եր արած խաչերով, փալտիկներով և
ծուռ, անհավասար տառերով:

Յերկու տոպրակների վրա, վոր կլինելին
յերեքական փութ՝ քիմիական մատիտով գրված
եր. Միլս, Դոդոն:

Մի լիքը, յերեսն արեից այրված տղա մո-
տեցավ տոպրակներին՝ խոշոր քրքրված գդակը
գլխին, ուշադիր նայեց տոպրակի կապերին, մատ-
նահարեց տոպրակները և ինքնագոն ուղցրեց սև,
չվացված այտերը:

Բարձր պարզ յերկնքով վազեց կապուտակ
մի ամպ, մի կողքով կպավ արեին և թեթև ստվեր
գցեց:

Լիքը, յերեսն այրված տղան լայն, գեղա-
ցավարի չոեց իր փալաներով փաթաթած վոտ-
ները և լուրջ հայացքով մտիկ տվեց յերկու
տոպրակներին, վոր յերկու հանգույցով ամուր
կապած եյին, քիթը խպշտելով ներս քաշեց աշ-
նան ցուրտ ողը, հազար ու թափ տվեց զլուխը:

— Տես վճնոց ե ցրտել մեզանում: Յերեի
գիշերները սառնամանիք ե լինում...

Դա Միշկան եր:

Տաշքենդում նա յերկար ժամանակ ման եր
գալիս շուկաներում, գիշերում եր ցանկապատե-
րի տակ, վեր եր ընկնում ցեխոտ արխերի մոտ
և կարծում եր, թե կմեռնի, վորովհետեւ փորհա-
րինք եր ընկել. որերով փորլուծը տանջում եր
նրան, և աղիքները դուրս եյին թափվում գետ-

Նից հավաքած փտած խնձորներից ու դեղձերից: Բայց, այսպես թե այսպես, չմեռավ այդ ծանր որերում, համբերեց, դիմացավ և՝ վոջիլին, և ցեխին, և փորհարինքին... Դանակն ու փոկը ծախեց կերավ, սկսեց գետնից փտած խնձորներ հավաքել, ձեռ մեկնեց վողորմության, և այդ բոլորը նրան ձանձրացը եց, զզվացը եց. այդ տեսակ գործերով հացահատիկ չի կարելի տուն տանել: Իսկ Միշկային պետք է հացահատիկը, վոր ինքը ցանի, տնտեսությունը փրկի...

Մի հարուստ սարթի այդում գործի մտավ, պատահեց բուզուլուկցի գյուղացիների և նրանց հետ գնաց տափաստանն աշխատելու: Յորեն եր ծեծում, յեղեգն եր կտրում, ջուղար, յերկու տոպլրակ ցորեն վաստակեց՝ չորսական փութ, յերկուսը տվեց ճամպի ծախս, կերավ ճամպին՝ չուղենալով վողորմություն խնդրել, և գյուղացիների հետ վերադարձավ հայրենիք:

Կայարանում լապատինցիներ չկային:

Յերբ հարեան գյուղից յերկու սայլ յեկավ տոպլրակները տանելու, և գյուղացիք բեռնեցին իրենց հացը՝ Միշկան սալապաններին ստաց.

— Իմ տոպլրակներն ել վերցրեք. յես գըա վարձը կտամ մի բան:

— Ծանը կլինի, — համառեցին սայլապանները:

Միշկան ձեռները տարածեց ոդում: — Ի՞նչ ծանը բան կա եստեղ: Վեց փութե, ավելի չե: Կամաց կամաց կդնանք, շատպելու բան չունենք, դուք ել, մին ե՝ մեր գյուղի մոտով պիտի անցնեք:

Զիերը յերկու տակ եյին լինում իրենց վոսկրացած մեջքերով, անիմսերն սկսեցին յերգել ծանոթ ճոխչներով, ճռճռացին կոպիտ սայլերը, և ծանը, դեղին հացահատիկով լցված տոպլրակները հանդարտ սկսեցին լողալ դաշտի նեղլիկ ճամպով, ամայացած դաշտի թափանցիկ լուսթյան մեջ:

Միշկան գյուղացիների հետ միասին գնում եր սայլերի յետեկից, ազան նայում բլրակներին, հովիտներին, դաշտամկների բներին և մտածում եր մոր մասին:

— Տեսնես կենդանի՝ յե թե վոչ:

Ասհանգիստ աչքերը գցեց մերկ մեռած դաշտերին, հետո ափի վրա բռնելով պինդ յեղեգնը, վոր վերցրեց չցանած արտից, հոգոց հանեց.

— Հիմա մեզնում ի՞նչ արժե ձին՝ յեթե մարդ ուղենա առնել:

Տանը նրան դիմավորեց ձայները մարած խրճիթը փոքրիկ պատուհանների կանաչ ապակիներով: Բաց դարպասից յերկում եր բակի մեջ

բուսած գանգուր մանր խոտը, հոռոմսպանախը,
և հյուսված ցանկապատի մոտ վեր զցած, սհա-
ցած լծաղեղը՝ ողակը դեպի վերև:

Մայրը դուրս չեկավ դիմավորելու:

Յաշկան ու Ֆեղկան ել դուրս չվաղեցին:

Գյուղացի սայլապանները Միշկայի ցորենով
մե տոպրակները ձեռքով կրեցին բակը, դրին
պատուհանի տակի հողաթմբի վրա:

Դարձյալ վոչ վոք դուրս չեկավ ճամպորդին
դիմավորելու:

Միշկայի սիրտը բարախեց, աչքերը միջնե-
ցին:

Դուն ճաղերից դուրս յեկավ իգնատիյ պա-
պը, ձեռը դրեց ճակատին, մտիկ տվեց տոպրակ-
ներով սայլին ու թույլ ձայնով բացականչեց.

— Նպաստ ե, ի՞նչ ե՝ մեկի համար:

Միշկան սայլապաններին հացահատիկ տվեց
կրողչեք ու վազեց չորացած, յերերվող ծերու-
կի մոտ:

— Պապի, մերոնք ուր են:

Իգնատիյ պապը մարած, չհասկացող աչքե-
րը հառեց Միշկայի վրա, մորուքն առավ դողդո-
ջուն ձեռների մեջ:

— Կաց մի, կաց, դու վրտեղից ես գալիս:

Մոտեցան յերկու կնիկ, ձեռ տվին հողա-
թմբին դրած տոպրակներին, վերցրին գետնին

ընկած յերկու հատիկն ու ձայները ծոր տալով
ասացին.

— Վայ, ես ի՞նչ ե բերել:

Դատարկ, սևացած խրճթում, յերկու սրբա-
նկարների մեռած աչքերի տակին դրած մերկ
մահճակալի վրա պառկել եր հիվանդ մայրը:

Յաշկան ու Ֆեղկան մեռել եյին:

Միշկան կռացավ, նայեց հիվանդ մորը և
կամացուկ ասաց.

— Մայրիկ, վեր կաց, յեկել եմ:

Մայրը վախեցավ, ուրախացավ և շրթունք-
ները թույլ կերպով շարժեց.

— Տեր աստված, Միշկա:

— Քեզ համար հաց եմ բերել, մայրիկ,

գրպանից հանեց սպիտակ քարթու հացի
մի կտոր, մի բուռ խնձորի չիր, դրեց մոր սա-
ռը ձեռի մեջ:

— Առ, մայրիկ, կեր:

— Կենդանի յես, վորդի:

— Կենդանի յեմ, մայրիկ, մի վախենա:

Միշկան կանգնել եր մոր կշտին, սևացած,
մեծացած, անճանաչելի դառած, իսկ մայրը
չոր մատներով շոյում եր նրա այտերը:

— Բալա ջան:

Հետո Միշկան յերկար ժամանակ ման եր
գալիս ամայացած բարկում, բուսած գանգուր

խոտի մեջ։ Տեսավ ձիու չորացած աղբը, հիշեց
ձին—պետք ե ձի գնել։ Տեսավ հավի ընկալք,
վրան սևացած ծղնոտի վրա յերկու փետուր և
տխուր հառաչեց։ հարկավոր ե նորից դրստել
ամբողջ տնտեսությունը։ Զի չկա, հավ չկա...

Մի վողջ մնացած ճնճղուկ յեկավ նստեց
մարագի խարխուլ կտրանը, թռչկոտաց դրած ձողի
վրա, փշաքաղվեց, մտածմունքի մեջ ընկավ ու
աչքերը կիսափակ նայեց Միշկային։

Միշկան ել ճնճղուկին նայեց, մտածմունքի
մեջ ընկավ։ Բարձրացրեց սևացած լծաղեղը,
դրեց անկյունը, կանգնեց տոպրակների կշտին
ու հաստատուն ձայնով ասաց։

— Լավ, չարժե շատ դարդ անել։ նորից
կսարքվեմ...







ԳԻՆԸ 60 Կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0303872

12392